

Նոր Նորք վարչական շրջանի Մոլդովական փողոց 27/6 հասցեում
բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
(Լրամշակված տարբերակ)



Նախաձեռնող՝
Գարիկ Գրիգորյան

Երևան 2024

Բովանդակություն

1. Ընդհանուր տեղեկատվություն.....	5
2. Հավելվածներ.....	5
3. Գնահատման հաշվետվության կազմման իրավական հիմքերը.....	6
4. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ փորձաքննական գործընթացների վերաբերյալ.....	9
5. Գնահատման հաշվետվության մշակման հիմքերը.....	10
6. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի և շրջակա միջավայրի նկարագիրը.....	10
6.1 Ենթակա տարածքի նկարագիրը.....	10
6.2 Շրջակա միջավայրի բնութագրերը.....	19
6.2.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը.....	19
6.2.2. Սեյսմիկա և երկրաբանություն.....	22
6.2.3. Կլիմա և օդային ավազան.....	22
6.2.4. Հողային ռեսուրսներ.....	37
6.2.5. Զրային ռեսուրսներ.....	37
6.2.6. Կենսաբազմազություն.....	39
6.2.7. Պատմության և մշակութային հուշարձաններ.....	40
6.2.8. Հատուկ պահպանվող տարածքներ և բնության հուշարձաններ.....	44
6.2.9. Սոցիալ-տնտեսական հարցեր.....	45
7. Նախատեսվող գործունեության բնութագիրը, տեխնիկական- տեխնոլոգիական լուծումները շինարարության և շահագործման փուլերում.....	47
7.1 Շահագործման փուլ.....	47
7.1.1 Բնակելի համալիրի տեխնիկա-տնտեսական ցուցանիշներ են.....	47
7.2 Շինարարության փուլ.....	55
7.2.1. Ժամանակացույց.....	55
7.2.2 Շին. հրապարակ.....	57
8. Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր.....	65
8.1 Զրային ռեսուրսներ.....	65
8.2 Շինարարական նյութեր.....	66
9. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և ռիսկերը (շինարարության և շահագործման փուլ).....	67
9.1 Օդային ավազան.....	68
9.2 Հողային ռեսուրսներ.....	80
9.3 Զրային ռեսուրսներ.....	80

9.4 Կենսաբազմազանություն.....	80
9.5 Թափոններ	81
9.6 Պատմամշակութային և բնության հուշարձաններ.....	82
9.7 Աղմուկ և թրթռում.	83
9.8 Արտակարգ իրավիճակներ	84
9.9 Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն, մարդու առողջություն	85
9.10 Էներգախնայողություն և էներգաարդյունավետություն.....	85
9.11 Սոցիալական հարցեր.....	87
9.12 Լանդշաֆտ	87
9.13 Բարեկարգում և Կանաչապատում.....	87
10. Շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումները(Բնապահպանական կառավարման պլան).....	95
10.1 Օդային ավազան	95
10.2 Հողային ռեսուրսներ.....	96
10.3 Ջրային ռեսուրսներ.....	97
10.4 Կենսաբազմազանություն	98
10.5 Թափոններ.....	98
10.6 Պատմամշակութային և բնության հուշարձաններ.....	99
10.7 Աղմուկ և թրթռում	99
10.8 Արտակարգ իրավիճակներ.....	100
10.9 Մարդու առողջություն, աշխատանքի անվտանգություն.....	101
10.10 Սոցիալական հարցեր	103
10.11 Լանդշաֆտ	103
10.12. Բարեկարգում և կանաչապատում.....	103
11. Մոնիթորինգ.....	104
12.Բողոքների ընթացակարգ	105
13. Բնապահպանական կառավարման պլան	105
14.Մշտադիտարկման (մոնիթորինգի) միջոցառումներ.....	123
15. Հանրային քննարկումներ.....	128
16. Գրականություն.....	129
17. Հավելվածներ.....	130
Հավելված 1. Տարածքի սեփականության իրավունքի վկայականը.....	130
Հավելված 2.Ճարտարապետահատակագծային առաջադրանք	132

Հավելված 3. Տարածքի հատակագիծը՝ կոորդինատներով.....	134
Հավելված 4. Գազամատակարարման պայմանագիր.....	137
Հավելված 5. Էլեկտրամատակարարման տեխնիկական պայմանը	146
Հավելված 6. Քաղաքապետարանի կողմից նշանակված հանրային լսման գրություն և ավագանու համաձայնություն.....	151
Հավելված 7. Հանրային քննարկման արձանագրություն, մասնակիցների ցանկ և լուսանկարներ	153
Հավելված 8. Կանաչապատման սխեմա.....	159

1. Ընդհանուր տեղեկատվություն

Հաշվետվություն	Նոր Նորք վարչական շրջանի Մոլդովական փողոց 27/6 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցում:
Նախաձեռնող	Գարիկ Գրիգորյան
Նախաձեռնողի հասցեն	ք. Երևան, Արաբկիր, Հայրիկ Մուրադյան 42/2 շ., բն. 13
Նախատեսվող գործունեության վարչական տարածքը, փաստացի գործունեության հասցեն՝	Ք. Երևան, Նոր Նորք վարչական շրջան, Մոլդովական 27/6
Նախաձեռնողի հեռախոս, էլեկտրոնային փոստ	հեռ. 094445444, կամ 098131471, ececucasus@gmail.com

2. Հավելվածներ

Հավելված 1. Տարածքի սեփականության իրավունքի վկայականը

Հավելված 2. Ճարտարապետա-հատակագծային առաջադրանքը

Հավելված 3. Տարածքի հատակագիծը

Հավելված 4. Գազամատակարարման պայմանագիր

Հավելված 5. Էլեկտրամատակարարման պայմանագիր

Հավելված 6. Քաղաքապետարանի կողմից նշանակված հանրային լսման գրություն և
ավագանու համաձայնություն

Հավելված 7. Հանրային քննարկման արձանագրություն, մասնակիցների ցանկ

Հավելված 8. Կանաչապատման սխեմա

3. Գնահատման հաշվետվության կազմման իրավական հիմքերը

1. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենք՝ – Կարգավորում է նախատեսվող գործունեության իրականացման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Ներառում է նախատեսվող գործունեության 2 կատեգորիա՝ «Ա», «Բ»՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Համաձայն օրենքի իրականացվում է նախատեսվող գործունեության փորձաքննություն, որից հետո տրվում է եզրակացություն:

2. «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-522-Ն (ընդունված 1999 թ. և լրամշակված 2022 թ.) - կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

3. «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998 թ.) - Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններն են՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիճագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

4. «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999 թ.) - Ապահովում է բուսական տեսակների (ֆլորայի) և դրանց առաջացրած համակեցությունների (բուսականության) բազմազանության, աճելավայրերի և էկոհամակարգերի հավասարակշռվածության վրա մարդու բացասական ներգործության կանխարգելումը: Իրականացնում է բուսական աշխարհի, դրա գենոֆոնդի և ցենոֆոնդի բազմազանության, աճելավայրերի պահպանության քանակական և որակական, բուսական աշխարհի շարունակական օգտագործման և վերարտադրության գիտականորեն հիմնավորված ապահովումը, բուսական աշխարհի օգտագործման հարաբերությունների կարգավորումը, բուսական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառում օգտագործողների իրավունքների պաշտպանությունը և պարտականությունների կատարումը:

5. «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000 թ.) - Սահմանում է ՀՀ տարածքում և կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության,

վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը: Նախատեսում է գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը, կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը, կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության, կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը, կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հարաբերությունների կարգավորումը, կենդանական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառներում օգտագործողների իրավունքների պաշտպանությունն ու պարտականությունների կատարումը:

6.«ՀՀ Հողային օրենսգիրք» (2001թ.) - Սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպա-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004թ.)-սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը:

7.«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքը (2011թ.)- կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում աղբահանության և սանիտարական մաքրման հետ կապված հարաբերությունները, սահմանում է աղբահանության և սանիտարական մաքրման գործընթացի կազմակերպման սկզբունքները, աղբահանության վճարը, դրա դրույքաչափերը, վճարողների շրջանակը, նրանց իրավունքները և պարտականությունները, վճարման կարգը, պատասխանատվությունը չվճարելու, պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման կարգը աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման բնագավառներում:

8.«ՀՀ Ջրային օրենսգիրք» (2002) - Նպատակը երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների պահպանման համար իրավական հիմքերի ապահովումն է:

9.«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենք (2001թ.) - կարգավորում է ՀՀ էներգետիկայի բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները և սահմանում է դրանց կիրառման մեխանիզմները:

10.«Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008թ.)- Սահմանվում է հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության⁷ իրականացման խնդիրները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները,

ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ հողային ֆոնդում առկա բոլոր հողամասերի օգտագործման և պահպանության վրա՝ անկախ դրանց նպատակային նշանակությունից, սեփականության և (կամ) օգտագործման իրավունքի սուբյեկտներից:

11. «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998)-կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը:

12. «Քաղաքաշինության Բնագավառում Իրավախախտումների Համար պատասխանատվության մասին» ՀՀ Օրենքը (28 ապրիլի 1999 թ.) -Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության ենթարկելու իրավական հիմքերը՝ քաղաքաշինական գործունեության բոլոր փուլերում քաղաքացիների, հասարակության ու պետության շահերը պաշտպանելու, օրենսդրական ակտերի, ստանդարտների ու կանոնների պահանջների կատարումն ապահովելու նպատակով:

13. Բնության հատուկ պահպանվող արածքների մասին» ՀՀ օրենք (2006)-սահմանում է հատուկ պահպանվող տարածքներն, ինչպես նաև դրանց կառավարման ընթացակարգերը: Նախատեսում է հատուկ պահպանվող տարածքները, առանձնացնելով չորս տեսակ՝ պետական արգելոցներ, պետական պահուստավորման հողեր, ազգային պարկեր, բնական հուշարժաններ, դրանց որոշման և ղեկավարելու գործընթացները:

14. ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի «Հայաստանի հանրապետության կառավարության 2014թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 2343 - Ն որոշում:

15. ՀՀ կառավարության 29. Հունվարի 2010թ. «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» N72-Ն որոշում:

16. ՀՀ կառավարության 29. հունվարի.2010թ. ' «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» N71-Ն որոշում:

17. ՀՀ կառավարության 31.07.2014թ.' ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշում:

18. ՀՀ կառավարության 08.02.2018թ. «ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՆԱԶ ԳՈՏԻՆԵՐԻ ՉԱՓԵՐԻՆ ԵՎ ՏԵՍԱԿԱՅԻՆ ԿԱԶՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 1318-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 108- Ն որոշում:

19. ՀՀ կառավարության 8 սեպտեմբերի 2011 թվականի 08.09. 2011թ. «ՀՈՂԻ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 1622-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ 2001 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի N 286-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N1396-Ն որոշում:

20. ՀՀ կառավարության 14 օգոստոսի 2008թ. «Հայաստանի հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում:

21. ՀՀ կառավարության 15 մարտի 2007թ. «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 385-Ն որոշում:

22. ՀՀ կառավարության 12 ապրիլի 2018թ. «ՆՈՐ ԿԱՌՈՒՑՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԿԱՌՈՒՑՎՈՂ (ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՂ, ՆՈՐՈԳՎՈՂ) ՕԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԷՆԵՐԳԱՄԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N426-Ն որոշում:

4. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ փորձաքննական գործընթացների վերաբերյալ

Հայաստանում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին /Փոփոխությունները 2023թ/Օրենքի(այսուհետ՝ Օրենք) համաձայն: Գործունեությունները համաձայն Օրենքի դասակարգվում են 2 կատեգորիաների՝ Ա և Բ: Հայտում նախատեսված գործունեությունը ենթակա է փորձաքննության՝ համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի ա ենթակետի, Քաղաքաշինության բնագավառում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա են. «քաղաքաշինական գործունեության օբյեկտների կառուցում՝ 1500 քմ եւ ավելի վերգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով կամ 2000 քմ եւ ավելի ստորգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով»: Նախատեսվող գործունեությունը ներառված է Բ կատեգորիայի մեջ և շրջակա միջավայրի գնահատման և փորձաքննության է ենթակա Բ կատեգորիայի ընթացակարգով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, նախատեսել համապատասխան միջոցառումներ՝ հնարավոր բացասական ազդեցությունները նվազագույնի հասցնելուն կամ բացառելուն ուղղված: Գնահատման հաշվետվությունը կազմվել է հիմք ընդունելով նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը, նախատեսվող գործունեության տարածքի ուսումնասիրության ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը, տարածքի վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները, քարտեզները, լուսանկարները և այլ փաստաթղթեր:

5. Գնահատման հաշվետվության մշակման հիմքերը, Նախաձեռնողի անվանումը, գտնվելու վայրը և նպատակը

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Գարիկ Գրիգորյանի՝ կողմից, որի իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Արաբկիր, Հայրիկ Մուրադյան 42/2 շ., բն. 13:

Հոդատարածքը Գարիկ Գրիգորյանին պատկանում է սեփականության իրավունքով:

Նախատեսվող գործունեության իրականացվելու է Նոր Նորք վարչական շրջանի Մոլդովական փողոց 27/6 հասցեում՝ 0.34859հա հողամասում:

Գարիկ Գրիգորյանի կողմից բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման հաշվետվությունը մշակված է հիմք ընդունելով.

- ❖ բնակելի համալիրի նախագծային փաստաթուղթը,
- ❖ համալիրի տեղամասի ինժեներաերկրաբանական հետազոտությունների հաշվետվությունը,
- ❖ համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները,
- ❖ սեփականության վկայականները՝ N15122022-01-0311: Հավելված 1
- ❖ Երևանի քաղաքապետարանի կողմից տրված 04.06.2024թ. ճարտարապետահատակագծային առաջադրանքը՝ N01/50-01-315-24 :Հավելված 2

Նախատեսվող գործունեության նպատակը բազմաբնակարան բնակելի շենքի կառուցումն է՝ բնակիչների բնակարանային պահանջները բավարարելու նպատակով: Գործունեության ենթակա տարածքի հողի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման:

6. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի և շրջակա միջավայրի նկարագիրը

6.1 Ենթակա տարածքի նկարագիրը

Բազմաբնակարան բնակելի շենքի կառուցապատման ենթակա տարածքը գտնվում է Նոր Նորք վարչական շրջանի Մոլդովական փողոցի վրա:

Կից գտնվում են՝ փողոցներ, բնակելի և հասարակական շենքեր:

Համաձայն ինժեներաերկրաբանական եզրակացության՝ տեղամասը երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների տեսանկյունից պիտանի է կապիտալ շինությունների, բարենպաստ է կառուցապատման համար: Նախատեսվող համալիրի տեղամասի ինժեներաերկրաբանական պայմանների ուսումնասիրության նպատակով կատարվել են հորատման աշխատանքներ: Հորատումը իրականացվել է նմուշարկմամբ, 6 հատ հորատանցքերով, որոնցից երեքը 35 գծամետր խորության, երեքը՝ 30մ, 2-ը՝ 25մ խորություններով, ընդհանուր 175մետր ընդհանուր ծավալով: Կատարվել են գրունտների նմուշառում՝ 2 հատ և լաբորատոր հետազոտություններ: Կատարվել են նաև արխիվային¹⁰ նյութերի հավաքագրում, վերլուծություն, ընդհանրացում, դաշտային հետազոտությունների

ուսումնասիրություն, ամփոփում, եզրակացության տրամադրում:

Տարածքի մուտքն ապահովված է Մոլդովական փողոցից: Դեպի տարածք ճանապարհն ասֆալտապատ է: Տարածքում առկա են ծառեր,, անկանոն աճած բուսականություն: Տեղ-տեղ առկա է բուսահող: Մոլդովական փողոցի հարակից հատվածից առկա են թվով 6 ծառ, որոնք պահպանվելու են շինարարության ընթացքում, ծառերի արանքում գոյացած անկանոն խոտածածկը մաքրվելու է և գազոնապատվելու:



Կառուցապատման տարածքի միջնահատվածում առկա ծառերից հինգը վերատնկվելու է, իսկ մնացած չորացած ծառերը կտրվելու են:





Ընդհանուր առմամբ տարածքն անբարեկարգ է, այն իր ներկայիս տեսքով չի ինտեգրվում
գոյություն ունեցող միջավայրին:





Նախագծվող շենքի հողատարածքը երեք կողմից մոտեցում ունի՝ Մոլդովական փողոցից և Մոլդովական փողոցին միացող երկու նրբանցքներից՝ տարածքի վերին և ստորին նիշերին

հարող: Նիշերի առավելագույն տարբերությունը կազմում է 9 մետր, որի հաշիվին առկա է 2+ հարկի տարբերություն վերին և ստորին մոտեցումներում, 0 և -1 հարկերից հետո ունենալով մուտքեր, իսկ -2 հարկից ավտոկայանատեղի մուտքը համապատասխանաբար:

Կլիման ուսումնասիրվող տարածքի կլիմայական պայմանները բնութագրելիս վկայակոչել ենք ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը և քանի որ ուսումնասիրվող տարածքը գտնվում է Երևան քաղաքում, ուստի բերում ենք նրա համապատասխան կլիմայական ցուցանիշները:

Ուսումնասիրվող տարածքին բնորոշ է շոգ և չոր ամառը՝ հուլիսի միջին ամսական ջերմաստիճանը $25,8^{\circ}\text{C}$, միջին տարեկան հարաբերական խոնավությունը 61% (ժ.15-ին), լեռնահովտային քամիները 2-3 մ/վրկ արագությամբ և ցուրտ անհողմային ձմեռը՝ հունվարի միջին ամսական ջերմաստիճանը $-3,6^{\circ}\text{C}$ է, հարաբերական խոնավությունը 77% (ժ.15-ին), թույլ քամիները 2-3մ/վրկ արագությամբ:

Երկրաֆիզիկական ուսումնասիրություն Ուսումնասիրվող տեղամասերի ինժեներաերկրաբանական պայմանների պարզաբանման համար կատարվել են հետևյալ աշխատանքները. Շերտ թիվ-1 թափվածքային գրունտներ, սպիտակահողեր, խճի, մանրախճի մեծաքարերի հետ: Շերտի համատարած հորատման հզորությունը 2.0 մետր է, այն համատարած է: Շերտ թիվ-2 բազալտներ՝ մոխրագույն, թույլ ծակոտկեն, տեղ-տեղ խոռոչավոր, բեկորային անջատումներով, կարծր: Բազալտի շերտի բացված հզորությունը տատանվում է 20.5-22.7-ից մետր, շերտը համատարած է՝ չորրորդական ժամանակաշրջանի հրաբխային հոսքեր: Շերտ թիվ-3 հրաբխային խարամ, ավազային, ավազախճային կազմի. հանդիպում է նաև փոշային կազմով, շլակավորված բազալտի խճի և մանրախճի հետ: Շերտը չունի համատարած տարածում: Չորրորդական ժամանակաշրջանի, հրաբխային առաջացումներ: Բացված հզորությունը տատանվում է 1,6-3,7մ: Շերտ թիվ-4 կավավազ սպիտակահողային ցեմենտացած, բաց դեղնավուն, սպիտակավուն երանգով, կարբոնատացած, փոշենման ավազային նյութի խառնուրդով, մանրախճի, հազվադեպ խճի պարունակությամբ մինչև 15%, գրունտը տեղ-տեղ ցեմենտացած է, լցանյութը՝ սակավախոնավ, տարածումը սահմանափակ է, հզորությունը՝ 0.5-4.0 մետր: Չորրորդականի էյուվիա-պրոյուվիալ առաջացումներ: Շերտ թիվ-5 խճա-մանրախճային գրունտ հրաբխային ապարներից, կավավազային լցանյութով մինչև 45%, հազվադեպ բազալտների բեկորներով, գրունտը միջին խտության է, լցանյութը սակավախոնավ, տարածումը համատարած է, հզորությունը՝ 1.2-4.0 մետր: Չորրորդականի հասակի էյուվիա-պրոյուվիալ առաջացումներ: Շերտ թիվ-6 մեծաբեկորային բազալտ, անդեզիտա-բազալտ, ծակոտկեն, ճեղքավորված, վերին մասում մասամբ քայքայված խճի աստիճանի, միջբեկորային հրաբխային խարամի ավազի լցանյութով մինչև 10%, հրաբխային խարամի բներով, ոսպնյակներով, ենթաշերտերով, միջին ամրության, արմատական տեղադրմամբ, տարածումը համատարած է, բացահայտված հզորությունը՝ 12.0 մետր: Նեոգեն-Չորրորդականի հասակի հրաբխային առաջացումներ: Շերտ թիվ-8 խարամ հրաբխային խճա-մանրախճային կազմի, մասամբ մանրախճային և ավազային կազմի, տեղ-տեղ կավավազա-ավազային լցանյութով մինչև 10%, խարամացած, շեղաքարացած բազալտների կտորներով, գրունտը միջին

խտության է, լցանյութը՝ սակավախոնավ, տարածումը համատարած է, հզորությունը՝ 0.5-2.0 մետր Նեոգեն-Չորրորդականի հասակի հրաբխային առաջացումներ:

Տարածքի իրադրության սխեման

Նկար 1.

Իրադրության Հատակագիծ Մ 1:5000

Տեխնիկատնտեսական տվյալներ

Շինարարական մակերեսը	-26800.0 մ2
Վերգետնյա կառ. մակերեսը	-18495.0 մ2
Ստորգետնյա կառ. մակերեսը	-8305.0 մ2
Բնակելի մակերեսը	-14766.4 մ2
Բնակարանների ընդհանուր քանակը	-148 բն.
Հասարակական (օֆիսային) մակերեսը	-955.44մ2
Առևտրային մակերես	-1365.3մ2
Ստորգետնյա կայանատեղիներ (77.0%)	-114 մեքենա



Գծագրերի անվանացանկ

01. Իրադրության հատակագիծ Մ 1:5000 և հողամասի իրավիճակային և կառուցապատման սխեմաներ
02. Գլխավոր հատակագիծ Մ 1:500
03. Բարեկարգման և կանաչապատման հատակագիծ Մ 1:320
04. Հրդեհ մեքենաների սպասարկման սխեմա Մ 1:320
05. Հատակագիծ -16.50 և -13.50 նիշերի վրա Մ 1:320
06. Հատակագիծ -10.50 նիշի վրա Մ 1:320
07. Հատակագիծ -7.20 նիշի վրա
08. Հատակագիծ -3.60 նիշի վրա
09. Հատակագիծ +0.00 նիշի վրա
10. Հատակագիծ +3.60; +6.90; +10.20 և +13.50 նիշերի վրա
11. Հատակագիծ +16.80; +20.10; +23.40 և +26.70 նիշերի վրա
12. Հատակագիծ +30.00; +33.30 -; +63.00; 66.75 և +69.60 նիշերի վրա
13. Կտրվածք "1-1" Մ 1:320
14. Ճակատ "17-1" Մ 1:320
15. Ճակատ "Ը-Ա" Մ 1:320
16. Ճակատ "Ա-Ը" Մ 1:320



Շենքի դիրքն հարակից բնակելի շենքերի հանդեպ ընտրված է միջանկյալ, ինչի հաշվին հարակից բնակելի շենքերի լույսի ծածկելու հավանականությունը հասցված է զրոյականի:



Գործունեության տարածքից 448մ հեռավորության վրա գտնվում է Հայկ Նահապետի արձանը, 665 և 505մ վրա համապատասխանաբար՝ Ավանի գերեզմանոցը և ՀՀ ՊՆ:

Գործունեության տարածքին մոտ ջրային ռեսուրսներ չկան: Գործունեության տարածքը գտնվում է մոտակա շինություններից՝ 10մ և 15մ, ճանապարհից՝ 10մ:

Տարածքին կից առկա են ինժեներական ենթակառուցվածքները՝ ջրամատակարարման, ջրահեռացման, գազամատակարարման, էլեկտրամատակարարման համակարգերը:

6.2 Շրջակա միջավայրի բնութագրերը

6.2.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը

Երևան քաղաքը գտնվում է ծովի մակարդակից 830-ից մինչև 1550 մետր բարձրությունների վրա՝ Արաքսի Հրազդան վտակի ափին, Արարատյան դաշտի հյուսիս-արևելքում՝ հյուսիսային լայնության $40^{\circ} 04' - 40^{\circ} 14'$ և արևելյան երկայնության $44^{\circ} 23' - 44^{\circ} 37'$ միջև, երիտասարդ հրաբխային ու նստվածքային ապարներից կազմված 7-8-բալանոց սեյսմիկ

և չորրորդ ժամային գոտիներում: Առավելագույն երկարությունը հյուսիսից հարավ 19,7 կմ է, արևմուտքից արևելք՝ 19,1 կմ: Կլիմային բնորոշ են տաք, չոր ամառներ և համեմատաբար կարճ, բայց ցուրտ ձմեռներ: Երևանը գտնվում է բարեխառն գոտու ցամաքային հատվածում, շրջապատված լեռներով ու լեռնաշղթաներով:


Նկար 2.



Երևան քաղաքի տարածքը գտնվում է ծովի մակարդակից 830մ-ից (հարավ-արևմտյան մաս) 1550.0մ (հյուսիս-արևելյան մաս) բարձրության վրա: Կենտրոնի բարձրությունը մոտ 1000մ է: Երևան քաղաքի տարածքի գետային համակարգը ներառում է Հրազդան գետը, որը հոսում է հյուսիս-արևելքից, Գետառ գետը, որը հոսում է հյուսիս-արևելքից և միանում Հրազդան գետին Էրեբունի համայնքում, Ջրվեժ և Շորադքյուր գետերը, որոնք ցած են հոսում արևելյան լեռնաշղթայից և միանում Գետառ գետին: Երևան քաղաքի տարածքը բաժանվում է ռելիեֆի չորս տեսակների, որոնք են՝

- 1) Եղվարդի հրաբխային սարահարթը, Կոտայքի հրաբխային սարահարթը և Ջրվեժ-Նորք
- 2) հրաբխային սարահարթը ,
- 2) Շորադքյուր-Նուբարաշեն թեք հարթությունը և Էրեբունի լեռնաշղթան,
- 3) Հրազդան, Գետառ և Շորադքյուր գետերի գետային հարթավայրը
- 4) Մշակված հողերը (նկար 3):

Նկար 3.



Երևան քաղաքի տարածքում ամենահին երկրաբանական միավորը Ստորին-Միջին Օլիգոցեն ժամանակաշրջանի Շորաղբյուրի շերտախումբն է (P3 1 sh), իսկ ամենաերիտասարդը Հոլոցեն ժամանակաշրջանի (վերջին ժամանակաշրջանը) ողողահունի նստվածքներն են:

Ֆիզիկաաշխարհագրական պայմանները. Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտի հյուսիս-արևելյան մասում, չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Երևան քաղաքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից

մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆացիաներով:

Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հողմնահարված, էրոզիոն-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական և ժամանակակից առաջացումներ:

6.2.2. Սեյսմիկա և երկրաբանություն

Երևան քաղաքի տարածքում ամենահին երկրաբանական միավորը Ստորին-Միջին Օլիգոցեն ժամանակաշրջանի Շորադքյուրի շերտախումբն է (P3 1 sh), իսկ ամենաերիտասարդը Հոլոցեն ժամանակաշրջանի (վերջին ժամանակաշրջանը) ողողահունի նստվածքներն են:

Շրջանի սեյսմիկ պայմանները. Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ-20.04.2020թ.-ի, տեղազննվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների $A_{max}=0.4g$ արագացմամբ, 9 և ավելի բալլ սեյսմիկությամբ:

6.2.3. Կլիմա և օդային ավազան

Երևանը գտնվում է բարեխառն գոտում՝ ցամաքային կլիմային բնորոշ հատկանիշերով: Դրա շնորհիվ այստեղ պարզ արտահայտվում են տարվա բոլոր չորս եղանակները: Ձմեռները ցուրտ են, երբեմն՝ ձնառատ: Ամռանը հիմնականում շոգ է, չորային: Տեղումների հիմնական մասը լինում է գարնանը, մասամբ՝ աշնանը: Կլիման կիսաչոր է: Տեղումների սակավությանը զուգահեռ՝ շատ են արևային ժամերը, երկինքը պարզ է՝ հիմնականում ամբողջ տարին: Մառախլապատ կամ ամպամած եղանակը, հատկապես ամռանը հազվադեպ երևույթ է:

Տեղումների բնութագիրը ըստ Երևան-«Արաբկիր» օդերևութաբանական կայանի տվյալների բերված է աղյուսակ 2.3-ում: Արաբկիրի կայանը գտնվում է 888 մ ծ.մ. բարձրության վրա: Կլիման բնութագրվում է տեղումների ցածր քանակով: Տեղումների միջին տարեկան նորման չի գերազանցում 316 մմ: Շրջակայքում գոլորշիացման էներգետիկական հնարավորությունները զգալիորեն գերազանցում են տեղումների քանակը, այդ պատճառով կլիման չոր է:

Ձյան ծածկույթի առավելագույն դեկադային բարձրությունը կազմում է 58 սմ, ճնշումը – 70 կգ/մ²: Գրունտի սառչման առավելագույն խորությունը կազմում է 60 սմ: Ձյան ծածկույթով օրերի միջին քանակը կազմում է 48: Հաստատուն ծածկույթը գոյանում է ոչ ամեն տարի:

Քամու նվազագույն միջին արագությունը հուլիս ամսին, որի կրկնվողությունը հասնում է 16 տոկոս, կազմում է 7.2 մ/վրկ: Քամու բացարձակ առավելագույն արագությունը 20 տարի մեկ անգամ հասնում է 24 մ/վրկ: Նորմատիվ հողմաբեռնվածքը կազմում է 45 կգ/մ²:

Քամու ակտիվությունը ռեգիոնում ըստ Երևան-՝Արաբկիր՝ մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 4-ում:

Քամու բնութագիրը

Աղյուսակ 4.

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիությունը, % Միջին արագությունը, մ/վ								ըստ ուղղությունների		Անդրորի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ- արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս- արևմտյան								
		1	2	3	4	5	6	7	8	9	10						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16		
Երևան «Արաբկիր»	հունվ	13	29	8	7	14	20	6	3	45	0.9	ՀվԱրմ	1.7	ՀսԱրլ	1.9		
	ապ	1.9	1.9	1.6	1.7	1.8	1.5	1.8	1.9								
	ապրի	15	29	6	8	12	17	9	4	15	2.1						

	Լ	3.1	2.6	2.3	2.2	2.5	2.4	2.5	2.5						
	հոլիս	28	32	3	3	8	16	7	3	13	3.4				
		6.0	4.8	1.7	1.7	1.7	1.7	2.0	2.6						
	հոկտ եմբեր	17	37	6	5	10	16	6	3	19	1.8				
		2.9	2.5	2.0	1.9	1.7	1.9	1.9	2.0						

Աղյուսակ 5. Ուժեղ քամիներով օրերի քանակը

Բնակավայրի անվանումը	Ամսական միջին արժեքները, օր												Տարեկան
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Երևան «Արաբկիր»	0.2	0.3	0.8	1.4	1.9	3.8	8.5	7.7	2.0	0.4	0.4	0.1	28

Աղյուսակ 6. Տարվա տաք ժամանակահատվածի կլիմայական հարաչափեր (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Օդի ջերմաստիճանը, °C														
	օրական տատանումը							միջին օրական առավելագույն արժեքը, որը հնարավոր է 1 անգամ «ո» տարիների ընթացքում							
	առավելագույն օրական տատանումը, որը հնարավոր է 1 անգամ «ո» տարիների ընթացքում						ամենա տաք ամսվա միջին օրա կան տատա նումը								ամենա տաք ամսվա առավելա գույն օրական տատա նումը
	2	5	10	20	50	100				2	5	10	20	50	100
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	
Երևան «Արաբկիր»	18	19	19	20	21	21	13.2	20.6	30	31	32	33	33	34	

Աղյուսակ 7. Տարվա ցուրտ ժամանակահատվածի կլիմայական հարաչափեր (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Օդի ջերմաստիճանը, °C														
	ամենացուրտ օրվա			ամենացուրտ հնգօրյակի			ամենա ցուրտ ժամա նակա շրջանի միջինը	ամենա ցուրտ ամիս ների միջինը	տարբեր ապահովվածությամբ (%) նվազագույն ջերմաստիճանը						Դիտար կված նվազա գույնը
									ապահովվածություն, %						
	ապահովվածություն			ապահովվածություն					1	2	5	10	20	50	
	0.98	0.95	0.92	0.98	0.95	0.92									
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Երևան «Արաբկիր»	-17	-16	-15	-15	-14	-14	-0.9	-3.7	-23	-22	-20	-18	-16	-13	-21

Աղյուսակ 8. Օդի միջին ջերմաստիճան

Բնակավայրի	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C	Միջ	ին	Բա	ցա	Բա	ցա	ըն
------------	-------------------------------------	-----	----	----	----	----	----	----

անվանումը	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Երևան «Արաբկիր»	-2.7	-0.2	5.8	11.9	16.6	21.3	24.9	24.7	20.4	13.7	6.6	0.2	11.9	-20.6	41.9

Աղյուսակ 9. Օդի միջին առավելագույն (մ. ա.) և միջին նվազագույն (մ. ն.) ջերմաստիճանը

Բնակավայրի անվանումը	մ. ա. / մ. ն.	ըստ ամիսների, °C												Տարեկան
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Երևան «Արաբկիր»	մ. ա.	1.0	4.3	11.1	17.9	23.1	28.5	32.4	32.1	27.5	19.9	11.5	3.7	17.7
	մ. ն.	-5.4	-3.3	1.8	7.3	11.4	15.4	19.1	18.8	14.4	8.9	3.0	-2.3	7.4

Աղյուսակ 10. Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %																
	ըստ ամիսների												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Երևան «Արաբկիր»	77	70	60	57	57	52	50	50	51	60	68	77	61	77	68	50	37

Աղյուսակ 11. Մթնոլորտային տեղումները


Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը <u>միջին ամսական</u> մմ օրական առավելագույն		Տեղումների քանակը նոյեմբեր-	Տեղումների քանակը ապրիլ-
	ըստ ամիսների	Տ		

	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		մարտ ամիսներին, մմ	հոկտեմբեր ամիսներին, մմ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Երևան «Արաբկիր»	28	31	38	52	54	27	18	8	13	29	29	27	354	153	201
	25	28	44	34	47	47	34	22	47	34	48	26	48		

Աղյուսակ 12. **Ձյան ծածկույթ** (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Ձյան ծածկույթը			
	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ
1	2	3	4	5
Երևան «Արաբկիր»	50	53	152	-

Նկար 5.



Օդային ավազան

Հայաստանի հանրապետության տարածքում օդային ավազանի աղտոտվածությունը վերահսկվում է Հայաստանի Հանրապետության Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:


ՀՀ և միջազգային պահանջների համաձայն անշարժ դիտակայաններում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, փոշու, փոշու մեջ որոշվող մետաղների և գետնամերձ օդոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շարժական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ:


Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006 թ. օգոստոսի 2-ի N160-Ն որոշման:

Մթնոլորտն աղտոտող նյութերի պարունակություններն որոշելու համար 2023 թվականի 2-րդ եռամսյակում մթնոլորտային օդի դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Չարենցավան, Կապան և Քաջարան քաղաքներում: Ընդհանուր առմամբ վերը թվարկված բնակավայրերում գործում է 15 անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայան և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետ: Քաղաքների մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների բաշխվածության քարտեզները հասանելի են www.meteomonitoring.am ինտերնետային կայքում:


2023 թվականի 2-րդ եռամսյակում մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան գերազանցել է Ալավերդի, Հրազդան, Գյումրի և Արարատ քաղաքներում: Փոշով աղտոտվածությունը կարող է առաջանալ արդյունաբերական գործընթացների, տրանսպորտային միջոցների, ճանապարհային փոշու, շինարարության, գյուղատնտեսական և այլ գործողությունների հետևանքով:

Երևան քաղաքում կատարվում են փոշու*, ծծմբի երկօքսիդի**, ազոտի երկօքսիդի, և գետնամերձ օդոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 45 շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան: 2023 թվականի 2-րդ եռամսյակում Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:






Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները




Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները




Երևան քաղաքի մթնոլորտային օդում գետնամերձ օդոնի միջին ամսական կոնցենտրացիաների վափավորությունները

Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի SO₂ միջին
ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը



Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին
ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը



Սույն հաշվետվությունում նախատեսված միջոցառումների արդյունքում՝ օդային

ավագանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի սպասվում:

6.2.4. Հողային ռեսուրսներ

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում, չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով լանդշաֆտային գոտում: Երևանի հողերը տիպիկ գորշ, կիսաանապատային են՝ սննդանյութերով աղքատ, հարուստ կարբոնատներով: Այս տիպի հողերը սակավազոր են, ունեն կավավազային կազմ, աչքի են ընկնում կմախքային զանգվածների մեծ պարունակությամբ և քարքարոտությամբ, որի հետևանքով էլ բույսերի աճն ու զարգացումը ընթանում է զգալի դժվարություններով:

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- Բաց շագանակագույն, խճաքարային, տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած,
- Կիսաանապատային գորշ, խճաքարային տեղ-տեղ կարբոնատային,
- Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

Հողային ծածկույթի համար վտանգավոր աղտոտիչներ են համարվում ծանր մետաղները, որոնք առաջանում են գործարանների, գյուղատնտեսության, տրանսպորտի գործունեությունից, դրանց գործունեության հետևանքով առաջացող արդյունաբերական և կենդանային թափոններից: Հողերի որակի գնահատումներն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2010թ. հունվարի 25-ի «ՀՀ հիմնական աղտոտիչները և դրանց ազդեցությունը մարդու առողջության վրա» NO1-Ն հրամանի Հավելված 3-ին համապատասխան:

Համաձայն «Հիդրոգերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2021թ. 4-րդ եռամսյակում կատարված ուսումնասիրությունների արդյունքների՝ Երևան քաղաքում ուսումնասիրված հողերում վանադիումի պարունակությունը գերազանցում է համապատասխան ՍԹԿ-ն՝ 1.4-1.8 անգամ, քրոմի պարունակությունը՝ 13.8-28.8 անգամ, նիկելի պարունակությունը՝ 18.3-25.3 անգամ, պղնձի պարունակությունը՝ 19.0-34.7 անգամ, ցինկի պարունակությունը՝ 4.6-38.7 անգամ, արսենի պարունակությունը՝ 5.5-11.0 անգամ և կապարի պարունակությունը՝ 1.3-12.2 անգամ:

6.2.5. Զրային ռեսուրսներ

Երևանի կենտրոնով հոսում է Հրազդան գետը՝ իր սելավաբեր և տարանցիկ Գետառ, Զրվեժ, Ողջաբերդ, Մուշաղբյուր վտակներով: Ներկայումս դրանք ներառվել են արհեստական հունների մեջ և սելավներից ու հեղեղումներից վնասագերծվել: Կառուցվել են Երևանյան լճի, «Հաղթանակ» զբոսայգու և այլ ջրամբարներ: Երևանում կան նաև այլ արհեստական կամ բնական լճակներ, որոնց մի մասը սնվում է

ստորգետնյա արտեզյան ջրերից:

Հայաստանի հանրապետության տարածքում ջրային ռեսուրսների աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Ջրի որակի գնահատումը կատարվում է համաձայն՝ ՀՀ կառավարության 2011թ. հոկտեմբերի 27-ի N75-Ն որոշման:

Գառնու և Ապարանի բարձունքներից խողովակներով Երևան հասնող ջուրը օգտագործվում է ոռոգման, ինչպես նաև՝ քաղաքի շատրվանների, արհեստական լճակների համար:

Երևանի ներկայիս 33 ջրավազաններից առավել կարևոր նշանակություն ունի Երևանյան լիճը, որը շահագործման է հանձնվել 1967 թվականին: Ավելի քան 40 տարվա ընթացքում լիճը հիմնովին չի մաքրվել (ներկայում քաղաքապետարանի կողմից սկսվել են մաքրման աշխատանքները): Գետերով այնտեղ է լցվում հսկայական քանակությամբ կենցաղային և շինարարական աղբ, բերվածքների և թափոնների կուտակման հետևանքով ջրամբարի օգտագործման ծավալը գրեթե կիսով չափ նվազել է:

2023 թվականի 4-րդ եռամսյակում Հրազդանի ԶԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 20 դիտակետում:

Համաձայն ՀՀ շրջակա միջավայրի մոնիթորինգի տեղեկագրի՝ 2023թ. 4-րդ եռամսյակում գետերում կատարված դիտարկումների արդյունքների՝ Հրազդան գետի ջրի որակը Քաղսի գյուղից ներքև, Արգել գյուղից ներքև, Արզնի ՀԷԿ-ից վերև հատվածներում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Երևանից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում ջրի որակը հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Գետառ գետի ջրի որակը գետաբերանում հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Նկար 5



Հիդրոերկրաբանական տեսակետից տարածաշրջանում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա՝ 30-50մ խորության փորվածքների պարագայում գրունտային ջրեր չեն հայտնաբերվել, քանի որ հրաբխածին կազմավորումները բնութագրվում են ճեղքավորվածությամբ: Համայնքի տարածքի հիդրոերկրաբանական պայմանները հիմնականում բարենպաստ են:

6.2.6. Կենսաբազմազություն

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում, չոր տափաստանային կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում, շրջապատված է լեռներով ու լեռնաշղթաներով:

Բուսական աշխարհ. Երևանի ֆլորիստիկ շրջանի բուսականությունը օշինդրա-կիսաանապատային է վաղանցիկ կամ էֆեմերային բուսատեսաների գերակշռությամբ: Երևանյան լանդշաֆտի ամենաբնորոշ առանձնահատկությունն այն է, որ այստեղ

բնականորեն չեն աճում ծառա-բույսեր, բացառությամբ մի քանի կիսաթփերի: Հետևաբար, Երևանում ծառերն ու թփերը կարելի է աճեցնել միայն ոռոգման առկայությամբ:

Երևանյան լանդշաֆտում հանդիպում են բուսական համակեցությունների հետևյալ 2 ենթատիպերը՝

1. Ֆրիգանա (ժայռային բուսականություն),
2. Տոմիլյար (անապատային):

Տարածքներին բնորոշ են հիմնականում կիսաանապատային բուսականության պետրոֆիլ տարբերակները, օշինդրա-էֆեմերային և հալոֆիլ, պսամոֆիլ անապատային բուսատեսակները:

Կենդանական աշխարհ. Տարածաշրջանում կենդանական աշխարհը ներկայացված է գերազանցապես անապատային և կիսաանապատային լանդշաֆտներին բնորոշ տեսակներով: Բնական լանդշաֆտների ֆաունան բազմազան է, այստեղ հանդիպում են՝ կաթնասունների շուրջ 20 տեսակ:

Համայնքի տարածքում տարածված են նաև կաթնասունների ֆաունայի ոչ ցանկալի ներկայացուցիչներ, մասնավորապես՝ սև և մոխրագույն առնետները, տնային մուկը: Թռչուններից հանդիպում են շուրջ 100 տեսակ, որոնց մեծ մասը բնադրում են:

Սողուններից հանդիպում են շուրջ 20 տեսակ, երկկենցաղներից հայտնի է 4 տեսակ: Երկկենցաղներից հանդիպում է լճային գորտը, սիրիական սխտորագորտը, կանաչ դոդոշը, մողեսներից՝ կլորագլխիկը, օձագլխիկը և երկարատ սցինկը, օձերից՝ կույր օձուկը: Բազմազան են թռչունները և միջատները: Թիթեռներից բնորոշ են սատիրները, խոշոր առագաստաթիթեռներ:

Բնական լանդշաֆտներում բազմաթիվ են անողնաշարավոր կենդանիները: Առավել ուսումնասիրված են բզեզները, հայտնի է մոտ 500 տեսակ: Այլ միջատներից հայտնի են շուրջ 60 երկթև, 40 թաղանթաթևավոր, 130 թիթեռներ, 10-ից 20 տեսակ ուղղաթևեր, սարդեր, փափկամարմիններ, մոտ 30 տեսակ վահանակրեր և տզեր:

Հանդիպում է «Սովորական երկարաթև չղջիկը», որը գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

Դիտարկվող տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը, առկա է տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ, ինչի պարագայում կենդանատեսակների և բուսատեսակների հանդիպելը գրեթե բացառվում է:

6.2.7. Պատմության և մշակութային հուշարձաններ

Համաձայն ՀՀ կառավարության 2007թ. մարտի 15-ի «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԿՈՂ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՅՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 385-Ն որոշման՝ Երևան քաղաքի Նոր Նորք վարչական տարածքի համար սահմանվում է հուշարձանների հետևյալ ցանկը.

1.8 ՆՈՐ ՆՈՐՔ թաղամաս

1	2	3	4	5	6	7	8
1			ԲԱՅՕԹՅԱ ԿԱՅԱՆ «ՆՈՐ ՆՈՐՔ - 1»	քարի դար	Նոր Նորք-Ավան մայրուղու բաժանման հատվածում, Գետառի կիրճի ձախափնյա թեք լանջին	<	1
2			ԲԱՅՕԹՅԱ ԿԱՅԱՆ «ՆՈՐ ՆՈՐՔ - 2»	միջին քարի դար	թաղամասի աե մասում, Նոր Նորքի 4- րդ զանգվածի մոտ, «Տորք Անգեղ» հուշարձանի հիվանդանի վրա	<	2
3			ԲԱՅՕԹՅԱ ԿԱՅԱՆ «ՆՈՐ ՆՈՐՔ - 3»	միջին քարի դար	Նոր Նորքի 3- րդ զանգվածի ամ մասում, Գետառի ձախ ափին, հիվանդանոցի մոտ	<	3
4			ԲԱՅՕԹՅԱ ԿԱՅԱՆ «ՆՈՐ ՆՈՐՔ - 4»	հին քարի դար	Նոր Նորքի 4- րդ զանգվածի հս- աե մասում, Ռադիոտեխնիկայի ուսումնարանի դիմաց	<	4
5			ԲԱՅՕԹՅԱ ԿԱՅԱՆ «ՆՈՐ ՆՈՐՔ - 5»	քարի դար	Նոր Նորքի 5-րդ և 7- րդ զանգվածների միջև բարձրացող բլրի ամ լանջին	<	5

6	ԲԱՅՕԹՅԱ ԿԱՅԱՆ «ՆՈՐ ՆՈՐՔ - 6»	քարի դար	Նոր Նորքի 6-րդ զանգվածի հվ մասում, Գետառի կիրճի անջին	Հ	6
7	ԲԱՅՕԹՅԱ ԿԱՅԱՆ «ՆՈՐ ՆՈՐՔ - 7»	հին քարի դար	Նոր Նորքի 5-րդ և 7-րդ զանգվածների միջև բարձրացող բլրի գագաթից 1.3 կմ հվ, սարահարթի գոգավոր հատվածում	Հ	7
8	ԲԱՅՕԹՅԱ ԿԱՅԱՆ «ՋՐՎԵԺ - 1»	նոր քարի դար	Ջրվեժ թաղամասից 3 կմ հվ-ամ, Նոր Նորքի 4-րդ զանգվածի հարևանությամբ	Հ	8
9	ԲԱՅՕԹՅԱ ԿԱՅԱՆ «ՋՐՎԵԺ - 2»	մեզոլիթ	Ջրվեժ թաղամասի հվ մասում, խաղողի այգու եզրին, «Ջրվեժ - 1» բացօթյա կայանից 250 մ հեռու	Հ	9
10	ԲԵՐԴՇԵՆ «ԱՂՎԵՍԱԲԵՐԴ»	Ք.ա. 2-1 հազ., Ք.հ. 2-4 դդ., 9-11 դդ.	Նոր Նորքի 3-րդ զանգվածում, քաղաքային հիվանդանոցի ծննդատան մասնաշենքի տակ և նրանից ամ	Հ	10
11	ԺԱՅՌԱՊԱՏԿԵՐՆԵՐ	Ք.ա. 2 հազ.	Գայի պող., բացօթյա ցուցադրության շարքում	Հ	11
12	ՀՈՒՇԱՂԲՅՈՒՐ ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊՍԱՄԲՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԳՆԴԱԿԱ- ՀԱՐՄԱՆ ՏԵՂՈՒՄ	1972 թ.	Մյասնիկյան պող., Կենդանաբանական այգու դիմաց	Տ	12
13	ՀՈՒՇԱՐՁԱՆ ԳԱՅԻ (ՀԱՅԿ ԲԺՇԿՅԱՆՑԻ)	1977 թ.	Նոր Նորքի 1-ին զանգվածում, Գայի	Հ	13

14	ՀՈՒՇԱՐՁԱՆ «ՀԱՅԿ ՆԱՀԱՊԵՏ»	1972 թ.	պող. վրա Գայի պող.	<	14
15	ՀՈՒՇԱՐՁԱՆ «ՏՈՐՔ ԱՆԳԵՂ»	1982 թ.	Գայի պող.	<	15
16	ՋՐԱՆՑՔ «ԱՂՎԵՍԱԲԵՐԴԻ»	ուշ միջնադար	Նոր Նորքի 1-ին զանգվածի բար- ձունքի ամ և հվ լանջերին	<	16
17	ՎԻՇԱՊԱՔԱՐ	Ք.ա. 2 հազ.	Գայի պող., բացօթյա ցուցադրության շարքում	<	17
18	ՎԻՇԱՊԱՔԱՐ	Ք.ա. 2 հազ.	Գայի պող., բացօթյա ցուցադրության շարքում	<	18
19	ՏԱՊԱՆԱՔԱՐ	16 դ.	Գայի պող., բացօթյա ցուցադրության շարքում	<	19
20	ՏԱՊԱՆԱՔԱՐ	16 դ.	Գայի պող., բացօթյա ցուցադրության շարքում	<	20
21	ՏԱՊԱՆԱՔԱՐ	16 դ.	Գայի պող., բացօթյա ցուցադրության շարքում	<	21
22	ՏԱՊԱՆԱՔԱՐ	16 դ.	Գայի պող., բացօթյա ցուցադրության շարքում	<	22

23		ՏԱՊԱՆԱՔԱՐ	16 դ.	Գայի պող., Հ բացօթյա ցուցադրության շարքում	23
24		ՏԱՊԱՆԱՔԱՐ	16 դ.	Գայի պող., Հ բացօթյա ցուցադրության շարքում	24
25		ՔԱՆԴԱԿ «ՄԱՅՐՈՒԹՅՈՒՆ»	1975 թ.	Գայի պող. բացօթյա ցուցադրության շարքում	25

Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների Երևան քաղաքի պետական ցուցակը ներառում է 512 հուշարձան՝ 245 պահպանական միավորով:

Նախատեսվող գործունեության տարածքում պատմամշակութային հուշարձաններ չկան:

6.2.8. Հատուկ պահպանվող տարածքներ և բնության հուշարձաններ.

Երևան քաղաքում ներկայումս գործում է Երևանի բուսաբանական այգին և Էրեբունի արգելոցը:

Աղյուսակ 7.

Երևանի բուսաբանական այգի		0.8 քկմ	1935
Էրեբունի արգելոց		1.2 քկմ	1981

Բնության հուշարձաններ. ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N967-Ն որոշման համաձայն՝ Երևան քաղաքում առկա են հետևյալ բնության հուշարձանները.

Աղյուսակ 8.

1	«Անանուն» սյունաձև բազալտներ	քաղ. Երևան, Հրազդանի կիրճի ձախափնյա մասում, Սբ. Սարգիս եկեղեցու մոտ
2	«Անանուն» սյունաձև բազալտներ	քաղ. Երևան, Հրազդանի կիրճի ձախափնյա մասում մանկական ե/գ տանող թունելի արևմտյան ճակատամուտքի մոտ

Գործունեության տարածքում պատմության և մշակութային հուշարձանները տարածքում բացակայում են:

Նախատեսվող գործունեության ենթակա և հարակից տարածքում բացակայում են հատուկ պահպանվող տարածքները:

6.2.9. Սոցիալ-տնտեսական հարցեր

Երևան քաղաքի սոցիալ-տնտեսական ցուցանիշները ներկայացված են ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքի տեղեկատվության համապատասխան.

Աղյուսակ 9

Տարածքը Territory	223 քառ. կմ/ sq. km
ՀՀ տարածքում քաղաքի տարածքի տեսակարար կշիռը, % Territory share of the city in the territory of the RA, %	0.7
Վարչական շրջաններ District communities	12
Բնակչության թվաքանակը 2023թ. տարեկգրի դրությամբ Population number as of the beginning of the year, 2023	1 098.9 հազ. մարդ/ ths. Person
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում Երևան քաղաքի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2022 թ., % Share of city population in the total population of the RA 2022, %	36.9
Գյուղատնտեսական նշանակության հողեր Agricultural land	3 321.5 հա/ ha
այդ թվում՝ վարելահողեր including - arable land	909.9 հա/ ha

Համաձայն ՀՀ Վիճակագրական կոմիտեի 2023թ. տեղեկագրի՝ Երևան քաղաքում 2023թ. հունվարի 1-ի դրությամբ բնակչության թվաքանակը կազմում է 1098,9 մարդ:

Երևանը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում:

Սահմանակից է ՀՀ Արագածոտնի, Կոտայքի, Արարատի և Արմավիրի մարզերին:

«Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքով: Երևան քաղաքը բաժանված է 12 վարչական շրջանների՝ Աջափնյակ, Ավան, Արաբկիր, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ, Քանաքեռ-Զեյթուն: Երևանը հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնն է: Երևանի արդյունաբերության հիմնական ճյուղերն են սննդամթերքի, ներառյալ խմիչքների արտադրությունը, քիմիական և մետաղագործական արդյունաբերությունը:

Բեռնաուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (քաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան, որոնք ապահովում են կապն արտաքին աշխարհի հետ): Երևանը Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքն է: Այն խոշորագույնն է ոչ միայն ՀՀ ներկա 49 քաղաքների, այլև պատմական Հայաստանի մայրաքաղաքների շարքում:

Մայրաքաղաքում են գործում ՀՀ-ում միջազգային (միջկառավարական, միջպետական) և այլ կազմակերպությունների ներկայացուցչությունների գրասենյակները:

Երևանը հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնն է: Բազմաճյուղ արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է: Ըստ 2019-Համաձայն Վիճակագրական կոմիտեի կայք էջի՝ 2022թ. մայրաքաղաքի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները Հայաստանի Հանրապետության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 34.8 %
- շինարարություն՝ 43.3 %
- մանրածախ առևտուր՝ 71.7 %
- ծառայություններ՝ 86.1 %

Երևանի արդյունաբերության հիմնական ոլորտներն են սննդամթերքի, ծախսային արտադրատեսակների, խմիչքների, ինչպես նաև հիմնային մետաղների արտադրությունը, գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է անասնաբուծությունում և բուսաբուծությունում: Բեռնաուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և երկաթուղով: Քաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան, որոնք ապահովում են կապն արտաքին աշխարհի հետ:

Բեռնաուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (քաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան, որոնք ապահովում են ամբողջ հանրապետության կապն արտաքին աշխարհի հետ):

Շենգավիթ վարչական տարածքը կազմում է 4060հա, բնակչության թվաքանակը

2023թ. հունվարի 1-ի դրությամբ՝ 142,2 հազ. մարդ:

2020թ. դրությամբ Երևան քաղաքում առկա են 224 պետական և ոչ պետական նախադպրոցական, 252 պետական և ոչ պետական հանրակրթական կրթական հաստատություններ, 50 երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ, 19 պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ, 31 առողջապահական կազմակերպություններ և այլն:

Համաձայն 2019-2023թթ. Երևան քաղաքի զարգացման ծրագրի՝ Երևան քաղաքում հաշվառված է մթնոլորտային օդի վրա վնասակար ազդեցություն առաջացնող շուրջ 420 կազմակերպություն: Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում հողերը բնութագրվում են աղտոտման գումարային գործակցի (ԱԳԳ) բարձր մակարդակով: Երևան քաղաքի մթնոլորտային օդի և հողերի որակի վատթարացման հիմնական պատճառներից են քաղաքում շարունակաբար ավելացող տրանսպորտային միջոցները, հրդեհները, կենցաղային և արդյունաբերական աղտոտումը, հողօտարումները, հողի էռոզիան, կանաչ տարածքների կրճատումը և այլն: Այդ նպատակով կարևոր է Երևան քաղաքում բուֆերային գոտիների պահպանումը, վերականգնումը և կանաչապատ տարածքների բարելավումը, ավելացումը, ոռոգման ցանցի ընդլայնումը և բարեկարգումը:

Համաձայն զարգացման ծրագրի՝ Երևան քաղաքի կանաչ զանգվածը կազմում է 6758.5 հա, որից ընդհանուր օգտագործման կանաչ մակերեսը կազմում է 862.0 հա: Քաղաքի ոչ բարենպաստ էկոլոգիական վիճակը պահանջում է կանաչապատման որոշակի ռազմավարության մշակում, պաշտպանիչ կանաչ բուֆերային գոտիների ստեղծման անհրաժեշտություն: Նախատեսվում է հանգստի գոտիների ստեղծում, միջազգային չափանիշներին համապատասխան կանաչապատման աշխատանքների իրականացում, կանաչ բուֆերային գոտիների ստեղծում:

7. Նախատեսվող գործունեության բնութագիրը, տեխնիկական-տեխնոլոգիական լուծումները շինարարության և շահագործման փուլերում

Նախատեսվող գործունեությունը՝ բազմաբնակարան բնակելի շենքի կառուցապատման ենթակա տարածքը գտնվում է Նոր Նորք վարչական շրջանի Մոլդովական փողոց 27/6 հասցեում՝ 0.34859հա հողամասում:

Նախատեսվում է կառուցել 20 վերգետնյա հարկանի 1 մասնաշենքից բաղկացած բնակելի համալիր՝ կից քառահարկ ստորգետնյա ավտոկայանատեղիով:

7.1 Շահագործման փուլ.


7.1.1 Բնակելի համալիրի տեխնիկա-տնտեսական ցուցանիշներ են.

- Տարածքի ընդհանուր մակերես – 3485,9մ2 (100%)
- Կառուցապատման մակերես – 691.34մ2 (20%)
- Անջրանցիկ մակերես – 773.11մ2 (23%)
- Կանաչապատման մակերես – 1457մ2 (41%)
- Գեոցանցով հետիոտնային անցումներ – 113.95մ2 (3%)
- Գոյություն ունեցող համայնքային ասֆալտ – 450.5մ2 (13%)
- Շինարարական մակերեսը -26800.0 մ2
- Վերգետնյա կառ. մակերեսը -18495.0 մ2
- Ստորգետնյա կառ. մակերեսը -8305.0 մ2
- Բնակելի մակերեսը -13119.34 մ2
- Բնակարանների ընդհանուր քանակը -149 բն.
- Հասարակական (օֆիսային) մակերեսը -915.0մ2
- Առևտրային մակերես -2194.9 մ2
- Ստորգետնյա կայանատեղիներ (80.0%) -119 մեքենա

Ավտոկայանատեղին նախատեսվում է 119 մեքենայի համար, որից՝ 111 ստորգետնյա, 9 վերգետնյա: Բացի կցակառույցից, ավտոկայանատեղին նախատեսվում է նաև բնակելի շենքի ստորգետնյա երեք հարկերում: -1 և 1 հարկերում նախատեսվում են հասարակական և օֆիսային տարածքները իսկ մնացածը՝ բնակելի հարկեր են:

Շենքն ունի հատակագծային բազմանկյան ուրվագիծ: Ելնելով տարածքի ռելիեֆային բնական թեքություննից շենքի 1-2-րդ հարկերը մի կողմից կունենան ստորգետնյա դիրքավորում, մյուս կողմից՝ վերգետնյա: Նման տեղադիրք ունի նաև ստորգետնյա ավտոկայանատեղին, որը տարածքի մուտքից ենթադրում է գրոյական նիշի վրա կանաչ գոտի, իսկ մյուս կողմից քառահարկ ստորգետնյա ավտոկայանատողի: Վերջինիս վրա նախատեսվում է խաղահրապարակ, ֆուտբոլային դաշտ:

Ստորգետնյա ավտոկայանատեղիի տանիքի լայնական կտրվածք՝ դրենաժային համակարգի նկարագրությամբ





Շենքի սեյսմիկ հաշվարկների համար մշակվել են կրող կոնստրուկցիաների 3D մոդելներ և իրականացվել են համապատասխան հաշվարկներ ըստ «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» ՀՀՇՆ 20.04 շինարարական նորմերով: Ընդունվել են երկաթբետոնյա կոնստրուկցիաներում օգտագործված նյութերի հաշվարկային արժեքները: Կատարված հաշվարկային արժեքների ուսումնասիրությունների՝ Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի 15 հարկանի մասնաշենքի նախագծային կոնստրուկտիվ լուծումները բավարարում են ՀՀՇՆ 20.04 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» և այլ ՀՀ տարածքում գործող շինարարական նորմերի պահանջներին:

Արտաքինից շենքի ծածկույթը լինելու է ապակյա, համադրված օդափոխվող ֆասադով: Շենքի դիրքը ապահովում է բնական լուսավորություն բոլոր ճակատներից, իսկ ճակատների ամբողջական ապակեպատումը բնակարաններում հատակից առաստաղ լույսի բացվածքներ է ստեղծում, բնակարանների հատակագծային լուծումների հետ մեկտեղ ապահովելով բոլոր բնակելի սենքերի և խոհանոցների բնական լուսավորվածությունը:

Դեպի պատշգամբ ելք ունեցող բոլոր բացվածքները նախատեսվում է իրականացնել հրակայուն ապակիներից և շրջանակներից: Վերելակներն, ինչպես նաև

աստիճանավանդակների դռները նախատեսվում են հրակայուն ինքնափակման համակարգերով:

Բնակելի շենքն ունենալու է միասնական ստորգետնյա ավտոկայանատեղի՝ 114 մեքենայի համար, որը բավարարելու է բնակչության կարիքների 77%-ը: Ավտոկայանատեղիներն ապահովված են լինելու հրդեհամարման և հրդեհաշիջման, ծխահեռացման համակարգերով, սանհանգույցներով՝ ըստ ՀՀ-ում գործող շիննորմերի: Ստորգետնյա հարկերն անհրաժեշտության դեպքում կարող են ծառայել բնակչության համար որպես թաքստոց:

Շենքի տանիքը լինելու են հարթ՝ կազմակերպված ջրահեռացմամբ:

Բազմաբնակարան բնակելի շենքի հակահրդեհային պաշտպանությունը կազմակերպվելու է համաձայն՝ ՀՀՇՆII-8.04.-2005 «Շենքերի և շինությունների հրդեհային ավտոմատիկա» շինարարական նորմերի, «Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի» կողմից տրված հրահանգների, ինչպես նաև փոշեհատիկային հրդեհաշիջման մոդուլների տեխնիկական անձնագրերի հիման վրա:

Շենքի ջեռուցումը նախատեսված է անհատական գազի կաթսաներով:

Նախագիծը մշակելիս հաշվի են առնվել ինչպես դիտարկվող տարածքի հատակագծի երկրաչափական ուրվագիծը, դիտարկվող և հարակից տարածքների գոյություն ունեցող կառուցապատումը, տեղանքի ռելիեֆային առանձնահատկություններն, այնպես էլ պատվիրատուի պահանջները:

Շահագործման փուլում բնակելի շենքն, ինչպես նաև ստորգետնյա հարկերն ապահովված են լինելու բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամների համար տեղաշարժվելու հնարավորություններով և պաշտպանության միջոցառումներով, որոնց լուծումները նախատեսվել են քաղաքաշինության նախարարի 2006թ. հոկտեմբերի 10-ի N 253-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

Բնակելի շենքի նախագծային լուծումները կատարվելու են հիմք ընդունելով ՀՀ կառավարության 12. 04.2018թ «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» N426-Ն որոշմամբ սահմանված պահանջները՝ էներգախնայողության և էներգաարդյունավետության ապահովմանն ուղղված միջոցառումներին համապատասխան: Ինժեներատեխնիկական համակարգերի համար նախատեսված էներգաարդյունավետության նվազագույն պահանջները վերաբերում են՝

- 1) ջեռուցման համակարգերին.
- 2) տաք ջրամատակարարման համակարգերին.
- 3) օդի լավորակման համակարգերին.
- 4) ընդհանուր օդափոխման համակարգերին կամ դրանց համակցությանը.
- 5) լուսավորության համակարգերին:

Էներգախնայողությամբ համար ավտոկայանատեղիի օդափոխությունը կկատարվի CO-ի ազդասարքերի միջոցով:

Բնակելի շենքի սպասարկման տարածքների գլխավոր մուտքերը լինելու են շենքերի բակային հատվածներից, որտեղից մուտքեր ապահովվում են նաև հասարակական տարածքներից:

Բնակելի շենքն ապահովված է լինելու ծայնամեկուսացման, ջերմամեկուսացման, օդափոխության և ավտոմատ հրդեհային ազդարարման համակարգերով՝ ծխի և ջերմային ազդանշանային ընդունող-հսկիչ սարքերով, լուսաձայնային-ազդանշանային ազդասարքերով, ապահովվելու է համակցում 911 մոնիթորինգային համակարգին համապատասխան տեխնիկական և ընդհանուր դրույթներով: Ավտոկայանատեղիները ևս ապահովված են հակահրդեհային համակարգերով՝ ծխահեռացման և հրդեհաշիջման համակարգերով:

Նախատեսվում է բնակելի հարկերի միջանցքներում և ավտոկայանատեղիներում ծխահեռացում՝ տանիքում տեղադրվող օդամուղների միջոցով: Նախատեսվում է վերելակների հորաններում և աստիճանավանդակների նախասրահներում տեղադրել դիմահարման համակարգեր՝ հրդեհամարման նպատակով տեղադրել 95 հատ կրակմարիչներ: Տեղադրվելու են հակահրդեհային ազդասարքեր, վահանակներ:

Շենքն ապահովված է լինելու էվակուացիոն ելքերով:

Գազամատակարարում. Բնակելի շենքի գազամատակարարումը կատարվելու է համաձայն՝ «Գազայրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրված գազաֆիկացման և գազամատակարարման տեխնիկական պայմանի: Հավելված 5:

Համաձայն տեխնիկական պայմանի՝ նախատեսվում է գազի միացումը կատարել ցածր ճնշման $d=108$ մմ տրամագծի վերգետնյա գազատարից: Գազամատակարարման համար պահանջվող գազի ճնշումը՝ 0.3(3) ՄՊա (կգուժ/սմ²):

Ջերմամատակարարում. Շենքերի ջերմամատակարարումը նախատեսված է բնակարաններում տաք ջրամատակարարման և ջեռուցման անհատական կաթսաներից: Տաք ջրամատակարարման ներքին ցանցը կատարվելու է պոլիպրոպիլենային խողովակներով՝ հատակի միջով բաշխվում է ջեռուցման մարտկոցներին: Մոնտաժման աշխատանքների ավարտից հետո ջեռուցման համակարգը ենթարկվում է հիդրավիկական և ջերմային փորձարկման, որից հետո հատակի միջով անցնող խողովակները մեկուսացվում են ռետինե մեկուսիչով: Հասարակական մասի ջեռուցումը և հովացումը կիրականացվի սպլիտ կոնդիցիոներների միջոցով:

Օդափոխություն. Բազմաբնակարան բնակելի շենքի օդափոխությունը կատարվելու է խոհանոցներից, սանհանգույցներից և լողասենյակներից՝ բնական՝ 100մմ, Ø125մմ և Ø160մմ օդատարներով, որոնք հորանների միջով բարձրանում են դեպի տանիք:

Ավտոկայանատեղիներից ներածման և արտածման համակարգերը տեղադրվելու են առաստաղի տակ: Օդափոխության համար համար օգտագործվելու են կոմպակտ համակարգեր, որոնք անհրաժեշտության դեպքում կփոխարինվեննույնատիպ պարամետրերով այլ համակարգերով: Արտածումը կատարվելու է կարգավորող

ճաղավանդակների միջոցով:

Ծխահեռացման օդամուղները տեղակայված են տանիքի վրա: Շենքում նախատեսված են ներածման և ծխի արտածման համակարգեր:

Հակահրդեհային համակարգ. բնակելի համալիրն ունենալու է հակահրդեհային համակարգ՝ հրդեհային անվտանգության սերտիֆիկատներին համապատասխան: Համակարգի հսկումն ու ղեկավարումն իրականացվելու է ավտոկայանատեղիում տեղադրված C2000M ղեկավարման վահանակի միջոցով: Հակահրդեհային համակարգի մալուխները տեղակայել խողովակների մեջ, նախապես պատրաստված ակոսներում Տարածքները հսկվելու են հասցեային ծխահեռացման և ջերմային ազդասարքերով, որոնք գործելու են ավտոմատ համակարգով՝ միացված պահպանային ազդանշանային սարքին: Ազդասարքերը և ազդարարները տեղակայվելու են առաստաղների տանիքին, պահպանելով 0,555մ նվազագույն հեռավորություն լուսավորիչներից և բարձր լարման հոսանքագծերից:

Էլեկտրամատակարարում. բնակելի շենքի արտաքին էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն՝ էլեկտրացանցի հետ կնքված NO570577 պայմանագրի: Հավելված 6

Շենքում նախատեսված է կազմակերպել էլեկտրավահանակային սենյակ, որտեղ տեղակայվելու են շենքի գլխավոր էլեկտրական վահանները, բաշխիչ պահարանները, ծխահեռացման և օդափոխության համակարգի ուժային ավտոկայանատեղիի ընդհանուր և էվակուացիոն լուսավորության վահանակները: Էլեկտրամատակարարման մալուխները վահանային սենյակում և ավտոկայանատեղիի մասում անցնում են նախապես կառուցված սակառների վրայով, միջհարկային հատվածներում՝ մալուխային հորաններով, իսկ միջանցքներում՝ պատերի վրա, գաջի սվաղի տակ, խողովակով, ամրացված ճարմանդներով: Բնակելի շենքի ներքին էլեկտրամատակարարման ցանցը իրականացվելու է պղնձե ջիղով մալուխներով:

Բնակելի շենքի հարկերի հիմնական անցուղիներում, ավտոկայանատեղիում և աստիճանավանդակներում նախատեսված են վթարային և տարհանման լուսատուներ՝ ակումուլյատորային մարտկոցներով: Էլեկտրաէներգիայի ընդհատվելու դեպքում վերջիններս ավտոմատ կերպով միանում են իրենց մեջ ներկառուցված տեղային անկախ աղբյուրին՝ ապահովելով 2 ժամյա աշխատանքին ռեժիմ:

Շանթապաշտպանություն. բնակելի շենքերի շանթապաշտպանությունն իրականացվելու է՝ համաձայն ԲՃ 34 21 122-87 հրահանգի: Բոլոր հողանցման և շանթապաշտպան օճախները միացվում են միմյանց եռակցմամբ: Տանիքում, մասնաշենքերի վրա տեղադրվելու են շանթընդունիչ՝ բետոնե հիմքով, 4մ բարձրությամբ, որը միացվում է տեղադրված ցանցին:

Ջրամատակարարում, ջրահեռացում- բազմաբնակարան շենքի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը կառուցվելու են համաձայն՝ «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից կնքված N7-10-60 պայմանագրի: Հավելված 4

Բնակելի շենքի ջրամատակարարումն իրականացվելու է ներտարածքային ցանցից d=1000մմ մուտքագծերով:

Ջրամատակարարաման մայրուղային խողովակները տեղադրվելու են փակ հորաններում: Սպինկլերային համակարգի ջրի քանակն ապահովվում է պոմպակայանում տեղադրված պոմպի միջոցով: Սնող և բաժանարար խողովակները նախատեսված են պողպատե է. . եռակցող խողովակներից $d=150-50$ մմ “ ջրագազատար խողովակներից՝ $d=32-25$ մմ:

Կենցաղային կոյուղի. շահագործման փուլում կենցաղային կեղտաջրերն ինքնահոս հեռացվում են գոյություն ունեցող քաղաքային կոյուղու ցանց: Կենցաղային կեղտաջրերը սանիտարատեխնիկական սարքավորումներից հեռացվում են դեպի ներտարածքային ցանց: Կենցաղային կոյուղու կանգնակները նախատեսվում է տեղադրել փակ հորաններում, որոնք ստուգիչների մոտ ունեն սպասարկման դռնակներ՝ 400×300 մմ չափերի: Կոյուղու ներքին ցանցը նախատեսվում է կառուցել $d=100-50$ մմ տրամագծի պոլիվինիլքլորիդե խողովակներից: Ավտոկայանտեղիում առաստաղի տակ խողովակները ջերմամեկուսացվում են հանքաբամբակով: Ավտոկայանտեղում նախատեսվում է տեղադրել 2 հատ դրենաժային սուզապոմպ:

Հեղեղատար համակարգ. հարթ տանիքներից անձրևի և հալոցքի ջրերը ներքին ջրհոսի ցանցով հեռանում են բակային ցանց, որը միանում է անձրևատար կոյուղու փողոցային հեղեղատարին: -3.90 նիշի առաստաղի տակի խողովակներով անձրևաջրերը հեռացվում են դեպի արտաքին համակարգ: Անձրևաջրերի հեռացման համակարգի կանգնակները նախատեսվում է տեղադրել փակ հորաններում, որոնք ստուգիչների մոտ ունեն 400×300 մմ չափերի սպասարկման դռնակներ: Համակարգը նախատեսվախ է իրականացնել $d=150$ մմ պոլիվինիլքլորիդե խողովակներով:

Աղբահեռացում. Շահագործման փուլում աղբահեռացումը կատարվում է Երևան քաղաքի ավագանու 23 դեկտեմբերի 2011թ. «Աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգը հաստատելու մասին» 360-Ն որոշմամբ սահմանված կարգով: Տեղադրվելու են 3 հատ $1 \times 1,5$ չափերի աղբամաններ, այդ թվում աղբի տեսակավորման աղբամաններ:

Բնակելի համալիրի մուտքը լինելու է Մոլոդավական փողոցից:

Բարեկարգում և կանաչապատում. Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Բակային հատվածում նախատեսվում են նաև խաղահրապարակներ, հանգստի ակտիվ և պասիվ գոտիներ, ճեմուղիներ, զրուցարաններ, կանաչապատ պուրակ:

Կանաչապատում. շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է կառուցապատումից ազատ տարածքի բարեկարգում և կանաչապատում՝ 1457 մ² մակերեսով՝ $41,7\%$: Կանաչապատումը կատարվելու է Երևանի համայնքապետարանի կողմից համաձայնեցված կանաչապատման նախագծին համապատասխան (Կանաչապատման նախագիծը գտնվում է հաստատման փուլում, որը ներկայացվում է ՇՄԱԳ փաթեթին կից): Կանաչապատումն իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ:

7.2 Շինարարության փուլ.

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցումը կատարվելու է երեք փուլերով.

- Նախապատրաստական աշխատանքներ
- Առաջին փուլում կառուցվելու են ստորգետնյա ավտոկայանատեղիները:
- Երկրորդ փուլում բնակելի շենքի կառուցումը:

7.2.1. Ժամանակացույց

Շինարարական աշխատանքների տևողությունը հաշվարկվել է ըստ գործող ՀՀՇՆ 1-3.01.-2008 նորմերի:

Շինարարական աշխատանքների ընդհանուր տևողությունը կազմելու է 5 տարի՝ 60 ամիս:

Շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է՝

- շինարարական հրապարակի կազմակերպում,
- հողային աշխատանքներ՝ հանույթ, լիցք
- շին-մոնտաժային աշխատանքների իրականացում
- շին-մոնտաժային մեխանիզմների. ամբարձիչ- տրանսպորտային միջոցների և
- հիմքերի իրականացում, ստորգետնյա հարկերի, հորանների կառուցում,
- ե/բ սալիաշխատանքներ, պատերի շարվածքներ,
- ենթակառուցվածքների անցկացում,
- հարդարման աշխատանքների իրականացում և այլն:

ՇՆԱՐԱՐԱՎԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

	ԱՆՈՒՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ՍԵՎ ՄԻԱԿՈՐ ՄԱՍԻ ՇՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ	ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՐ																			
		3 ԱՄԻՍ	6 ԱՄԻՍ	9 ԱՄԻՍ	12 ԱՄԻՍ	15 ԱՄԻՍ	18 ԱՄԻՍ	21 ԱՄԻՍ	24 ԱՄԻՍ	27 ԱՄԻՍ	30 ԱՄԻՍ	33 ԱՄԻՍ	36 ԱՄԻՍ	39 ԱՄԻՍ	42 ԱՄԻՍ	45 ԱՄԻՍ	48 ԱՄԻՍ	51 ԱՄԻՍ	54 ԱՄԻՍ	57 ԱՄԻՍ	60 ԱՄԻՍ
1.	ԿԱՊԻՏԱԼ ՍՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ	■	■																		
2.	ՇԻՆ ՀԻՄՆԱՐԱՐԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ		■																		
3.	ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ		■	■	■																
4.	ՀԱՎՔԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ ԱՏՈՐԳԵՏՆՅԱՆ ՀԱՐԿԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ			■	■	■	■	■	■	■											
5.	ՇԵՆՔԻ ՎԵՐԳԵՏՆՅԱՆ ԿՐՈՂ ՏԱՐԱԾԱԿԱՆ ԿՈՆՏՐՈՒԳԻԱՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ					■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■
6.	ՏԱՆԻՔԻ ԱՆՁՐԱՆՑԻԿ ՇԵՐՏԵՐԻ ՊԱՏ.																■	■	■	■	■
7.	ՊԱՐՓԱԿՈՂ ՊԱՏԵՐԻ ՇԱՐՈՒՄ							■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■
8.	ՄԻՋՆՈՐԱՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ						■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■
9.	ՇՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԿԱՐՈՒՄ							■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■
10.	ԱՐՏԱՔԻՆ ԻՆՃԵՆԵՐԱԿԱՆ ԳԾԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ				■	■	■	■	■	■											
11.	ՆԵՐՔԻՆ ԻՆՃԵՆԵՐԱԿԱՆ ԳԾԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ								■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■
12.	ԱՌՍԱՊՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԴՈՆԵՐԻ ՏԵՂԱՐՈՒՄ								■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■
13.	ՎԵՐԵԱԿԱՆԵՐ ԵՎ ԱՎՏՈՄԱՏԻԿԱ												■	■	■	■	■	■	■	■	■
14.	ՆԵՐՔԻՆ ՀԱՐԿԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ								■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■
15.	ՏԱՐԱԾՔԻ ՄԱՔՐՈՒՄ / ԲԱՐԵԱՐԱՐՈՒՄ			■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■
16.	ԻՆՃ. ԳԾԵՐԻ ԵՎ ԱՎՏՈՄԱՏ. ՓՈՐՇԱՐԱՐՈՒՄ																			■	■
	ՆԱԽԱՊԱՏՐԱՅԱՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	■	■																		
	ԿԱՌՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ			■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■
	ԱՎԱՐՏԱԿԱՆ ՓԱՅՈՒՑԱԳԵՐՆԵՐԻ ԶԵՎԱԿԵՐՊՈՒՄ																				■

ԸՆՀԱՆՈՒՐ ՇՆԱՐԱՐԱՎԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ -- 56 ԱՄԻՍ

ՏՆՕՐԵՆ	ԱՆՍԻՑ	ԲԱԶՄԱՔԱՆԱԿԱՐԱՆ ԲԱՆԿԵԼԻ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ			
Հ.Կ. ԻՆՃԵՆԵՐ	Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	hazugh - p. ԵՐԵՎԱՆ, ՆՈՐ ՆՈՐՔ Վ/Շ, ՄՈԼՈՂՈՎԱԿԱՆ փող. հ. 27/6			
		ՇՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԱՆ ՄԱՍ	ՓՈԽ	ԹԵՐՑ	ԹԵՐՑԵՐ
			ԱՆ	ՀԿ - 9	25
		ՇՆԱՐԱՐԱՎԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ	«ԱՄԱՎ - ԱՏՈՐԻՊ» ՍՊԸ		

7.2.2 **Շին. հրապարակ**

Բնակելի շենքի շինարարական աշխատանքների իրականացման համար նախատեսվող շինարարական հրապարակը կազմում է 1200մ² մակերես:

Շինհրապարակում տեղակայվելու են.

- ավտոմեքենաների, մեխանիզմների կայանման, առասանման ճոպանների տեղակայման վայրեր,
- պահակակետ,
- բետոնի ընդունման հարթակ,
- սեպտիկ հոր շին թափոնների մաքրման համար,
- շինարարական նյութերի, գործիքների պահեստներ, բացօթյա պահեստ,
- աշխատողների համար ժամանակավոր շինություններ՝ գրասենյակ, տարբեր նշանակության շարժական տնակներ, հանդերձարան-չորանոցով՝ 1 հատ, 1 հատ սննդի ընդունման կետ՝ ճաշարան, լվացարան, ցնցուղարան, բուժկետ,
- ջրամատակարարման պոմպ՝ մեքենաների անիվների լվացման համար,
- բիոզուգարան լվացարանով՝ 2 հատ
- բետոնի ընդունման հարթակ,
- սեպտիկ հոր՝ կեղտաջրերի հեռացման համար,
- կենցաղային աղբաման -2 հատ,
- շինարարական նյութերի լաբորատորիա՝ բետոնի բաղադրությունը ստուգելու նպատակով,
- շինհրապարակում լինելու են նաև 2 հատ 7,30x3 մ չափերի ավտոմեքենաների անիվների լվացման հարթակ:

[illegible]

Շինարարական աղբ 28 խմ

	Կատարելով շփոթում
	Ջրամակարկային միջոցների արագորոշում սահմանափակում
	Ընդ հրահանարան ժողովրդի իշխանություն
	Արևելամիջամանների շրջադարձի տեղանկար
	Մասնավորապես ժողովրդի մեծամասնության վարձարժեքի արժեք
	Մասնավորապես հետադարձ մեծամասնության մեծամասնության
	Արևելամիջամանների մեծամասնության մեծամասնության
	Համարձակություն վարձարժեքի
	Լուսավորմանը
	Մասնավորապես ժողովրդի մեծամասնության

ժամանակակից տեղադրվող
մետաղե վառանակային պատմեջ շենքի
մերձակա հատվածներում շենքից մինչև 15մ
հեռավորությամբ ՏԻՊ-2

№ ១៣	ឈ្មោះមន្ត្រី	ឈ្មោះមន្ត្រី	ឈ្មោះមន្ត្រី	ឈ្មោះមន្ត្រី
1	អគ្គនាយក	អគ្គនាយក	2	
2	អគ្គនាយករង	អគ្គនាយករង	3	
3	អគ្គនាយករង	អគ្គនាយករង	4	
4	អគ្គនាយករង	អគ្គនាយករង	5	
5	អគ្គនាយករង	អគ្គនាយករង	6	
6	អគ្គនាយករង	អគ្គនាយករង	7	
7	អគ្គនាយករង	អគ្គនាយករង	8	
8	អគ្គនាយករង	អគ្គនាយករង	9	
9	អគ្គនាយករង	អគ្គនាយករង	10	
10	អគ្គនាយករង	អគ្គនាយករង	11	
11	អគ្គនាយករង	អគ្គនាយករង	12	
12	អគ្គនាយករង	អគ្គនាយករង	13	
13	អគ្គនាយករង	អគ្គនាយករង	14	

№ 07	Անվանում	Անկեր	Քաճ.	Ծանոթություն
7	Ավտոկտմ	HC-55753-7	1	ըստ պահանջի
2	Անտարակային կտմ	Резак КС754С	1	ըստ պահանջի
5	Քեմոնախի արտև	-	-	ըստ պահանջի
6	ԲՈՂՇԱՅԱՔի ակտիվորիչ	MA3 5590	3	կամ համարորդ
7	ԲՈՂՇԱՅԱՔի ակտիվորիչ	КМА3 5551	3	կամ համարորդ
8	Էլ. ծանրամետ ապր	СГН 500	3	կամ համարորդ
9	Շարժական կոմպոնետ	340 - 35 B	7	ըստ պահանջի
9	Էքսիդանտի Կլանա ԴՄԿ-7		2	ըստ պահանջի
10	Քլորոլից		1	ըստ պահանջի
11	Կառնիի հալսամանե		38	ըստ պահանջի

ՏԱՌԵՆ	ԱՄԷՆԵՏ	ԲԱՅԱՍԵՆԱԿԱՐԱՆ ԲԵՆԻՔԻՆ ԸՆԹԵՍՈՒՄՆԱԿԱՆ ԼՆԱՆՈՒԹՅՈՒՆ		
ԿԱԼԵՅԵՆ	Վ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	հարցի - ք.ԵՐԵՎԱՆ, ՆՈՒ ՆՈՒՔ ԿՆԸ, ՍՈՒՂՈՒԿԱՐԱՆ ԳՈՐ. Խ.27/6		
		ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՅՈՒՆԱԿԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍՄԱԼ		
		ԳՐԱԼ	ԲԵՐՑ	ԵԹԵՐԵՐ
		ՄԱ	ԿՆ-10	25
		ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՅՈՒՆԱԿԱՆ		«ԱՄԱՆ» ՍՏՈՒՊԻԿԱՆ ՍՈՐԸ

Շինհրապարակն ապահովված է լինելու գիշերային լուսավորությամբ՝ 2 լյուքսից ոչ պակաս:

Շինհրապարակում նախատեսված է շինարարական աղբի պահման տարածք, կենցաղային աղբի համար տեղադրվելու են 1*1,5 չափերի 2 հատ մետաղական աղբամաններ:

Շինարարության ժամանակ նախատեսվող ժամանակավոր պահեստներն, ինչպես նաև աշխատողների համար նախատեսվող ճաշարանը, հանդերձարանը, գրասենյակը, պահակատունը տեղադրվելու են տարածքում՝ ժամանակավոր վագոն տնակներում:

Շինհրապարակի տարածքում կատարվելու է մեքենաների անիվների լվացում, որի համար նախատեսված է 3 հատ անիվների լվացման հարթակ՝ յուրաքանչյուրը 3.1x3.24մ լվացման սարքի միջոցով: Անիվների լվացում պահանջող մեքենաները պետք է անցնեն անիվների լվացման սարքի միջով՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ: Շինհրապարակում անիվների լվացումից առաջացած, ինչպես նաև շինարարական հոսքաջրերը միավորվելու են մեկ բակային՝ ջրահեռացման ցանցին: Շինարարական և հոսքաջրերը պլաստմասե վերգետնյա խողովակներով, բակային սելավային ջրացանցի միջոցով հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող կեղտաջրերի հեռացման համար նախատեսված հոր:

Շինհրապարակը ցանկապատվելու է մետաղական 330մ երկարության ժամանակավոր պարսպով՝ արտաքին կողմից երևացող վայրերում կփակցվի տեղեկատվական պաստառ՝ համաձայն Երևանի ավագանու 16.03.2012թ. N405-Ն որոշման, մասնավորապես Կառուցապատողի, Գլխավոր կապալառուի, Պատասխանատու անձի հեռախոսահամարներով, շինթույլտվության համարով, շինարարության ժամկետների նշագրմամբ:

Շինհրապարակն ապահովված է լինելու գիշերային լուսավորությամբ:

Բոլոր տիպի շին-մոնտաժային աշխատանքները կկատարվեն պահպանելով շինարարական նորմերը, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինհրապարակն ապահովվելու է էլեկտրականությամբ, պահպանվելու են անվտանգության և հակահրդեհային պայմանները:

Ելնելով առկա պայմաններից շինարարության փուլում նախատեսվում են անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ, հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների հետ:

Նախատեսվող աշխատողների առավելագույն քանակը շինհրապարակում կազմելու է 26 մարդ, որից ինժեներատեխնիկական անձնակազմ՝ 3 մարդ, բանվորներ՝ 17 մարդ, մնացածը լինելու են մեքենավարներ և այլ նեղ մասնագիտության ունեցողներ՝ 6 մարդ:

Հողային աշխատանքներ. կառուցապատման ժամանակ կատարվելու են հողային աշխատանքներ՝ գրունտների քանդում 47500մ³, որից 6400մ³ հետ լիցք: Մնացած՝

41100մ³ ծավալի հողային զանգվածը կուտակվելու է տարածքում և տեղափոխվելու է աղբավայր՝ Երևանի քաղաքապետարանի կողմից տրված շինթույլտվության պահանջներին: **Տարածքում տեղ-տեղ առկա է բուսահող, որը կազմելու է 200մ³: Այն նախատեսվում է օգտագործել հետագա կանաչապատման նպատակով:** Ընդհանուր հողային աշխատանքների ծավալը կկազմի 47700մ³:

Հողային և հիմնային, տանիքի, հատակների հարդարման, ինչպես նաև լրող և պատող կոնստրուկցիաների շին մոնտաժային աշխատանքները կատարվելու են համաձայն աշխատանքային նախագծի՝ ՇՆուԿ 3.02.02.-87-ի և ՇՆուԿ III-4-81-ի պահանջներին համապատասխան:

Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, շինարարական աշխատանքներ. գործունեության կատարման շինարարության փուլում օգտագործվող հիմնական տեխնիկա-տրանսպորտային միջոցներն են.

- ❖ Աշտարակային վերամբարձ կռունկ Potain H20/14C, կամ տվյալ տեսակին համարժեք տեխնիկական տվյալներով 1 հատ
- ❖ Ավտովերամբարձ կռունկ KC-65713-1 „Галичанин“, կամ տվյալ տեսակին համարժեք տեխնիկական տվյալներով 1 հատ
- ❖ Բեռնատար ավտոբետոնախառնիչ СБ-69Б ըստ պահանջի գ Բեռնատար ինքնաթափ МА3 5550, կամ համարժեք տեխնիկական տվյալներով 6 հատ
- ❖ Շարժական կոմպրեսոր ЗИФ - 55 В, կամ համարժեք տեխնիկական տվյալներով 1 հատ
- ❖ Էլ.եռակցման սարք СТН 500, կամ համարժեք տեխնիկական տվյալներով 3 հատ
- ❖ Բուդոզեր KOMATSU D37-EX-22 կամ համարժեք տեխնիկական տվյալներով 1 հատ
- ❖ Էքսկավատոր Hyundai 170W, կամ համարժեք տեխնիկական տվյալներով 2 հատ
- ❖ Ձեռքի էլեկտրական գործիքներ
- ❖ Ձեռքի մեխանիկական գործիքներ
- ❖ Ատաղձագործական գործիքներ
- ❖ Ներկարարական գործիքներ

Շինարարական աշխատանքների՝ բեռնման-բեռնաթափման ժամանակ օգտագործվող բեռնաբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտներին կամ տեխնիկական պայմաններին՝ համաձայն ՇՆ և Կ III-4-80* պահանջներին: Բեռնման և բեռնաթափման համար նախատեսված տարածքը պետք է հարթեցվի և ունենա 50 -ից ոչ ավել թեքություն:

Առասանման եղանակները և ձևերը որոշվում են նախապես և առասանման գրաֆիկական նկարագրությունը տրվում է առասանիչ բանվորներին, մեքենավարներին, կամ կախվում են տեսանելի տեղում ամբարձիչի մոտակայքում: Ամբարձիչի պտտվող պլատֆորմի և տրանսպորտային միջոցի կամ կառույցի կողային մասի մինիմալ հեռավորությունը պետք է լինի ոչ պակաս քան 1մ:

Շինտեխնիկան լինելու է Կապալառու ընկերության սեփական տեխնիկական կամ անհրաժեշտության դեպքում վարձակալվելու են այլ կազմակերպություններից:

Մեքենաներն աշխատելու են ըստ հերթականության և ըստ անհրաժեշտության: Աշխատող մեքենաները կայանվելու են գործունեության տարածքում՝ արտադրական հրապարակում: Շինարարական տեխնիկայի և սարքավորումների կայանման վայրերում նախատեսվում է ավագի կամ մանրախճի փոում՝ վառելիքի կամ քսայուղերի հնարավոր արտահոսքը հողային և ջրային ռեսուրսներ կանխելու նպատակով: Աղտոտված ավազը կամ մանրախճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր և փոխարինվելու է նորով:

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումն իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Կառուցապատման բոլոր լուծումների համար հաշվի են առնվելու տեղանքի պայմանները, կազմակերպվելու է անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր միջոցառումներ՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով:

Ամբողջ շինարարության ընթացքում վերահսկվելու են շինարարության որակի չափանիշները՝ տեխնիկական վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից: Ակտավորվելու են թաքնված աշխատանքները, գրանցելով վարման մատյանում:

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ՝ հատկապես կապված կոունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների հետ:

Էլեկտրամատակարարում. բնակելի շենքի շինարարության ընթացքում էլեկտրամատակարարումը կատարվելու է համաձայն՝ «ՀԷՑ» ՓԲԸ հետ կնքված պայմանագրի: Հավելված 6:

Շահագործման հանձնելուց առաջ կատարվելու է բնակելի շենքի էներգաարդյունավետության համապատասխանության գնահատում, կկիրառվեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 16-ի N 56-Ն որոշմամբ սահմանված է և (կամ) Զ1 ընթացակարգերի պահանջները:

Հրդեհաշիջման համակարգ. շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվելու են «Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին»-ի կողմից տրված հրահանգներով:

Շինարարական հրապարակում տեղադրվելու է 2 հրդեհաշիջման վահանակ, յուրաքանչյուրի վրա հակահրդեհային կրակմարիչներով և հիդրանտներով: Շինարարության փուլում տեղադրվելու է նաև 5 տոննա տարողության ջրի բաք՝ հրդեհամարման, ջրցանի նպատակով:

Աղբահեռացում. շինարարության ընթացքում առաջանալու են շինարարական նյութերի մնացորդներ շինարարական աղբի տեսքով՝ մոտ 1500մ³ ծավալով: Շինաղբի կուտակումը կատարվելու է շինհրապարակում նախատեսված վայրում՝

պարկերի մեջ, չգերազանցելով նախատեսված բարձրության նորմերը: Առաջանալեու է նաև երկրորդային օգտագործման ենթակա շինարարական մասեր, նյութեր, որոնք կապալառու կազմակերպությունն օգտագործելու է այլ շինարարության ժամանակ:

Կենցաղային աղբը կառուցապատման փուլում կազմելու է 15600կգ/տարի: Կենցաղային աղբի կուտակման համար տեղադրվելու են 1.5*1 չափերի 2 աղբարկղ: Շինարարության փուլում աղբահեռացումը կարգավորվելու է շինթույլտվությամբ սահմանված պահանջին համապատասխան:

8. Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր

Բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի կառուցման շինարարության փուլում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր, իսկ շահագործման փուլում ջուր՝ խմելու-կենցաղային նպատակով և բնական գազ:

8.1 Ջրային ռեսուրսներ

Շինարարության փուլում ջուրն օգտագործվելու է աշխատողների խմելու, տնտեսա-կենցաղային կարիքների, տարածքի ջրցանի, հողի(գրունտի) խոնավացման և անհրաժեշտության դեպքում հրդեհաշիջման համար:

Աշխատողների տեխնիկական և կենցաղային նպատակների համար ջուրը լինելու է բերովի՝ շշերով: Ջրցանի համար նախատեսվող տեխնիկական ջուրը և կենցաղային ջուրը բերվելու է ավտոցիստեռնով: Ջուրը լցվելու է տարածքում տեղադրվող 3տ տարողության բաքի մեջ: Ջրի մատակարարման հաճախականությունը կատարվելու է ըստ կարիքի: Տեխնիկական ջուրն ըստ անհրաժեշտության օգտագործվելու է հրդեհամարման, ջրցանի և անիվների լվացման համար: Տեխնիկական ջրի մատակարարման աղբյուրը կճշտվի համապատասխան թույլտվություններ ստանալուց հետո, շինարարական աշխատանքների սկզբից՝ կապալառու կազմակերպության կողմից: Տեխնիկական ջրի մատակարարումը կատարվելու է համապատասխան լիցենզիա ունեցող անձանց կամ ընկերությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

ա) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\text{ջ}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 3 մարդ

N– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n1– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 23 մարդ

N1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 864օր:

$$W_{\text{խ.տ.}} = (3 \times 0.016 + 23 \times 0.025) \times 864 = 538,272 \text{մ}^3/\text{շին. ժամ. կամ } 0,623 \text{մ}^3/\text{օր:}$$

բ) Զրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝ $U_1 = S_1 \times K_1 \times T$, որտեղ՝

S_1 – ջրվող տարածքի մակերեսը 228 մ², (արդիրապարակ, ճանապարհներ)

K_1 – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 մ³,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 250 (առավելագույնը 250օր, ներառված կրկնակի ջրցանը)

$U_1 = 228 \times 0.0015 \times 250 = 85,5$ մ³/շին. ժամ. կամ 0,342 մ³/օր:

Ընդամենը ջրի սպառումը շինարարության փուլում կլինի 0,965մ³/օր:

Կեղտաջրեր. Աշխատողների համար նախատեսվում է տեղադրել բիոգուգարան՝ լվացարանով: Իսկ ավտոբետոնախառնիչի տակարի, ավտոբետոնամոխիչի խողովակի լվացման համար տեղադրվելու է ժամանակավոր պարզարան 1խմ տարողունակությամբ:

Շահագործման փուլում Պահեստային շինությունների ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը միացվելու են գոյություն ունեցող համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերին՝ համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ տեխնիկական պայմանի համաձայն:

Բիոգուգարանի մաքրումը կատարվելու է մասնագիտական կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շահագործման փուլում հրդեհաշիջման համար պահանջվող ջրի ելքը հաշվարկվել է համաձայն «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» ՀՀՇՆ.40-01.01-2014 նորմերի: Հրդեհամարման համար նախատեսվող ջրաքանակը հաշվարկվում է 0,12լ/վրկ 1մ² մակերեսի համար:

Զրցան

Զրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$U_1 = S_1 \times \zeta_1 \times T$, որտեղ՝

S_1 – ջրվող տարածքի մակերեսը, 1000 քմ,

ζ_1 – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 խմ,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 1620

$U_1 = 1000 \times 0.0015 \times 1620 = 2\,430$ խմ/շին. ժամ.:

8.2 Շինարարական նյութեր

Շինարարության ժամանակ օգտագործվելու են շինանյութեր, մասնավորապես.

- ❖ երկաթբետոն, երկաթբետոնե կարկասներ
- ❖ ավազ, բետոն
- ❖ տուֆ
- ❖ Ավազ, պորտլանդ ցեմենտ
- ❖ սրբատաշ և կոպտատաշ քար

- ❖ էլեկտրոդներ
- ❖ մետաղ, մետաղական կառուցվածքներ
- ❖ ամրանային ձողեր
- ❖ բարձրորակ երեսապատման սալիկներ
- ❖ ապակի
- ❖ բարձրորակ սվաղ և ներկ

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույցի տեղադրում և բետոնախնուրդի պատրաստում չի նախատեսվում: Բետոնի շաղախը մատակարարվելու է մասնագիտացված ընկերության կողմից՝ համապատասխան բետոնախառնիչ մեքենաներով: Միաժույլ ե/բ կոնստրուկցիաների բետոնացման համար համապատասխան դասի բետոնը պատվիրվելու է մասնագիտացված բետոնային հանգույցներում: Բետոնը շինհրապարակում լցվելու է կաղապարների մեջ բետոնամղիչով: Նախատեսվում է հիմնականում B25 դասի միաժույլ երկաթբետոն՝ BCC պլաստիկատորի օգտագործումով:

Շինաշխատանքները կատարվելու են մասնագիտացված կապալառու կազմակերպությունների կողմից: Շինարարության համար նախատեսված բոլոր նյութերն, ինչպես նաև շենքի արտաքին և ներքին հարդարման նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված (լիցենզավորված) կազմակերպություններից՝ շինինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր շինարարական կազմակերպության արտադրական բազայից: Բետոնի որակը ստուգվելու է շինհրապարակում նախատեսված լաբորատորիայում:

Ձմռանը ներքին հարդարման և բետոնային աշխատանքները կատարվելու են հատուկ տաքացման պայմաններում: Արտադրական հրապարակում շինանյութերը պահեստավորվելու են պահեստներում, իսկ բաց տարածքի դեպքում կտեղադրվեն տակդիրների վրա՝ չգերազանցելով նախատեսված բարձրության նորմերը: Սորուն նյութերը պահեստավորվելու են ծածկի տակ:

9. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և ռիսկերը (շինարարության և շահագործման փուլ)

Գործունեության իրականացման ենթակա տարածքը գտնվում է Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Մոլդովական 27/6 հասցեում: Տարածքը կիսաբարեկարգ է, մասամբ ասֆալտապատված: Նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կառաջանան շինարարության փուլում, կապված՝ հողային աշխատանքների, մեքենաների և շինտեխնիկայի շահագործումից առաջացող ծխազազերի արտանետումների, շինտեխնիկայի շահագործման և ավտոտրանսպորտի տեղաշարժի արդյունքում աղմուկի մակարդակի ավելացման, թափոնների կառավարման, բետոնային աշխատանքների հետ, ինչպես նաև աշխատանքի անվտանգության հետ, որոնք կլինեն կարճաժամկետ:

Գործունեության իրականացումն առաջացնելու է լանդշաֆտի որոշակի ծանրաբեռնվածություն: Գործունեության իրականացման ընթացքում ծառահատումներ չեն կատարվելու:

Բազմաբնակարան բնակելի շենքի կառուցումը կատարվելու է ՀՀ գործող շինարարական նորմերին և պահանջներին համապատասխան, մասնավորապես ՀՀՇՆ 30.01-2014թ. «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական վայրերի հատակագծում և կառուցապատում», ՀՀՇՆ 30.01-2014թ. «Բնակելի շենքեր. մաս 1-ին, բազմաբնակարան բնակելի շենքեր», ՀՀՇՆ 30.01-2014թ. «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն», ՀՀՇՆ IV-11.03.-2002 «Ավտոկայանատեղեր», ՀՀՇՆ 11-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն»:

9.1 Օդային ավազան

Գործունեության իրականացման շինարարության փուլում լինելու են օդային ավազան արտանետումներ՝ տրանսպորտային միջոցների աշխատանքի ընթացքում՝ ծխագազերի և հողային աշխատանքների (փորման, հարթեցման), ճանապարհների օգտագործման ժամանակ առաջացող փոշու տեսքով:

Գործունեության իրականացման ընթացքում օդային ավազանի հնարավոր աղտոտվածությունը լինելու է կարճաժամկետ և թույլատրելի նորմերի սահմաններում: Շինարարության ընթացքում, հատկապես չոր և շոգ եղանակներին, կատարվելու են շինհրապարակի և ճանապարհների փոշենստեցման աշխատանքներ՝ ջրցան մեքենայով:

Շինարարության փուլում հարակից բնակելի և հասարակական շենքերից բողոքների դեպքում Կապալառուի կողմից կիրականացվի օդի աղտոտվածության գործիքային չափումներ, որոնք կհամեմատվեն Երևան քաղաքի նորմերի և ելակետային տվյալների հետ:

Ելակետային տվյալներ

Նոր Նորք վարչական շրջանի Մոլդովական փողոց 27/6 հողամասում՝ 0.34859հա տարածքում նախատեսվում է բազմաբնակարան բնակելի շենքի կառուցում: Նախատեսվող աշխատանքները նախատեսվում է իրականացնել առավելագույնը 5 տարի ժամկետում՝ 1620 օրվա ընթացքում: Շինարարության իրականացման յուրաքանչյուր փուլ ունի իր ժամկետը, համաձայն որի իրականացվել է արտանետվող նյութերի հաշվարկը:

Կառուցման աշխատանքների ընթացքում իրականացվելու են հետևյալ ծավալով հողային աշխատանքներ՝

- Գրունտի հանույթ – 47500 մ3
- Հետ լիցք – 6400 մ3

Շինարարության ժամանակ օգտագործվելու է նաև ավազ՝ ավազակոպճային խառնուրդ, խիճ, բիտում, ամրակցող նյութեր և այլ շինարարական նյութեր:

Շինարարության ժամանակ օգտագործվող հիմնական շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների ցանկը ներկայացվում է՝ թվով 15 շինմեքենա/շինտեխնիկա.

- ❖ Աշտարակային վերամբարձ կոունկ Potain H20/14C, կամ տվյալ տեսակին

համարժեք տեխնիկական տվյալներով 1 հատ

- ❖ Ավտոմեքանիզմը կոդակոչվում է КС-65713-1 „Галичанин“, կամ տվյալ տեսակին համարժեք տեխնիկական տվյալներով 1 հատ
- ❖ Բեռնատար ավտոբեռնափոխակառուցվածք СБ-69Б ըստ պահանջի գ Բեռնատար ինքնաթափ МА3 5550, կամ համարժեք տեխնիկական տվյալներով 6 հատ
- ❖ Շարժական կոմպրեսոր ЗИФ - 55 В, կամ համարժեք տեխնիկական տվյալներով 1 հատ
- ❖ Էլեկտրակայան սարք СТН 500, կամ համարժեք տեխնիկական տվյալներով 3 հատ
- ❖ Բուրգեր KOMATSU D37-EX-22 կամ համարժեք տեխնիկական տվյալներով 1 հատ
- ❖ Էքսկավատոր Hyundai 170W, կամ համարժեք տեխնիկական տվյալներով 2 հատ
- ❖ Ձեռքի էլեկտրական գործիքներ
- ❖ Ձեռքի մեխանիկական գործիքներ
- ❖ Ատաղձագործական գործիքներ

Ներկարարական գործիքներ

Մթնոլորտ արտանետվող նյութերի հաշվարկ

Շինարարական տեխնիկայի տեղաշարժը գրունտային ճանապարհով ուղեկցվում է փոշու արտանետմամբ, ինչն առաջանում է անվադողների և գրունտային մակերեսի շփման արդյունքում, գրունտի, շինանյութերի, շինարարական աղբի տեղափոխման, դատարկման աշխատանքների ժամանակ: Շինհրապարակում անօրգանական փոշու արտանետման առավելագույն սահմանաչափը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$Q = \frac{C_1 \times C_2 \times C_3 \times K_5 \times N \times L \times C_7 \times q_1}{3600} + C_4 \times C_5 \times K_5 \times q_1^2 \times S \times n, \text{ գ/վրկ}$$

$$M_{\text{տարի}} = 0.0864 \times M_{\text{վրկ}} \times (365 - (T_{\text{сн}} + T_{\text{д}})), \text{ տ/տարի}$$

Որտեղ,

C_1 – գործակից, որը հաշվի է առնում տեղանքում տրանսպորտի միջին բեռունակությունը

C_2 - գործակից, որը հաշվի է առնում տեղանքում տրանսպորտի տեղաշարժման միջին արագությունը

C_3 - գործակից, որը հաշվի է առնում ճանապարհների վիճակը

K_5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի մակերևույթային շերտի խոնավությունը

N - ամբողջ տրանսպորտի վազքը ընթացների թիվն է ժամում

L - մի վազքի միջին երկարությունն է

C_7 - գործակից, որը հաշվի է առնում մթնոլորտ արտանետվող փոշու բաժնեմասը

q_1 - 1 կմ վազքի դեպքում փոշու արտանետումները մթնոլորտ

C_4 - գործակից, որը հաշվի է առնում պլատֆորմի մակերեսի նյութի պրոֆիլը

C_5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի շրջափչման արագությունը
 K_5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի մակերևույթային շերտի խոնավությունը
 q_1^{2-} - նյութի փաստացի մակերևույթի միավորից փոշու արտանետումները
 S - պլատֆորմայի միջին մակերեսն է ,
 n - ավտոմեքենաների թիվն է
 T_{cp} – ձնածածկ օրերի թիվն է
 T_d – անձրևային օրերի թիվն է
 Աղյուսակ 2.

Կատարվող աշխատանքի բնույթը	C1	C2	C3	N	L	C7	q1	C4	C5	K5	q12	S	n	M, տ/տարի	Q, գ/վրկ
Մեքենաների շարժը	1	0.6	0.1	2	0.2	0.01	1025	1,3	1.0	0.01	0,002	15	13	0,037	0.005
Գրունտի հանույթը	1	0.6	0.1	2	0.2	0.01	1025	1,3	1.0	0.01	0.002	7	1	0,0013	0,00018
Գրունտի հետլիցք	1	0.6	0.1	2	0.2	0.01	1025	1,3	1.0	0.01	0.002	7	1	0,0013	0,00018

Արտանետումների վերջնական տարբերակը ներկայացվում է Աղյուսակ 3-ում
 Աղյուսակ 3.

Աշխատանքի բնույթը	M, տ/տարի	Q, գ/վրկ
Մեքենաների շարժը փոշի՝ 70-20% SiO ₂)	0,037	0.005
Գրունտի հանույթը փոշի՝ 70-20% SiO ₂)	0,0013	0,00018
Գրունտի հանույթը փոշի՝ 70-20% SiO ₂)	0,0013	0,00018
Արտանետվող փոշու ընդհանուր քանակը	0,0396	0,00536

Փորման աշխատանքների իրականացման արդյունքում արտանետվելու է անօրգանական փոշի՝ 20-70% SiO₂ պարունակությամբ: Նախատեսվող գործունեության նախագծային տվյալների համաձայն գրունտի հանույթի համար

օգտագործվելու է 1 էքսկավատոր՝ համապատասխանաբար $1մ^3$ աշխատանքային շերտի տարողությամբ: Ելնելով գործող մեթոդակարգից՝ արտանետվող փոշու ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Q = \frac{P1 \times P2 \times P3 \times P4 \times P5 \times P6 \times B1 \times G \times 10^6}{3600} \text{ գ/վրկ}$$

P1 - փոշու ֆրակցիայի բաժնեմասն է, 0,04

P2 0-50 մկմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու անոգում, 0.02

P3 - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու արագությունը, 1.2

P4 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը, 0.01

P5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը, 0.5

P6 - գործակից, որը հաշվի է առնում տեղանքի պայմանները, 1.0

B1 - գործակից, որը հաշվի է առնում նյութի բեռնաթափման բարձրությունը, 0.5

G վերամշակվող գրունտի քանակն ըստ աշխատանքային շերտի տարողության՝ 9տ/ժ Այսպիսով,

$$Q = \frac{0,04 \times 0,02 \times 1,2 \times 0,01 \times 0,5 \times 1 \times 0,5 \times 4,5 \times 10^6}{3600} = 0,003 \text{ գ/վրկ}$$

Մեկանգամյա համախառն արտանետումը (70-20% SiO₂).

M=0,0036 x 0,003 x 72 = 0,00078տ/շինժամ

Բեռնման – բեռնաթափման աշխատանքների իրականացման արդյունքում առաջացող փոշու հաշվարկն իրականացվել է գործող մեթոդակարգի համաձայն: Թափքի բեռնաթափման աշխատանքներն իրականացվում են ուղղահայաց՝ առանց թևքի կիրառման: Բեռնաթափվում է գրունտ, ինչից առաջացող փոշու ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$M = \frac{K1 \times K2 \times K3 \times K4 \times K5 \times K7 \times K8 \times K9 \times B \times G \times 10^6}{3600} \times (1 - \eta), \text{ գ/վրկ}$$

K1 - փոշու ֆրակցիայի բաժնեմասն է,

K2 0-50 մկմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու անոգում,

K3 - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու արագությունը,

K4 – գործակից, որը հաշվի է առնում տեղի պայմանները, տեղափոխման և փոշեառաջացման պայմանները,

K5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը,

K7 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը,

K8 – ուղղման գործակից տարբեր նյութերի համար՝ կախված ճանկաշերտի տեսակից

K9 – ավտոինքնաթափի համախառն բեռնաթափման ուղղման գործակից

B - գործակից, որը հաշվի է առնում նյութի բեռնաթափման բարձրությունը,

G – նյութի վերամշակման գումարային քանակը 1 ժամվա հաշվով, տ/ժ

η - փոշենստեցման արդյունավետության հարաբերակցությունը մեկ միավորի հաշվով

Արտանետվող փոշու տարեկան քանակը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$M_{\text{փ}} = K1 \cdot K2 \cdot K3 \cdot K4 \cdot K5 \cdot K7 \cdot K8 \cdot K9 \cdot B \cdot G_{\text{փ}}, \text{ տ/տ}$$

ընդ G_{200} – վերամշակվող նյութի գումարային ծավալն է շինարարության ողջ ժամանակատվածի համար

Գրունտ

$$M = 0,05 \cdot 0,03 \cdot 1,2 \cdot 1 \cdot 0,5 \cdot 0,2 \cdot 0,21 \cdot 0,2 \cdot 0,5 \cdot 6 \cdot 10^6 / 3600 \cdot 0,15 = 0,000945 \text{ գ/վրկ}$$

$$M_{\text{փ}} = 0,05 \cdot 0,03 \cdot 1,2 \cdot 1 \cdot 0,5 \cdot 0,5 \cdot 0,4 \cdot 0,2 \cdot 0,5 \cdot 422 = 0,0076 \text{ տ/տարի}$$

Մթնոլորտ արտանետվող աղտոտող նյութերի բնութագիրը բեռնման –բեռնաթափման աշխատանքներից

Աղյուսակ 4.

Արտանետվող նյութ	Առավելագույն միանվագ, գ/վրկ	Տարեկան արտանետում տ/տ
Անօրգանական փոշի >70%	0,000945	0,0076
Անօրգանական փոշի 20-70%	0,003	0,0106

Շինարարության ժամանակ աշխատող դիզելային շարժիչով մեքենաներից արտանետվող ընդհանուր գազերի և վնասակար նյութերի հաշվարկն իրականացվել է համաձայն գործող մեթոդակարգի: Հաշվարկի բանաձևը արտանետվող գազերի ընդհանուր ծավալի համար իրականացվում է հետևյալ բանաձևով.

$$M' = \frac{G_4 \cdot q_i \cdot n \cdot 10^3}{3600}$$

Որտեղ, G_4 – դիզ. վառելիքի ժամային ծախսն է

q_i – i-րդ աղտոտող նյութի սահմանային ցուցիչն է՝ տ/վ

n – շինհրապարակում միաժամանակ աշխատող մեքենաների առավելագույն թիվն է:

Հետևաբար,

$$M' = \frac{G_4 \cdot q_i \cdot n \cdot 10^3}{3600} = \frac{0,026 \cdot 0,084 \cdot 3 \cdot 10^3}{3600} = 0,0018 \text{ մ}^3 \text{ գազային արտանետման ծավալն է:}$$

Դիզելային շարժիչով մեքենաներից արտանետվող վնասակար նյութերի հաշվարկն իրականացվում է հետևյալ բանաձևով.

$$G_i = \sum_{k=1}^k (m_{\text{սթԱ}i} \cdot t_{\text{սթԱ}} + 1,3 \cdot m_{\text{սթԱ}ik} \cdot t_{\text{սթԱ}k}) \cdot N_k / 1800, \text{ ր/с}$$

որտեղ $m_{\text{սթԱ}i}$ – i -րդ նյութի սահմանային արտանետումն է չծանրաբեռնված մեքենայի շարժման ժամանակ գ/ր

$1,3 \cdot m_{\text{սթԱ}ik}$ – i -րդ նյութի սահմանային արտանետումն է ծանրաբեռնված մեքենայի շարժման ժամանակ գ/ր

$t_{\text{սթԱ}}$ – մեքենային շարժման ժամանակահատվածն է 30ր. կտրվածքով՝ չծանրաբեռնված ր.

$t_{\text{սթԱ}k}$ – մեքենային շարժման ժամանակահատվածն է 30ր. կտրվածքով՝ ծանրաբեռնված ր.

N_k – k -րդ խմբի մեքենաների վ միաժամանակ աշխատող մեքենաների առավելագույն թիվն է

i -րդ նյութի համախառն արտահանման հաշվարկն իրականացվում է հետևյալ բանաձևով.

$$M_i = \sum_{k=1}^k (m_{\text{սթԱ}i} \cdot t_{\text{սթԱ}} + 1,3 \cdot m_{\text{սթԱ}ik} \cdot t_{\text{սթԱ}k}) \cdot 10^{-6}, \text{ տ/տարի}$$

Շինմեքենաների անվանացանկ	Քանակը	Մեկ մեքենայի միջին աշխատաժամանակը							Աշխատանքային օրերի թիվը	Միաժամանակ աշխատող մեքենաների առավելագույն թիվը
		Օր/ժ				30ր/ր				
		հնամենի չճանրաբեռնված	ճանրաբեռնված	Ազատ ընթացք	չճանրաբեռնված	ճանրաբեռնված	Ազատ ընթացք			
Աշտարակային կոունկ	1 (1)	1	0,433	0,5	0, 333	12	13	5	110	+
Ավտովերամբարձ կոունկ	1 (1)	1	0,433	0,5	0, 333	12	13	5	95	+
Էլ. եռակցման սարք	1 (3)	2	2,4	2,6	1	12	13	5	290	-
Բեռնատար ավտոբետոնախառնիչ	1 (6)	2	2,4	2,8	1	12	13	5	320	+
Էքսկավատոր	1 (2)	1	2,875	3,2	1,3	12	13	5	110	+

բուլդոզեր	1 (1)	1	1,2333	1,6	0,6667	13	13	5	250	-
կոմպրեսոր	1 (1)	1	0,2333	0,4	0,1666 7	13	12	5	110	-
ջրի մեքենա	1 (1)	1	2	2,16667	0,8333 3	12	13	5	380	+

Աղտոտող նյութի անվանումը	i-րդ նյութի արտանետման ծավալը միաժամանակ աշխատող առավելագույն թվով մեքենաներից յուրաքանչյուրի համար հաշվարկվում է համաձայն $Gi = \sum_{k=1}^k (m_{\text{max}i} \cdot t_{\text{max}i} + 1,3 \cdot m_{\text{max}i} \cdot t_{\text{max}i}) \cdot N_i / 1800,$ <p>բանաձևի, իսկ ընդհանուր գ/վրկ</p>
Ածխածնի օքսիդ	0,00362
Ածխաջրածիններ	0,003214
Ազոտի օքսիդներ	0,00409
Ծծմբի երկօքսիդ	0,00204
Մուր	0,00278

Աղյուսակ 5.

Դիզելային շարժիչներից արտանետվող նյութի ընդհանուր ծավալը ըստ յուրաքանչյուր աղտոտող նյութի և ըստ աշխատող մեքենայի

Ամրակցման աշխատանքների ժամանակ օգտագործվող նյութերի և ներկայնյութերի համար հաշվարկն իրականացվում է համաձայն հետևյալ բանաձևի.

$$\Pi = 10^{-3} \cdot m_k \cdot (\delta a / 100) \cdot (1 - f_p / 100) \cdot K, \text{ տ/տարի}$$

Որտեղ,

m_k – օգտագործվող ներկանյութի քանակն է, կգ

δa – ներկի բաժնեմասն է, որը կորում է աէրոզոլի տեսքով, %;

f_p -լուծիչ, %;

K – աէրոզոլի տեսքով ներկանյութի նստեցման գործակիցն է,

$$\Pi_1 = 10^{-3} \cdot m_k \cdot f_p \cdot \delta' p / 10^4, \text{ տ/տարի}$$

Որտեղ,

f_p - նյութի օքսիդացման չափաբաժինն է

$\delta' p$ – լուծիչի գոլորշիացման մասնաբաժինն է, որն առաջանում չորանալուց:

Հետևաբար ամրակցման աշխատանքների ժամանակ արտանետվող նյութերի քանակն ըստ տեսակի որոշվում է հետևյալ բանաձևով.

$$G = \frac{\Pi' \cdot 10^6}{n \cdot t \cdot 3600}, \text{ գ/վրկ}$$

որտեղ,

Π' - ամրակցման ընթացքում օգտագործվող նյութերի բաժնեմասն է, մեկ ամիս անընդմեջ աշխատելու պարագայում

n – մեկ ամսվա կտրվածքով օգտագործվող նյութերով աշխատելու անընդմեջ օրերի քանակն է

t – օրվա մեջ ներկանյութ օգտագործելու միջին ժամային քանակն է:

Այսպիսով,

$$\Pi = 10^{-3} \cdot 20,05 \cdot (30/100) \cdot (1-45/100) \cdot 1 = 0,003308 \text{ տ/տարի}$$

$$G = 0,003308 \cdot 10^6 / (10 \cdot 6 \cdot 3600) = 0,015316 \text{ գ/վրկ}$$

$$\Pi = 0,003308 \cdot 1 = 0,003308 \text{ տ/տարի}$$

$$G = 0,015316 \cdot 1 = 0,0015316 \text{ գ/վրկ}$$

$$\Pi = 10^{-3} \cdot 20,05 \cdot (45 \cdot 25 / 10^4) = 0,002256 \text{ տ/տարի}$$

$$\Pi_1 = 10^{-3} \cdot 20,05 \cdot (45 \cdot 75 / 10^4) = 0,006767 \text{ տ/տարի}$$

$$\Pi = 0,002256 + 0,006767 = 0,009023 \text{ տ/տարի}$$

$$\Pi = 0,009023 \cdot 0,5 = 0,004511 \text{ տ/տարի}$$

$$G = 0,002256 \cdot 0,5 = 0,001128$$

Այսպիսով, արտանետվող նյութերի տեսակային և քանակական տվյալները ներկայացվում են Աղյուսակ 7-ում

Աղյուսակ 7.

Աղտոտող նյութի անվանումը	Առավելագույն արտանետում գ/վրկ	Տարեկան արտանետում տ/տ
Դիմեթիլբենզոլ	0,001128	0,004511
Կախյալ մասնիկներ	0,0015316	0,002256

Իրականացնելով շինարարության ժամանակ աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետման ծավալների հաշվարկները, ներկայացնենք Աղյուսակ 8-ի տեսքով դրանց ամբողջական վերլուծությունը և նկարագիրը Աղյուսակ 8.

Շինարարական աշխատանքների փուլերը	Մթնոլորտ վնասակար արտանետումների քանակը, գ/վրկ	Ժամանակահատված)							
	Անօրգանական փոշի 70-20% SiO2	Անօրգանական փոշի > 70 SiO2	Ածխածնի օքսիդ	Ածխաջրա ծիններ (CH)	Ազոտի օքսիդներ	Ծծմբի երկօքսիդ	Մուր	Դիմեթիլ լբենզոլ	Կախյալ մասնիկներ
1	2	3	4	5			6	7	
Շինտեխնիկայի տեղեշարժ՝ այդ թվում նաև շխնաղբի տեղափոխում	0,0396	-	-	-	-	-	-	-	-
Փորման աշխատանքներ	0,003	-	-	-	-	-	-	-	-
Բեռնման – բեռնաթափման՝ այդ թվում շենքի կառուցման աշխատանքներ	-	0,000945	-	-	-	-	-	-	-

Եր									
Դիզելային շարժիչից առաջացող արտանետում ներ	-	-	0,00362	0,003214	0,00409	0,00204	0,00278	-	-
Ամրակցման աշխատանքն երից արտանետում ներ	-	-	-	-	-	-	-	0,00112 8	0,0015316

Կառուցապատման ժամանակ արտանետվող նյութերը գտնվում են թույլատրելի սահմանային նորմերում, իսկ շինարարությունը կրելու է ժամանակավոր բնույթ, ուստի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա նույնպես:

Շահագործման փուլում օդային ավազան արտանետումները կլինեն անհատական ջեռուցման կաթսաներից՝ ծխագազերի տեսքով:

9.2 Հողային ռեսուրսներ

Գործունեության ենթակա տարածքի նպատակային նշանակությունը բնակավայրի է, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման: Հողածածկը Լիցքեր են՝ կազմված խճից, խճավազից, շինաղբից և մինչև 25-40% պարունակությամբ կավաավազներից: **Տարածքում առկա է բուսահող՝ մոտ 200մ3 ծավալով:**

Համաձայն նախագծային լուծումների՝ նախատեսվող գործունեության իրականացման համար նախատեսվում է 47700մ³ ծավալի հողային աշխատանքներ: Հողային զանգվածն առաջանալու է շենքի հիմքերի փորման, ներտարածքային ճանապարհների կառուցման, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման համար նախատեսվող աշխատանքներից: Ավելացած հողային զանգվածը տեղափոխվելու է աղբավայր՝ Երևանի համայնքապետարանի հետ համաձայնեցված:

Շահագործման փուլում հողային ռեսուրսների վրա ազդեցություն չի նախատեսվում, ելնելով գործունեության բնույթից:

9.3 Ջրային ռեսուրսներ

Համաձայն «ԳՈՆՏԵԽՆԻԿ» ՍՊԸ-ի կողմից տրված ինժեներակրթական եզրակացության՝ նախատեսվող գործունեության տարածքում առկա չեն գրունտային ջրեր՝ 30-50մ խորությունների վրա:

Կառուցապատվող տարածքում չկան մակերևութային ջրային ավազաններ կամ առուներ: Ուստի մակերևութային վրա ուղղակի ազդեցություն չի կանխատեսվում: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր արտահոսքերը և արտանետումները ջրային ռեսուրսներ:

9.4 Կենսաբազմազանություն

Գործունեության ենթակա տարածում գերակշռում են կավաավազային շերտերը, տեղ-տեղ տարախոտային բուսական ծածկով:

Բուսական աշխարհ. նախատեսվող գործունեության ենթակա տարածքն արդեն ենթարկված է անտրոպոգեն ազդեցությունների, հարակից գտնվում են

հասարակական շենքեր, բնակելի տներ: Կառուցապատման բուն տարածքում՝ Մոլդովական փողոցի երկայնքով առկա են ծառեր՝ թվով 6 ծառ: Տվյալ ծառերը պահպանվելու են շինարարության ընթացքում, Ավելի ներսի հատվածներում առկա է տեղ տեղ աճած թփուտներ, որոնք մաքրվելու են տարածքից: Կառուցապատման տարածքի միջնահատվածում առկա ծառերից հինգը վերատնկվելու է, իսկ մնացած չորացած ծառերը կտրվելու են:

Տարածքի մոտակայքում հանդիպում է ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված «Բուխինգերա անութային» կրիտիկական վիճակում գտնվող տեսակը:

Կենդանական աշխարհ. գործունեության հարակից տարածքներն արդեն կառուցապատված են, ուստի մարդկային գործոնի, երթևեկության՝ մեքենաների շարժի, աղմուկի պայմաններում տարածքում բացակայում են ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդատեսակները, ինչպես նաև կենդանիների բնադրավայրերը, միգրացիոն ուղիները:

Հաշվի առնելով, որ նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Երևան քաղաքի բնակեցված և կառուցապատված թաղամասում, կենսաբազմազանությանը վտանգ չի սպառնում և բնապահպանական միջոցառումներ չեն նախատեսվում:

9.5 Թափոններ

Գործունեության իրականացման հետևանքով շինարարության փուլում առաջանալու են կոշտ թափոններ.

- շինարարական աղբ (ավազի, բետոնի, քարի և այլն), (վտանգավորության դաս IV դաս, ծածկագիր՝ 91200600 01 00 0)՝ 1500մ³ ծավալով:
- կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ/բացառությամբ խոշոր եզրաչափերի/՝ (ծածկագիր՝ 91200400 01 00 4) կառուցապատման փուլում՝ 15600 կգ/տարի, շահագործման փուլում՝ 213120 կգ/տարի:
- Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող» (ծածկագիր՝ 31401100 08 99 5)՝ 41100 մ³:
- յուղոտված լաթեր(58200600 01 01 4)՝ 5կգ
- յուղերով աղտոտված ավազ(յուղի պարունակությունը - 15%-ից ցածր՝ 31402303 01 03 4)՝ 95մ³,
- կարծրացած սոսինձ(55700600 01 01 4) 3կգ,
- Կտորների տեսքով սև մետաղներ պարունակող թափոններ(ծածկագիր՝ 35131200 01 995)3մ³, օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված պղնձե հաղորդալար (ծածկագիր՝ 3531030501013)3մ³, օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված ալյումինե հաղորդալար (ծածկագիր՝ 35310105 01 99 5)3մ³ և այլն:

Այս կարգի թափոնները համաձայն՝ ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. դեկտեմբերի 25-ի N430-Ն և 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N342-Ն հրամանների՝ ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի՝ պատկանում են

վտանգավորության 4 և 5-րդ դասերին:

Շինաղբի, չաղտոտված հողային զանգվածի տեղափոխման վայրը, ինչպես նաև վերը նշված թափոնների տեղափոխման վայրը կճշտվի Երևանի քաղաքապետարանի հետ՝ շին. թույլտվության փուլում: Երրորդ դասի մնացորդները առաջանալու են ենթակառուցվածքների քաշելու ժամանակ, որը համապատասխան ծառայություն մատուցող ընկերության կողմից կհեռացվի կամ կհանձնվի համապատասխան լիցենզիա ունեցող ընկերության պայմանագրային հիմունքներով:

Կենցաղային աղբի հաշվարկները

Կենցաղային աղբի ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$M=n*m$$

m – 1 հերթափոխում կենցաղային աղբի քանակը մեկ մարդու հաշվով՝ 120կգ/տ

n – աշխատողների թիվն է.

$$M=26*120= 3120\text{կգ/տ կամ } 8.5\text{կգ/օր}$$

Շինարարությունը տևելու է 5 տարի, հետևաբար

$$M=3120*5= 15600\text{կգ/տ որը շինարարության ընթացքում}$$

Շահագործման փուլում կենցաղային աղբի առավելագույն ծավալը հաշվարկվել է հաշվի առնելով բնակարանների առավելագույն ծանրաբեռնվածությունը՝ 592 մարդ (148 բնակարան, յուրաքանչյուր բնակարանում 4 մարդ): Շահագործման փուլում կենցաղային աղբի քանակը կկազմի.

$$M=592*360= 213.120\text{կգ/տարի կամ } 583\text{կգ/օր:}$$

9.6 Պատմամշակութային և բնության հուշարձաններ

Գործունեության ենթակա և մոտակա տարածքներում բացակայում են պատմամշակութային արժեք ունեցող պատմամշակութային և բնության հուշարձանները: Կառուցապատման ենթակա տարածքը չի առնչվում Նոր Նորք վարչական շրջանում գոյություն ունեցող մշակութային հուշարձանների, ինչպես նաև հատուկ պահպանվող տարածքների հետ:

Ուստի հնարավոր ազդեցություններ վերջիններիս վրա չի նախատեսվում:

Միաժամանակ շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմնին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:

9.7 Աղմուկ և թրթռում.

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՀՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

Աղմուկից պաշտպանվող օբյեկտ են հանդիսանում հարակից բնակելի շենքերը, որոնց պատերը, երկշերտ պատուհանները արդեն իսկ կրում են աղմուկի մեկուսիչի դեր: Աղմուկի հիմնական աղբյուր են հանդիսանում շինարարության սկզբում էքսկավատորը, իսկ ավարտին գլխորդ: Միաժամանակ այս երկու շինտեխնիկան չի շահագործվում: Երկու աղմուկի աղբյուրներն էլ կրում են ժամանակավոր բնույթ: Էքսկավատորը աշխատելու է 10 ամիս աղմուկի մակարդակը՝ $LA_{էկվ}$, կազմում է 85 դԲ: Գլխորդ տարածքի բարեկարգման ընթացքում՝ 6 ամիս աղմուկի մակարդակը՝ $LA_{էկվ}$, կազմում է 80 դԲ: Աղմուկի մակարդակի հաշվարկը կատարվել է համաձայն ՀՀՀՆ 22-04-2014: Շինհրապարակը լինելու է ցանկապատված: Ցանկապատի նյութի խտությունը՝ ≤ 200 կգ/մ²: Շինության պատերը ևս հանդիսանում են միաժամանակյա աղմուկից պաշտպանման էկրան:

Պաշտպանիչ էկրանի արդյունավետությունը հաշվարկում են հետևյալ բանաձևով.

$$I_{աղ} = 23 \lg m_{է} - 10 \text{ դԲ, երբ } m \geq 200 \text{ կգ/մ}^2$$

$$I_{աղ} = 13 \lg m_{է} - 13 \text{ դԲ, երբ } m \leq 200 \text{ կգ/մ}^2$$

Որտեղ $m = Km$ – մակերեսի խտության էկվիվալենտն է,

m – մակերեսի խտությունն է, կգ/մ²,

K – գործակից է, որը հաշվի է առնում պատնեշի խտությունը, որը 200 կգ/մ^2 $K=1,3$

$$M = 1,3 \times 200 = 260$$

$$L_{աղ} = 13 \lg m_{է} - 13 = 18,2 \text{ դԲ}$$

Շինությունից դուրս աղմուկի մակարդակը կկազմի՝

$$LA_{տար} = LA_{էկվ} - L_{աղ} = 85 - 18,2 = 66,8 \text{ դԲ}$$

Հարակից բնակելի շինությունների պատերը, պատուհանները, մուտքի դռները, տանիքը, կանաչապատ տարածքը հադիսանում են որպես պաշտպանիչ էկրան: Ձայնամեկուսացումը $R_{Ատր}$ ըստ աղույակ 2՝ կազմում է միջինը 50 դԲ:

$$LA_{տար} = 66,8 - 50 = 16,8 \text{ դԲ}$$

Գլխորդի համար՝

$$LA_{տար} = LA_{էկվ} - L_{աղ} = 80 - 18,2 - 50 = 11,8 \text{ դԲ}$$

Մոտակա բնակելի շինությունների ներսում աղմուկի մակարդակը էքսկավատորի աշխատանքի դեպքում կկազմի 16,8 դԲ, իսկ գլխինի 11,8 դԲ, ինչը նորմայից բավականին ցածր է: Աշխատանքները իրականացվելու են միայն ցերեկային ժամերին:

Թրթռում

Թրթռման նորմաները բնակելի շենքերում, ըստ ՀՀ առողջապահության նախարարի 17 մայիսի 2006թ. N533-Ն որոշման, ներկայացված են ներքոնշյալ աղյուսակում:

Հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) թույլատրելի մակարդակները

Միջին երկրաչափական հաճախականության օկտավային շերտեր, Հց	Թույլատրելի արժեքները X0, Y0 և Z0 առանցքներով			
	Թրթռա արագացում		Թրթռա արագություն	
	մ/վրկ ² .10 ⁻³	դԲ	մ/վ .10 ⁻³	դԲ
2	10,0	80	0,79	84
4	11,0	81	0,45	79
8	14,0	83	0,28	75
16	28,0	89	0,28	75
31,5	56,0	95	0,28	75
63	110,0	101	0,28	75
Ճշգրտված ու համարժեքային ճշգրտված արժեքները և դրանց մակարդակները	10	80	0,28	75
Ոչ մշտական թրթռման (վիբրացիայի) համար թույլատրելի արժեքներին մտցվում է ուղղում - 10դԲ, իսկ բացարձակ արժեքները բազմապատկվում են 0,32-ով: Դպրոցների սենքերի, ուսումնական հաստատությունների, գրադարանների ընթերցասրահների համար մտցվում է ուղղում -3դԲ:				

Շինարարության ընթացքում թրթռման աղբյուր են հանդիսանում շինտեխնիկայի աշխատաքը, որոնց թրթռման մակարդակը ցածր է, և արդեն իսկ շինհրապարակի սահմաններում ալիքը մարում է և չի կարող ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա:

Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

9.8 Արտակարգ իրավիճակներ

Համաձայն «ԳԵՈՏԵԽՆԻԿ» ՍՊԸ-ի կողմից տրված ինժեներատեխնիկական

եզրակացության՝ տեղամասը երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների տեսանկյունից պիտանի է կապիտալ շինությունների, բարենպաստ է կառուցապատման համար: Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում բացակայում են:

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերի առաջացում կապված՝

- բնական աղետների,
- սողանքների, հրդեհների,
- հեղուկ նյութերի արտահոսքի
- շահագործվող շինտեխնիկայի վթարների հետ:

Շահագործման փուլում արտակարգ իրավիճակների ռիսկը կապված է բնակելի շենքում հրդեհների, բնական աղետների հետ:

9.9 Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն, մարդու առողջություն

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են աշխատողների արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված հրդեհների, հեղուկ նյութերի արտահոսքի, աշխատողների վնասվածքների և տեխնիկա-տրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում հնարավոր վթարների հետ:

Հնարավոր ազդեցություններից խուսափելու համար շինաշխատանքները կկատարվեն պահպանելով շինարարության ժամանակացույցը և աշխատանքի անվտանգության կանոններն՝ ըստ ՇՆԱԿ-3-480* նորմերի:

Շահագործման փուլում մարդկանց առողջության վրա բացասական ազդեցություն չի ունենալու, այլ միայն դրական ազդեցություն, քանի որ ապահովվելու է մարդկանց բնակարանային կարիքները:

9.10 Էներգախնայողություն և էներգաարդյունավետություն

Բնակելի համալիրի նախագծային լուծումները կատարել հիմք ընդունելով ՀՀ կառավարության 12. 04.2018թ N 426-Ն որոշմամբ սահմանված պահանջները՝ էներգախնայողության և էներգաարդյունավետության ապահովմանն ուղղված միջոցառումներին համապատասխան, ներառելով՝ ջեռուցման, տաք ջրամատակարարման, օդափոխման, լուսավորության համակարգերը:

Բնակելի համալիրի էներգաարդյունավետության համապատասխանության գնահատման համար պետք է կիրառվեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 16-ի N 56-Ն որոշմամբ սահմանված Է և (կամ) Զ1 ընթացակարգերի պահանջները:

Համաձայն նույն որոշման IX բաժնի 31 կետի՝ շենքերը շահագործման հանձնելուց կամ շուկա հանելուց առաջ պետք է ներկայացվեն սույն կանոնակարգով սահմանված էներգաարդյունավետության պահանջներին համապատասխանության գնահատման՝ «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան: Նույն բաժնի 34 կետում միաժամանակ նշվում է՝

Էներգաարդյունավետության սերտիֆիկատը տրամադրվում է էներգետիկ փորձաքննության (աուդիտ) հիման վրա, որը ներառում է էներգաարդյունավետությունն օպտիմալ կերպով բարելավելու վերաբերյալ առաջարկություններ՝ բացառությամբ այն դեպքի, երբ գործող էներգաարդյունավետության պահանջների համեմատությամբ այդ բարելավումը նպատակահարմար չէ:

Շենքերի ջեռուցման, օդափոխման համակարգերի, ինչպես նաև շենքերը պատող կոնստրուկցիաների էներգետիկ փորձաքննությունը (աուդիտ) իրականացվելու է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 31-ի N 1399-Ն որոշմամբ հաստատված պահանջներին համապատասխան:

Նոր կառուցվող բնակելի շենքը և դրանց պատող կոնստրուկցիաները նախատեսվում է կառուցել ըստ նշված կանոնակարգի(N 426-Ն որոշում) IV գլխի պահանջների՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության բնակլիմայական պայմանները, սենքերում համապատասխան միկրոկլիմային ներկայացվող Հայաստանի հանրապետությունում գործող նորմատիվա-տեխնիկական փաստաթղթերով սահմանված պահանջները.

Բնակելի համալիրի էներգաարդյունավետության և էներգախնայողության ապահովման նպատակով շենքերը կկառուցվեն.

- շենքի արտաքին պատերը երեսապատվելու են սրբատաշ տրավերտինե սալիկներով, պահպանելով հրակայուն և անջրաթափանց, գոլորշակայուն և գոլորշամեկուսիչ, ջերմամեկուսիչ նյութերի նորմերը,

- կատարվելու է դեկորատիվ սալիկապատում՝ ջերմամեկուսիչ շերտի ընտրությամբ, ելնելով բնակավայրի ջերմային ֆոնի առանձնահատկություններից,

- շենքերի միջտարածքային և բնակիչների կողմից օգտագործվող ընդհանուր մուտքերն ու ելքերը լինելու են ջերմամեկուսիչ և հերմետիկ փակվող դռներով և պատուհաններով,

- լուսավորությունը կատարվելու է լեդ տեսակի լամպերով:

Բնակելի համալիրը, ներառյալ ստորգետնյա հարկերը (թաքստոց) կահավորելիս առաջնորդվելու են ՀՀ կառավարության 12.04.2018թ N426-Ն որոշմամբ սահմանված պահանջներով,

- արտաքին լուսավորության, օդափոխության, ծխահեռացման համակարգերով, հակահրդեհային միջոցներով՝ կրակմարիչներով,

- էլեկտրամատակարարման և ծխահեռացման փականների ավտոմատ անջատիչներով, օդափոխության, հակածխային օդափոխության արտաձման համակարգերով,

- ջերմամեկուսիչ, օդափոխիչ, էներգախնայող բազմաթիվ այլ սարքավորումներով:

Շենքերի տանիքում՝ 1000մ² մակերեսի վրա տեղադրվելու են արևային վահանակներ, շենքի սպասարկման(վերելակների, արտաքին լուսավորության և այլն)՝ էլեկտրաէներգիայի խնայողության համար: Տեղադրվելու է 600վտ հզորության 236 հատ ընդհանուր քանակով արևային վահանակներ: Արևային վահանակների արտադրող էլեկտրաէներգիայի հզորությունը կազմելու է 100կվտ: Շենքի ծախսերը հոգալու նպատակով այն միանալու է շենքի սպասարկման գծին, տեղադրվելու է երկողմնափ հաշվիչ «ՀԵՑ» ՓԲԸ-ի սնուցման կետի մոտ: Արևային վահանակների տեղադրումը և հետագա սպասարկումն իրականացնելու է համապատասխան որակավորում ունեցող

կազմակերպության կողմից:

- Բացառվելու է վնասված վահանակների կուտակումը բնակելի համալիր տարածքում, տանիքում, բաց տարածքներում՝ աղբավայրերում:

9.11 Սոցիալական հարցեր

Բնակելի համալիրի շինարարության ընթացքում բացվելու են նոր աշխատատեղեր: Նախատեսվող աշխատողների առավելագույն քանակը շինհրապարում կազմելու է 26 մարդ, որից ինժեներատեխնիկական անձնակազմ՝ 3 մարդ, բանվորներ՝ 17 մարդ, մնացածը լինելու են մեքենավարներ և այլ նեղ մասնագիտության ունեցողներ՝ 6 մարդ:

Աշխատելու են 6 օր՝ 8 ժամյա հերթափոխային գրաֆիկով:

Շինարարության ընթացքում առաջանալու են հարակից տարածքի բնակիչների տեղաշարժի ժամանակավոր անհարմարություններ, որոնք հնարավոր է կանխարգելել կառավարման պլանով նախատեսված միջոցառումների կատարման միջոցով: Շինարարության ընթացքում այլ անձանց իրավունքների սահմանափակում կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ կարգի խախտում չի նախատեսվում:

9.12 Լանդշաֆտ

Գործունեության իրականացումը առաջացնելու է լանդշաֆտի լրացուցիչ ծանրաբեռնվածություն: Նախատեսվող գործունեության իրականացման տարածքներում (ազդեցության գոտում) լանդշաֆտի, բուսական ու կենդանական տեսակների, հողային և ջրային ռեսուրսների վրա հնարավոր վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում: Նախատեսված շինարարական աշխատանքների ազդեցությունը տարածքի վրա կլինի նվազագույն՝ կրելով սահմանափակ և կարճատև բնույթ:

9.13 Բարեկարգում և Կանաչապատում

Բնակելի համալիրի կառուցման ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների և վտանգավոր նյութերի հեռացում, բոլոր ժամանակավոր կառույցների ապամոնտաժում, ճանապարհների կարգաբերում, տարածքի բարեկարգում:

Կառուցապատման աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է նաև գործունեության ենթակա ազատ տարածքի՝ 1457մ² մակերեսի վրա կատարել կանաչապատման աշխատանքներ՝ ներբակային գոտում և հարակից տարածքներում: Բնակելի շենքի կանաչապատման աշխատանքները կատարվելու են ծառատնկման և սիզամարգերի միջոցով համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված կանաչապատման նախագծի:

Համաձայն կանաչապատման նախագծի, ընդհանուր կանաչապատման մակերեսը կազմում է 1457 մ² % (41.7 %): Բացի դա, նախատեսվում է 240 մ² տարածքում հետիոտնային անցումները իրականացնել գեոցանցի եղանակով:

Կանաչապատման նախագիծը ներկայացվել է համայնքապետարանի համաձայնեցմանը:

Ուսումնասիրելով տեղանքը նախատեսվում է տեղադրել ստորև նշված բույսերի տեսականին, համապատասխան քանակներով.

Ալբիցիա լենքորանյան – 8 հատ

Կատալպա սովորական – 4 հատ

Թխկի սրատերև - 7 հատ

Կաղնի շագանակատերև - 9 հատ

Լաբուռնում անագիրատերև (Ոսկե անձրև) – 16 հատ

Հուդայածառ կանադական – 8 հատ

Ֆորսիցիա – 4 հատ

Գիհի կազակական – 3 հատ

Ծաղկանոց (վարդեր) - 420 հատ (70 մ²)

Սիզամարգ – 1387 մ²

ՏՆԿՎՈՂ ԲՈՒՍԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Կաղնի շագանակատերև



արժեքավոր է:

Մինչև 15 մ բարձրությամբ, վրանաձև սաղարթով, տերևաթափ ծառ է: Բնի և բազմամյա ճյուղերի կեղևը մուգ է, խորը ճաքճքված: Բազմանում է սերմերով: Քիչ ցրտադիմացկուն է, վատ է տանում երաշտը և օդի չորությունը: Չափազանց գեղազարդ է վրանաձև, հզոր սաղարթով, տերևներով և պտուղներով: Կանաչապատման մեջ կարելի է օգտագործել խմբերում, ծառուղիներում, նաև որպես սոլիտեր: Բնափայտը շատ

Թխկի սրատերև



Սրատերև կարմիր թխկին տերևաթափ, արագ աճող ծառ է մինչև 15-20 մ բարձրությամբ և 11 մ լայնությամբ: Ունի բրգաձև, թափվող սաղարթ: Տերևները թիակաձև, կարմրավուն, ամռանը՝ մուգ կանաչ: Տերևների աշնանային գույնը կախված է եղանակի և հողի պայմաններից, ջերմաստիճանի տատանումից և այլն: Ծաղկում է ապրիլի վերջին, շատ ավելի վաղ, մինչ տերևների ի հայտ գալը: Սիրում է արև, բայց կարող է հանդուրժել նաև մասնակի ստվեր: Խոնավասեր: Այն աճում է թեթև և միջին հողի վրա: Բավականին ցրտադիմացկուն է:

Կատալպա սովորական



Մինչև 10 մ բարձրությամբ և բնի 1-1,2 մ տրամագծով, վրանաձև սաղարթով տերևաթափ ծառ է: Տերևները լայն ձվաձև են՝ 10-20 սմ երկարությամբ և 10-15 սմ լայնությամբ: Ծաղիկները դեղնավուն երանգ ունեն, ներսից նարնջագույն շերտերով և մուգ մանուշակագույն բծերով: Գեղազարդությունն արտահայտվում է չափազանց մեծ տերևներով և լուսամփոփի նման չքնաղ ծաղկաբույլերով: Կանաչապատման բնագավառում կարելի է օգտագործել որպես սոլիտեր և որպես խումբ, գրեթե ամենուրեք, բացառությամբ լեռնային գոտիների:

Հուդայածառ կանադական



Մինչև 8 մ բարձրությամբ վրանաձև սաղարթով, տերևաթափ ոչ մեծ ծառ է: Բնի կեղևը բաց մոխրագործավուն է: Տերևները կլորավուն են: Ծաղիկները վարդագույն են կամ բուսորամանուշակագույն, հավաքված փնջերում: Չորադիմացկուն է և լուսասեր: Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում աճում է շնորհիվ իր բարձր ցրտադիմացկունությամբ: Գեղազարդ է սաղարթով, տերևներով, ծաղիկներով և լոբաձև պտուղներով:



Գիհի կազակական

Մինչև 1,5-3,5 մ տրամագծով և 70 սմ բարձրությամբ փովող կամ գետնատարած, մշտադալար երկտուն թուփ է: Ասեղնատերևները ճյուղերի վրա երեքական են, նշտարանման, կանաչ, սուր, հաճելի բուրմունքով: Լուսասեր է, ցրտադիմացկուն, հողի նկատմամբ քիչ պահանջկոտ, ունի հողապաշտպան նշանակություն: Գեղազարդությունը շատ բարձր է գնահատվում՝

մշտադալար է, ունի չափազանց գեղեցիկ հաբիտուս: Պիտանի է հատկապես թեթև լանջերը կանաչապատելիս, ինչպես նաև քարապարտեզների և ալպիական բլրակների ձևավորման համար:

Ֆորսիցիա Մինչև 3 մ բարձրությամբ տերևաթափ թուփ է: Տերևադասավորությունը



հակադիր է: Տերևները երկարավուն ձվաձև են: Ծաղիկները զանգականման են, վառ դեղին, հավաքված փնջերով: Ծաղիկները բացվում են թփի տերևակալումից բավականին շուտ, որի շնորհիվ էլ ամբողջ թուփը գեղեցիկ դեղին գույն է ստանում: Ծագումը հիբրիդային է, ստացվել է ֆորսիցիայի վառ կանաչ և կախված տեսակների խաչասերումից: Լուսասեր է, ցրտադիմացկուն, խոնավասեր, հողի նկատմամբ պահանջկոտ չէ: Չափազանց գեղազարդ թուփ է, վառ դեղին, զանգականման

առատ ծաղիկներով: Նպատակահարմար է կիրառել կանաչապատման բնագավառում որպես սոլիտեր և խմբերով, ինչպես նաև որպես կենդանի ցանկապատ:



Լաբուռնում անագիրատերև - Տերևաթափ ծառ է, մինչև 7 մ բարձրությամբ: Ծաղիկները ոսկեդեղին են, հավաքված դեպի ցած կախված: Աճում է մինչև 1500 մ բարձրությունների վրա:



Ալբիցիա լենքորանյան – Ալբիցիան միջին աճողականությամբ տերևաթափ ծառ է, մինչև 10-15 մ բարձրությամբ, որպես կանոն հովհանոցաձև սաղարթով: Տերևադասավորությունը հերթադիր է, տերևները՝ կենտ փետրածև:



Սիզամարգ 1 ք.մ. տարածքում նախատեսվում է ցանել 0,04 կգ խոտի սերմ, որը կկազմի 1627 ք.մ. տարածքի համար ընդամենը 65.1 կգ խոտի սերմ: Նախընտրելի է <<ռեյգրասս>> տեսակի խոտի սերմ, որն առավել հարմարված է Երևանի բնակլիմայական պայմաններին:

Կանաչապատման սխեման ներկայացված է սույն հաշվետվության Հավելված 8-ում:

Տարածքի նախապատրաստական աշխատանքները


Նախքան ծառատնկման աշխատանքների սկսելն անհրաժեշտ է կանաչապատվող տարածքում իրականացնել հետևյալ ագրոմելիորատիվ միջոցառումները.

- Ոռոգման համակարգի անցկացում,
- Համաձայն կանաչապատման նախագծի համարակալված ցցափայտերի օգնությամբ ծառերի ու թփերի փոսերի տեղի նշահարում,

- Ծառերի համար 1մ խորությամբ և 50սմ լայնության փոսերի պատրաստում,
- Թփերի համար 50-60սմ խորությամբ և 40սմ լայնության փոսերի պատրաստում,
- Բոլոր փոսերի մոտ համարժեք ծավալի հողախառնուրդի կուտակում. պատրաստված 3 բաժին սևահողից, 1 բաժին կարմիր ավազից, 1 բաժին տորֆահողից և 0.5 բաժին փտած գոմաղբից, վրան ավելացնել մուլ:

Ագրոտեխնիկական միջոցառումների ավարտից հետո խորհուրդ է տրվում նշված տարածքում ծառատունկն իրականացնել ուշ աշնանը կամ վաղ գարնանը: Տնկանյութը ծառերի դեպքում պետք է լինի առնվազն 2.0մ, թփերի դեպքում՝ առնվազն 0,8մ, պատնեշային թփերի (տոսախ) դեպքում՝ առնվազն 0,5մ: Տնկանյութը կարելի է ձեռք բերել անտառային և դեկորատիվ տնկարաններից: Որպեսզի պաշտպանիչ կանաչ գոտում խոտածածկ առաջանա նախատեսվում է ցանել ռեյգրաս տեսակի խոտի սերմ՝ 1 ք.մ.-ում 0,04 կգ: Նախատեսվում է նաև հիմնել ծաղկանոցներ 70 ք.մ տարածքում, 1ք.մ-ում տնկելով թզուկ վարդի 6 թուփ: Ծառատնկման հաջորդ 3 տարիներին խորհուրդ է տրվում վեգետացիայի ընթացքում 2-3 անգամ իրականացնել խնամքի (քաղիան, փխրեցում) աշխատանքներ, անհրաժեշտության դեպքում նաև վնասատուների նկատմամբ թունաքիմիկատներով կամ կենսաբանական պայքարի միջոցառումներ: Նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց: Տարածքը նախատեսվում է ոռոգել ցնցուղային սարքավորումներով, որոնք միմյանց հետ կապվում են ստորգետնյա պոլիէթիլենային խողովակներով:

Ստորգետնյա ավտոկայանատեղիի տանիքի լայնական կտրվածք՝ դրենաժային համակարգի նկարագրությամբ



Գեոցանցի լայնական կտրվածք



Կանաչապատման նպատակով օգտագործվելու է տարածքում առկա բուսահողը, ըստ անհրաժեշտության լրացուցիչ բուսահող ձեռք կրելվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ պայմանագրային հիմունքներով:

Կանաչապատ տարածքի 1 մ²-ի մեկ ոռոգման համար ջրի ծախսի նորման կազմում է 4-6 լ/ մ²:

Տեղանքի կլիմայական պայմաններին համապատասխան ընդունում ենք 6 լ/ մ² արժեքը.

Սիզամարգի ոռոգում՝ $n_6 = 0.006 \text{ մ}^3/\text{մ}^2$

Ոռոգման համար ջրապահանջը որոշվում է՝

$$W_{u.3} = (n_6 \times S) \times K \times t$$

որտեղ՝ S – ոռոգվող տարածքի մակերեսն է, սիզամարգի և ծաղկանոցների գումարային մակերեսը՝ $S_1 = 1457 \text{ մ}^2$,

K – ոռոգման օրական հաճախականությունն է, $K = 1$

t - ոռոգման օրերի պլանավորված թվաքանակն է, $t = 175$ օր

$$W_{u.3} = (0.006 \times 1457) \times 1 \times 175 = 1529.85 \text{ մ}^3/\text{տարի}$$

Նախքան ծառատնկման աշխատանքների սկսելն անհրաժեշտ է կանաչապատվող տարածքում իրականացնել հետևյալ ագրոմելիորատիվ միջոցառումները.

- Ոռոգման համակարգի անցկացում,
- Համաձայն կանաչապատման նախագծի համարակալված ցցափայտերի օգնությամբ ծառերի ու թփերի փոսերի տեղի նշահարում,
- Ծառերի համար 1մ խորությամբ և 50սմ լայնության փոսերի պատրաստում,

- Թփերի համար 50-60սմ խորությամբ և 40սմ լայնության փոսերի պատրաստում,
- Բոլոր փոսերի մոտ համարժեք ծավալի հողախառնուրդի կուտակում. պատրաստված 3 բաժին սևահողից, 1 բաժին կարմիր ավազից, 1 բաժին տորֆահողից և 0.5 բաժին փտած գոմաղբից, վրան ավելացնել մուլչ:

Ագրոտեխնիկական միջոցառումների ավարտից հետո խորհուրդ է տրվում նշված տարածքում ծառատունկն իրականացնել ուշ աշնանը կամ վաղ գարնանը: Տնկանյութը ծառերի դեպքում պետք է լինի առնվազն 2.0մ, թփերի դեպքում՝ առնվազն 0,8մ, պատնեշային թփերի (տոսախ) դեպքում՝ առնվազն 0,5մ: Տնկանյութը կարելի է ձեռք բերել անտառային և դեկորատիվ տնկարաններից: Որպեսզի պաշտպանիչ կանաչ գոտում խոտածածկ առաջանա նախատեսվում է ցանել ռեյզրաս տեսակի խոտի սերմ՝ 1 ք.մ.-ում 0,04 կգ: Նախատեսվում է նաև հիմնել ծաղկանոցներ 70 ք.մ տարածքում, 1ք.մ-ում տնկելով թզուկ վարդի 6 թուփ: Ծառատնկման հաջորդ 3 տարիներին խորհուրդ է տրվում վեգետացիայի ընթացքում 2-3 անգամ իրականացնել խնամքի (քաղիան, փխրեցում) աշխատանքներ, անհրաժեշտության դեպքում նաև վնասատուների նկատմամբ թունաքիմիկատներով կամ կենսաբանական պայքարի միջոցառումներ: Նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց: Տարածքը նախատեսվում է ոռոգել ցնցուղային սարքավորումներով, որոնք միմյանց հետ կապվում են ստորգետնյա պոլիէթիլենային խողովակներով:

10. Շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումները(Բնապահպանական կառավարման պլան)

Ներկայացված հաշվետվությամբ նախատեսվում է շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունների մեղմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ՝ բնապահպանական կառավարման պլան, որոնց ճիշտ կիրառման արդյունքում գործունեության իրականացման հետևանքները շրջակա միջավայրի վրա կլինեն նվազագույնը:

10.1 Օդային ավազան

Արտանետումների քանակը մեղմելու, մթնոլորտային օդի որակի վրա հնարավոր ազդեցությունը կրճատելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում՝ գրունտի խոնավեցում և ճանապարհների ջրցան,
- շինհրապարակը ցանկապատելու է, կառուցվող շենքերը կծածկվեն համապատասխան բարձրության ցանցով՝ փոշու արտանետումները նվազեցնելու նպատակով,

- մեքենաները շին. հրապարակ մտնելու և դուրս են գալու մաքուր վիճակում,
 - գործունեության վայր շինանյութերի և սորուն նյութերի տեղափոխումը կատարել փակ ծածկ ունեցող մեքենաներով կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակել անջրթափանց թաղանթով,
 - շինհրապարակում սորուն նյութերը պահվել ժամանակավոր պահեստներում կամ ժամանակավոր ծածկի տակ՝ ծածկվելու են անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,
 - բացառել տարածքում թափոնների բաց այրումը,
 - օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործել միայն սարքին վիճակում,
 - բացառել անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը: Այդ նպատակով իրականացվելու են պարբերաբար ստուգումներ:
- Նշված միջոցառումների իրականացման արդյունքում օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի նախատեսվում:

10.2 Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսներն աղտոտումից պահպանելու համար նախատեսվում է.

- տարածքում առկա բուսահողը հանվելու, տեղափոխվելու և պահվելու է տարածքի հյուսիս-արևմտյան հատվածում, մինչև 2մ բարձրությամբ, շինտեխնիկայի տեղաշարժից հեռու, ժամանակավոր պարպսի տակ՝ ապահովելով հողի բերրի շերտի պահման ՀՀ կառավարության N1396-Ն որոշման պահանջները,
- հողային աշխատանքների արդյունքում հանված հողային գրունտը մինչև օգտագործելը պահվելու է շինհրապարակում, առանձնացված վայրում՝ ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,
- շինարարական աշխատանքների ընթացքում հանված հողային գրունտն օգտագործվելու է տարածքի հարթեցման և բարեկարգման նպատակով,
- շինհրապարակն ապահովված է կլինի արտահոսքը կանխող/մաքրող սարքավորումներով՝ հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար,
- շինարարական նյութերը կտեղադրվեն հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա,
- նվազագույնի է հասցվելու շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը,
- ավտոմեքենաները շինհրապարակից դուրս են գալու միայն մաքուր վիճակում՝ շրջակա տարածքը չաղտոտելու նպատակով,
- շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կկատարվի տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում,
- այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար տեղադրվելու է ավազ կամ մանրախիճ,
- մեքենաներից և սարքավորումներից վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսքի դեպքում, փռված ավազը կամ մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան

աղբավայր, այն փոխարինելով նորով,

- մեքենաների անիվների լվացումը կատարել անիվների լվացման հարթակում,
- բոլոր մեքենաների անիվների և թափքերի մաքրումը կատարել մինչև վերջիններիս շինհրապարակից դուրս գալը:

10.3 Ջրային ռեսուրսներ

Գործունեության իրականացման շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելու նպատակով նախատեսվում է.

- փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր,
- անձրևաջրերը և շինարարական հոսքաջրերը հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող հոր,
- ջրցանման համար կօգտագործվի միայն տեխնիկական որակի ջուր,
- տեխնիկական ջուրը կմատակարարվի լիցենզիա ունեցող կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով, որը կկնքվի շինարարության սկզբում՝ Կապալառու կազմակերպությունը,
- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կետերում,
- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում՝ բետոնախառնիչ մեքենաներով,
- բետոնանյութի լցվածությունն ապահովել այնպես, որպեսի բետոնանյութը տեղափոխման ժամանակ չթափվի ճանապարհներին՝ երթեկությանը չխոչընդոտելու և ասֆալտածածկը չվնասելու համար,
- ստորգետնյա կոնստրուկցիաները ջրամեկուսացնելու նպատակով օգտագործվող ջրամեկուսիչ նյութերը պետք է համապատասխանեն համապատասխան չափորոշիչներին՝ գրունտային ջրերի հետ շփման արդյունքում վտանգավոր նյութեր վերջինիս մեջ չներթափանցելու նպատակով,
- օգտագործվող ջրամեկուսիչ նյութերը չպետք է պարունակեն սնդիկ պարունակող կամ այլ քայքայիչ նյութեր:

Կեղտաջրերի հեռացման համար նախատեսվում է.

- շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող սանհանգույցից՝ բիոզուգարանից,
- շինարարական հոսքաջրերի համար կառուցվելու է ժամանակավոր սեպտիկ հոր,
- բիոզուգարանի և սեպտիկ հորի մաքրումը կատարվելու է մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով,

-շինաշխատանքների ավարտից հետո բիոգուգարանը տեղափոխվելու է Կապալառու կազմակերպության կողմից:

Շահագործման փուլում բազմաբնակարան բնակելի շենքի ջրամատակարարման համակարգը միացվելու է քաղաքային ջրատարին: Իսկ ջրահեռացման համակարգը՝ քաղաքային ջրահեռացման ցանցին:

10.4 Կենսաբազմազանություն

Գործունեության իրականացումը շրջակա միջավայրի կենսաբազմազանության վրա հնարավոր ազդեցություն չի ունենալու, այնուամենայնիվ նախատեսվում են որոշակի միջացառումներ.

- գործունեության և հարակից տարածքում ընկերության կողմից պարբերաբար կատարվելու է մոնիթորինգ առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներով,

- գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում՝ դրանց պահպանության նպատակով, ընկերությունը տեղեկացնելու է համապատասխան պատասխանատու գերատեսչություններին,

- աշխատանքներն իրականացնել բացառապես ցերեկային ժամերին՝ տարածքում հնարավոր գոյություն ունեցող որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար

- քանի տարածքի մոտակայքում հանդիպում է ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված «Բուխինգերա անութային» կրիտիկական վիճակում գտնվող տեսակը, ուստի ելնելով ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի հուլիսի 31-ի «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման տվյալ տեսակին հանդիպելու պարագայում այդ տարածքը կնշահարվի, այդ հատվածում շինտեխնիկայի տեղաշարժը կարգելվի մինչև լիազոր մարմնի կողմից համապատասխան միջոցառումներ իրականացնելը:

10.5 Թափոններ

Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները հողային և ջրային ռեսուրսների վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքների ժամանակ գործունեության տարածքը և շրջակա միջավայրը զերծ է պահել թափոնների կուտակումներից,

- քանդման արդյունքում առաջացած թափոնները տեսակավորել, առանձնացնել, առանձին թափոնատեսակները՝ մետաղական ամսեր, փայտի մանցորդներ, տանիքի ծածկ և այլն, հանձնել համապատասխան մասնագիտական կազմակերպություններին,
- առանձին պիտանելի թափոններն օգտագործվելու են շինարարության փուլում,
- շին հրապարակի տարածքում կհստակեցվի շին աղբի նախնական կուտակման վայրը,

- շինարարական թափոնները՝ շինաղբ, բետոնյա մնացորդներ, պարկեր և այլն, կհավաքվեն անջրթափանց պոլիէթիլենային պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր, քանի որ տարածաշրջանում չկան կազմակերպված սանիտարական աղբավայրեր,

- մետաղական մասերն կառանձնացվեն և որպես մետաղի ջարդոն կհանձնվեն հատուկ մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով,

- կառուցապատման փուլում կենցաղային աղբը կուտակվելու է 2 հատ 1,5x1մ³ չափերի պլաստմասե աղբահավաք տարողությունների մեջ,

- կենցաղային աղբի հեռացումը կատարվելու է կանոնավոր՝ ըստ անհրաժեշտության՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով,

- շինաղբի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկով ապահովված բեռնատարներով կամ բեռնատարները ծածկվելու են անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,

- բացառել աղբի կուտակումը շինհրապարակից դուրս՝ այլ բնակելի և հասարակական տարածքներում,

- շինարարական աշխատանքների ավարտից հետո շինարարական նյութերի մնացորդները, վտանգավոր նյութերը/սուսինձի, ներկի մնացորդներ/ և այլն հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են Կապալառուի կողմից:

Շահագործման փուլում կենցաղային աղբի կուտակման համար նախատեսվում է տեղադրել 3 հատ 1,5x1մ³ տարողության պլաստմասե աղբամաններ, ինչպես նաև տեսակավորման աղբամաններ:

10.6 Պատմամշակութային և բնության հուշարձաններ

Շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմնին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:

10.7 Աղմուկ և թրթռում

Շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- կառուցապատման տարածքում ձայնակլանիչ նյութերի և կոնստրուկցիաների կիրառում,
- շինարարական աշխատանքներում ներգրավվելու են ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ,
- տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործել սարքին վիճակում,
- պարբերաբար կստուգվեն և կկարգաբերվեն տրանսպորտային միջոցների շարժիչները,
- բացառել շինարարության ընթացքում օգտագործվող մեքենաների կայանումը բնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ,
- օգտագործվող շին տեխնիկան և մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով,
- պահպանել աղմուկի, վիբրացիայի, արտանետվող գազերի թույլատրելի նորմերը:

Շահագործման փուլում բնակելի շենքում նախատեսվում է.

- օդափոխման և օդի լավորակման համակարգերում աղմուկի խլացուցիչների կիրառում,
- օգտագործվող ձայնամեկուսիչ, ձայնակլանիչ, թրթռամարիչ նյութերի օգտագործում՝ առաջնորդվելով համապատասխան մարմինների եզրակացություններով:

10.8 Արտակարգ իրավիճակներ

Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է.

- կառույցների հիմքերի փոսորակները բացելուց և նախագծային նիշերին հասնելուց հետո՝ պարտադիր է ինժեներ-երկրաբանի կողմից հիմնափոսի զննումը և համապատասխան մասնագետի (երկրաբան) կողմից կազմված եզրակացությունը,
- կտեղադրվեն տեղեկատվական ցուցանակներ, որը ներառելու է շենքի նախագծողի, կապալառուի և այլ պատասխանատու անձանց (հեռախոսահամար), շինթույլտվության, շինարարության սկզբի և ավարտի վերաբերյալ տեղեկատվություն:
- շինհրապարակը կկազմակերպվի հակահրդեհային անվտանգության պաշտպանության կանոններին համապատասխան, տեղադրվելու է ջրի բաք՝ հրդեհամարման նպատակով,
- շինհրապարակն ապահովված է լինելու հակահրդեհային կրակմարիչներով, տեսահսկման և ազդանշանային համակարգերով, հակահրդեհային միջոցառումների վահանակներով,
- շինհրապարակն, ինչպես նաև բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունները ժամանակ առ ժամանակ կմաքրվեն հրդեհավտանգ և պայթյունավտանգ թափոններից և աղբից,

- հակահրդեհային միջտարածությունները չօգտագործել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

- բաց են լինելու նախատեսված ջրադբյուրների ճանապարհները, տեղադրվելու են դրանց մոտեցման համապատասխան ցուցանակներ,

- տեղադրվելու են ծայնային ազդանշաններ, հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ՝ վթարների կանխարգելման համար,

- հեղուկ և վտանգավոր նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,

- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցվելու են:

Շահագործման փուլ. Շահագործման փուլում արտակարգ իրավիճակների դեպքում նախատեսվում է.

- բնակելի համալիրի ստորգետնյա հարկերը ծառայելու են բնակչության համար որպես թաքստոց՝ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանական նպատակներով,

- ստորգետնյա հատվածում՝ թաքստոցի համար նախատեսվում է վթարային ելք,

- շահագործման փուլում բազմաբնակարան բնակելի համալիրն ապահովված է լինելու հակահրդեհային կրակմարիչներով(103հատ), օդափոխության, ավտոմատ հրշեջ ազդանշանային՝ հակաձխային, արտածման համակարգերով, էվակուացիոն ուղիներով և ելքերով,

- պահպանվելու են հակահրդեհային մուտքերը՝ հրշեջ մեքենաների շրջադարձի համար,

- աստիճանավանդակի, վերելակի դռները լինելու են հակահրդեհային՝ ինքնափակվող:

10.9 Մարդու առողջություն, աշխատանքի անվտանգություն

Շինարարության փուլում աշխատողների աշխատանքի կազմակերպման և աշխատանքի անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է.

- պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, շինհրապարակում՝ անվտանգության տեխնիկայի կանոնները անցումները, վտանգավոր զոնաները կցանկապատվեն, ՀՀ Առողջապահության նախարարի 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,

- ապահովվել աշխատողների անվտանգությունը բարձրության վրա,

- մինչև աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդներն անցնելու են հրահանգավորում՝ ըստ աշխատանքի անվտանգության կանոնների,

- բանվորական խմբերը լինելու են բազմապրոֆիլ և մասնագիտացված,

անցկացվելու են ուսուցման և հրահանգավորման դասընթացներ,

- ստուգվելու են առասանիչ բանվորների գիտելիքները, տեղադրվելու են առասանման եղանակների և ձևերի նկարագրությամբ ցուցանակներ,

- աշխատողների համար ապահովել 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, անհատական և պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ, կոշիկ և այլն), էլեկտրական սարքավորումների հետ աշխատողները՝ դիէլեկտրիկ գորգով և ձեռնոցներով,

- ապահովել աշխատողների համար սանիտարական և հանգստի պայմաններով (հանգստի սենյակ, հանդերձարան, լվացարան և այլն)՝ անհրաժեշտ կահավորանքով (լվացարան, աթոռ, սեղան, ջեռուցիչ և այլն),

- շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրել աշխատանքային պայմանների, հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ՝ տեղեկատվական և հակահրդեհային վահանակներ, վտանգն ազդարարող տեսողական պաստառներ, ճանապարհային երթևեկության, ինչպես նաև կողմնակի մարդկանց մուտքն արգելող նշաններ,

- վերահսկել աշխատող սարքավորումների պիտանելիությունը, բացառել գործնելության վայրում խոտանված բեռնիչ սարքերի կուտակումները,

- վերահսկել մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառել մեքենաների կուտակումները,

- նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը՝ հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,

- բացառել ավտոամբարձիչի սլաքի աշխատանքը՝ սահմանազատված սահմանից դուրս,

- բացառել բեռի ամբարձիչից կախված մնալը ամբարձիչից աշխատանքի դադարի ժամանակ,

- բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ օգտագործվող բեռնամբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին, երթևեկության արագությունը շինհրապարակում չպետք է գերազանցի 5կմ/ժ,

- տեղադրել լրացուցիչ լուսավորման սարքեր՝ շինհրապարակի լուսավորության համար,

- շինհրապարակի լուսավորությունը ապահովել հավասարաչափ՝ լուսավորության 2 լյուքսից ոչ պակաս,

- շենքի ներսում եռակցման և ներկման աշխատանքները կատարել օդափոխության պայմաններում, կատարել հոսանքատար մասերի մեկուսացում,

- վարել տեխնիկական հսկողության ամփոփիչ և անհատական մատյաններ՝ տեխնիկական վերահսկողության իրականացման համար,

- շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացնել 2020թ. հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N87 արձանագրության պահանջներին համապատասխան, աշխատողներն ունենալու են համապատասխան բանվորական արտահագուստ:

Շահագործման փուլ.

Շահագործման փուլում բնակելի համալիրն ապահովված է լինելու հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժվելու համար անհրաժեշտ պայմաններով՝ ՀՀՇՆ 1/-11.07.01-2006 շինարարական նորմերին համապատասխան:

Մասնավորապես նախատեսվում է.

- բնակելի համալիրն ապահովված է լինելու հաշմանդամների պահանջներին հարմարեցվող ունիվերսալ, շարժական տարրերով,
- վերգետնյա և ստորգետնյա անցումներ, թեքահարթակներ,
- տարածքի մուտքը կահավորվել տարածքի վերաբերյալ հաշմանդամների համար մատչելի տեղեկատվության տարրերով:

10.10 Սոցիալական հարցեր

Շինարարության փուլում հնարավոր սոցիալական խնդիրներից խուսափելու համար նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները կատարել սահմանված ժամերին՝ ցերեկը,
 - բացառել շինհրապարակից դուրս կենցաղային աղբի և շինաղբի, մեքենաների կուտակումները,
 - գործելու է բողոքների արձագանքման ընթացակարգը:
- Բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցումը նպաստելու է.
- բնակչության բնակարանով ապահովվածությանը, բնակարանային կարիքների բավարարմանը:

10.11 Լանդշաֆտ

Լանդշաֆտի վրա հնարավոր կլինի նվազեցնել շինարարության փուլում՝ բնապահպանական կառավարման պլանով նախատեսված միջոցառումների արդյունքում:

-Նախատեսվող բնակելի համալիրը ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն է:

-Բացառել նախատեսվող տարածքից դուրս կառուցապատման այլ աշխատանքները:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարել տարածքի բարեկարգում.

- շինարարական սարքավորումներն ապամոնտաժվելու են,
- շինարարական հրապարակը մաքրվելու է թափոններից, վերականգնվելու է տարածքը,
- կատարվելու են գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ:

10.12. Բարեկարգում և կանաչապատում

Բարեկարգման և կանաչապատման նպատակով նախատեսվում է.

- կառուցապատումից ազատ տարածքի հարթեցում և բարեկարգում, ներբակային ճանապարհների կառուցում,

- կանաչ զանգվածի ոռոգում՝ բուսականության աճը և կաջողականությունն ապահովելու նպատակով,

- նորատունկ բուսականության, ծառերի չկաջելու դեպքում նոր ծառատեսակներով փոխարինում:

11. Մոնիթորինգ

Մոնիթորինգը՝ ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարման, դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով Պատվիրատուի և հսկողություն իրականացնող այլ մարմինների կողմից նախատեսվող կանոնավոր հսկողություն է: Գործունեության իրականացման ընթացքում նախատեսվում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմանն ուղղված մոնիթորինգ:

Այդ նպատակով նախատեսվում է.

- համապատասխան մասնագետների կողմից ստուգայցերի կատարում,
- բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության, տեխնիկական վերահսկողության իրականացում՝ ամենօրյա ռեժիմով,
- բոլոր աշխատողների աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների ընթացակարգի մասին իրազեկում,
- տեխնիկական վերահսկողություն իրականացնող կազմակերպությունը կամ անձը պարտավոր է ժամանակին Պատվիրատուին և/կամ նախագծային կազմակերպությանը տեղեկացնել նկատած անհամապատասխանությունները,
- շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի, հակահրդեհային պահանջների՝ ՀՀԾՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգության» նորմերի համապատասխանության խստիվ պահպանման հսկողություն,
- համապատասխան պայմանագրերի հիման վրա, թափոնների տեղափոխման վերահսկում,
- կապալառուի կողմից նախագծով նախատեսված բոլոր աշխատանքների պատշաճ իրականացում, վերահսկում,
- ամբարձիչի ժամանակի և բեռնունակության օգտագործման պարբերաբար և դիտողական ստուգում,
- շին տեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգումներ՝ անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը բացառվելու նպատակով,
- արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձի նշանակում, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում,
- շինարարության իրականացման ժամանակացույցի պահպանում,

- բարեկարգման և կանաչապատման աշխատանքների իրականացման վերահսկում, ապահովելով կանաչապատ տարածքի համապատասխանությունը կանաչապատման նախագծին,
- կանաչ զանգվածի վիճակի մշտադիտարկում, ծառերի կաչողականության ուսումնասիրություն՝ ծառերի աճն ապահովվելու նպատակով:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվելու են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում:

12. Բողոքների ընթացակարգ

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կներդրվի բողոքների արձագանքման մեխանիզմ (ԲԱՄ), որը հիմնականում ուղղված կլինի շահագրգիռ կողմերի և ազդակիր հասարակության կողմից իրականացվող գործունեության վերաբերյալ դժգոհությունների ստացմանը, գնահատմանն ու լուծմանը:

Շինարարական բոլոր տեղամասերում ապահովվելու է կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը:

13. Բնապահպանական կառավարման պլան

Բնապահպանական կառավարման պլանը սահմանում է գնահատման հաշվետվությունում նշված գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի բաղադրիչների՝ օդային ավազան, հողային, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության, թափոնների կառավարման, արտակարգ իրավիճակների, աղմուկի մակարդակի, մարդու առողջության և աշխատանքի անվտանգության հետ կապված հնարավոր ազդեցությունների մեղմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնց ճիշտ կիրառման արդյունքում գործունեության իրականացման հետևանքները շրջակա միջավայրի վրա կլինեն նվազագույնը:

Բնապահպանական միջոցառումների (բնապահպանական կառավարման) պլան

1	Օդային ավազան	<p>Օդային ավազան արտանետումների հնարավոր ազդեցությունը կրճատելու և մեղմելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում՝ գրունտի խոնավեցում և ճանապարհների ջրցան, - շինհրապարակը ցանկապատվելու է, շենքերը կծածկվեն համապատասխան ցանցով՝ փոշու արտանետումները նվազեցնելու նպատակով, - մեքենաները շին. հրապարակ մտնելու և դուրս են գալու մաքուր վիճակում, - գործունեության վայր շինանյութերի և սորուն նյութերի տեղափոխումը կատարել փակ ծածկ ունեցող մեքենաներով կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակել անջրթափանց թաղանթով, - շինհրապարակում սորուն նյութերը պահել ժամանակավոր պահեստներում կամ ժամանակավոր ծածկի տակ՝ ծածկել անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով, - բացառել տարածքում թափոնների բաց այրումը, - օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործել միայն սարքին վիճակում, 	Կապալառու	Գ. Գրիգորյան
---	----------------------	---	------------------	---------------------

		<p>- բացառել անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը: Այդ նպատակով իրականացվելու են պարբերաբար ստուգումներ:</p>		
2	Հողային ռեսուրսներ	<p>Գործունեության իրականացման հետևանքով հողային ռեսուրսներն աղտոտումից պահպանելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - տարածքում առկա բուսահողը հանվելու, տեղափոխվելու և պահվելու է տարածքի հյուսիս-արևմտյան հատվածում, մինչև 2մ բարձրությամբ, շինտեխնիկայի տեղաշարժից հեռու, ժամանակավոր պարպսի տակ՝ ապահովելով հողի բերրի շերտի պահման ՀՀ կառավարության N1396-Ն որոշման պահանջները, - շինարարական աշխատանքների ընթացքում հանված հողային գրունտն օգտագործվելու է տարածքի հարթեցման և բարեկարգման նպատակով, - հողային աշխատանքների արդյունքում հանված հողային գրունտը մինչև օգտագործելը պահվելու է շինհրապարակում՝ ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով, - շինհրապարակն ապահովված է լինելու արտահոսքը կանխող/մաքրող սարքավորումներով՝ հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար, - շինարարական նյութերը տեղադրել 	Կապալառու	Գ. Գրիգորյան

		<p>հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա,</p> <ul style="list-style-type: none"> - նվազագույնի է հասցվելու շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը, - շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կատարվելու է տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում, - այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար տեղադրվելու է ավագ կամ մանրախիճ, - մեքենաներից և սարքավորումներից վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսքի դեպքում, փռված ավագը կամ մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր և այն փոխարինվելու է նորով, - մեքենաների անիվների լվացումը կատարել անիվների լվացման հարթակում. - բոլոր մեքենաների անիվների և թափքերի մաքրումը կատարվելու է մինչև շինհրապարակից վերջիններիս դուրս գալը: 		
3	Ջրային ռեսուրսներ	<p>Գործունեության իրականացման ընթացքում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են.</p> <ul style="list-style-type: none"> - փոշենստեցման համար ջրցանը 	Կապալառու	Գ. Գրիգորյան

	<p>կատարվելու է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր,</p> <ul style="list-style-type: none"> - անձրևաջրերը և շինարարական հոսքաջրերը հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող հոր, - ջրցանման համար օգտագործվելու է միայն տեխնիկական որակի ջուր, - տեխնիկական ջուրը կմատակարարվի լիցենզիա ունեցող կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով, որը կկնքվի շինարարության սկզբում՝ Կապալառու կազմակերպությունը, - շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում՝ բետոնախառնիչ մեքենաներով, -բետոնանյութի լցվածությունն ապահովել այնպես, որպեսի բետոնանյութը տեղափոխման ժամանակ չթափվի ճանապարհներին՝ երթեկությանը չխոչընդոտելու և ասֆալտածածկը չվնասելու համար, -գրունտային ջրերից կոնստրուկցիաների պահպանման նպատակով կիրառվող վտանգավոր քիմիական նյութերի օգտագործման բացառում: <p>Կեղտաջրերի հեռացման համար նախատեսվելու է.</p> <ul style="list-style-type: none"> - շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող 	
--	---	--

		<p>սանհանգույցից՝ բիոզուգարանից,</p> <ul style="list-style-type: none"> - շինարարական հոսքաջրերի համակկառուցվի սեպտիկ հոր, - բիոզուգարանի, սեպտիկ հորի մաքրումը կատարվելու է մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով, - շինաշխատանքների ավարտից հետո այն ապամոնտաժվելու է և տեղափոխվելու է Կապալառու կազմակերպության կողմից: <p>Շահագործման փուլում</p> <p>բազմաբնակարան բնակելի համալիրի ջրամատակարարման համակարգը միացվելու է քաղաքային ջրատարին: Իսկ ջրահեռացման համակարգը՝ քաղաքային ջրահեռացման ցանցին:</p> 		
4	Թափոններ	<p>Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները հողային և ջրային ռեսուրսների վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - շինարարական աշխատանքների ժամանակ գործունեության տարածքը և շրջակա միջավայրը զերծ է պահել թափոնների կուտակումներից, - շին հրապարակի տարածքում կհստակեցվի շին աղբի նախնական կուտակման վայրը, - շինարարական թափոնները՝ շինաղբ, բետոնյա մնացորդներ, պարկեր և այլն, կհավաքվեն անջրթափանց պոլիէթելենային 	Կապալառու	Գ. Գրիգորյան

		<p>պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր, քանի որ տարածաշրջանում չկան կազմակերպված սանիտարական աղբավայրեր,</p> <ul style="list-style-type: none"> - մետաղական մասերն կառանձնացվեն և որպես մետաղի ջարդոն կհանձնվեն հատուկ մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով, - կառուցապատման փուլում կենցաղային աղբը կուտակվելու է պլաստմասե աղբահավաք տարողությունների մեջ, - կենցաղային աղբի հեռացումը կատարվելու է կանոնավոր՝ ըստ անհրաժեշտության՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով, - շինաղբի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկով ապահովված բեռնատարներով կամ բեռնատարները ծածկվելու են անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով, - բացառել աղբի կուտակումը շրիռապարակից դուրս՝ այլ բնակելի և հասարակական տարածքներում, - շինարարական աշխատանքների ավարտից հետո շինարարական նյութերի մնացորդները, վտանգավոր նյութերը հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են Կապալառուի կողմից: <p>Շահագործման փուլում կենցաղային աղբի կուտակման համար նախատեսվում է տեղադրել 9 հատ 1,5x1մ³ տարողության</p>	
--	--	--	--

		պլաստմասե աղբամաններ, ինչպես նաև տեսակավորման աղբամաններ:		
5	Պատմամշակութային և բնության հուշարձաններ.	Շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմնին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:	Կապալառու	Գ. Գրիգորյան
6	Կենսաբազմազանություն	- քանի տարածքի մոտակայքում հանդիպում է ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված «Բուխինգերա անօթային» կրիտիկական վիճակում գտնվող տեսակը, ուստի ելնելով ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի հուլիսի 31-ի «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման տվյալ տեսակին հանդիպելու պարագայում այդ տարածքը կնշահարվի, այդ հատվածում շինտեխնիկայի տեղաշարժը կարգելվի մինչև	Կապալառու	Կապալառու Լիազոր մարմին

		լիազոր մարմնի կողմից համապատասխան միջոցառումներ իրականացնելը:		
7	Աղմուկ և թրթռում	<p>Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին, - կառուցապատման տարածքում ձայնակլանիչ նյութերի և կոնստրուկցիաների կիրառում, - շինարարական աշխատանքներում ներգրավվելու են ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, - տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործել սարքին վիճակում, - պարբերաբար կստուգվեն և կկարգաբերվեն տրանսպորտային միջոցների շարժիչները, - բացառել շինարարության ընթացքում օգտագործվող մեքենաների կայանումը բնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ, - օգտագործվող շին տեխնիկան և մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով, - պահպանել աղմուկի, վիբրացիայի, արտանետվող գազերի թույլատրելի նորմերը: Շահագործման փուլում նախատեսվում է. - օդափոխման և օդի լավորակման 	Կապալառու	Գ. Գրիգորյան

		<p>համակարգերում աղմուկի խլացուցիչների կիրառում,</p> <p>- օգտագործվող ձայնամեկուսիչ, ձայնակլանիչ, թրթռամարիչ նյութերի օգտագործում՝ համապատասխան մարմինների եզրակացությունների հիման վրա:</p>		
8	Արտակարգ իրավիճակներ	<p>Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է.</p> <p>- կառույցների հիմքերի փոսորակները բացելուց և նախագծային նիշերին հասնելուց հետո՝ պարտադիր է ինժեներ-երկրաբանի կողմից հիմնափոսի զննումը և համապատասխան մասնագետի (երկրաբան) կողմից կազմված եզրակացությունը,</p> <p>- կտեղադրվեն տեղեկատվական ցուցանակներ, որը ներառելու է շենքի նախագծողի, կապալառուի և այլ պատասխանատու անձանց (հեռախոսահամար), շինթույլտվության, շինարարության սկզբի և ավարտի վերաբերյալ տեղեկատվություն,</p> <p>- շինհրապարակը կկազմակերպվի հակահրդեհային անվտանգության պաշտպանության կանոններին համապատասխան, տեղադրվելու է ջրի բաք՝ հրդեհամարման նպատակով,</p> <p>- շինհրապարակն ապահովված է լինելու հակահրդեհային կրակմարիչներով, տեսահսկման և ազդանշանային</p>	Կապալառու	Գ. Գրիգորյան

		<p>համակարգերով, հակահրդեհային միջոցառումների վահանակներով,</p> <p>- շինհրապարակն, ինչպես նաև բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունները ժամանակ առ ժամանակ կմաքրվեն հրդեհավտանգ և պայթյունավտանգ թափոններից և աղբից,</p> <p>- հակահրդեհային միջտարածությունները չօգտագործել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,</p> <p>- բաց են լինելու նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները, տեղադրվելու են դրանց մոտեցման համապատասխան ցուցանակներ,</p> <p>- տեղադրվելու են ձայնային ազդանշաններ, հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ՝ վթարների կանխարգելման համար,</p> <p>- հեղուկ և վտանգավոր նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,</p> <p>- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցվելու են:</p>	
--	--	--	--

		<p>Շահագործման փուլ. Շահագործման փուլում արտակարգ իրավիճակների դեպքում նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - բնակելի համալիրի ստորգետնյա հարկերը ծառայելու են բնակչության համար թաքստոց արտակարգ իրավիճակներում՝ բնակչության պաշտպանական նպատակներով, - ստորգետնյա հատվածում՝ թաքստոցի համար նախատեսվում է վթարային ելք, - շահագործման փուլում բազմաբնակարան բնակելի համալիրն ապահովված է լինելու հակահրդեհային կրակմարիչներով, օդափոխության, ավտոմատ հրշեջ ազդանշանային՝ հակաձխային, արտածման համակարգերով, էվակուացիոն ուղիներով և ելքերով, - պահպանվելու են հակահրդեհային մուտքերը՝ հրշեջ մեքենաների շրջադարձի համար, - աստիճանավանդակի, վերելակի դռները լինելու են հակահրդեհային՝ ինքնափակվող: 		
9	<p>Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն, մարդու առողջություն</p>	<p>Շինարարության փուլում աշխատողների աշխատանքի կազմակերպման և աշխատանքի անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, շինհրապարակում՝ անվտանգության տեխնիկայի կանոնները անցումները, վտանգավոր գոնանները 	Կապալառու	Գ. Գրիգորյան

		<p>կցանկապատվեն, ՀՀ Առողջապահության նախարարի 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2. .8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,</p> <ul style="list-style-type: none"> - ապահովվել աշխատողների անվտանգությունը բարձրության վրա, - մինչև աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդներն անցնելու են հրահանգավորում՝ ըստ աշխատանքի անվտանգության կանոնների, - բանվորական խմբերը լինելու են բազմապրոֆիլ և մասնագիտացված, անցկացվելու են ուսուցման և հրահանգավորման դասընթացներ, - ստուգվելու են առասանիչ բանվորների գիտելիքները, տեղադրվելու են առասանման եղանակների և ձևերի նկարագրությամբ ցուցանակներ, - աշխատողների համար ապահովվել 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, անհատական և պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ, կոշիկ և այլն), էլեկտրական սարքավորումների հետ աշխատողները՝ դիէլեկտրիկ գորգով և ձեռնոցներով, - ապահովվել աշխատողների համար 	
--	--	---	--

	<p>սանիտարական և հանգստի պայմաններով (հանգստի սենյակ, հանդերձարան, լվացարան և այլն)՝ անհրաժեշտ կահավորանքով (լվացարան, աթոռ, սեղան, ջեռուցիչ և այլն),</p> <ul style="list-style-type: none"> - շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրել աշխատանքային պայմանների, հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ՝ տեղեկատվական և հակահրդեհային վահանակներ, վտանգն ազդարարող տեսողական պաստառներ, ճանապարհային երթևեկության, ինչպես նաև կողմնակի մարդկանց մուտքն արգելող նշաններ, - վերահսկել աշխատող սարքավորումների պիտանելիությունը, բացառել գործնեության վայրում խոտանված բեռնիչ սարքերի կուտակումները, - վերահսկել մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառել մեքենաների կուտակումները, - նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը՝ հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով, - բացառել ավտոամբարձիչի սլաքի աշխատանքը՝ սահմանազատված սահմանից դուրս, - բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ օգտագործվող բեռնամբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը պետք է համապատասխանեն 	
--	---	--

		<p>պետական ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին, երթևեկության արագությունը շինհրապարակում չպետք է գերազանցի 5կմ/ժ,</p> <ul style="list-style-type: none"> - տեղադրել լրացուցիչ լուսավորման սարքեր՝ շինհրապարակի լուսավորության համար, - շինհրապարակի լուսավորությունը ապահովել հավասարաչափ՝ լուսավորության 2 լյուքսից ոչ պակաս, - շենքի ներսում եռակցման և ներկման աշխատանքները կատարել օդափոխության պայմաններում, կատարել հոսանքատար մասերի մեկուսացում, - վարել տեխնիկական հսկողության ամփոփիչ և անհատական մատյաններ՝ տեխնիկական վերահսկողության իրականացման համար, - շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացնել 2020թ. հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N87 արձանագրության պահանջներին համապատասխան, աշխատողներն ունենալու են համապատասխան բանվորական արտահագուստ: <p>Շահագործման փուլ.</p> <p>Շահագործման փուլում բնակելի համալիրն ապահովված է լինելու հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժվելու համար անհրաժեշտ</p>	
--	--	--	--

		<p>պայմաններով՝ ՀՀՇՆ 1/-11.07.01-2006 շինարարական նորմերին համապատասխան:</p> <p>Մասնավորապես նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - բնակելի համալիրն ապահովված է լինելու հաշմանդամների պահանջներին հարմարեցվող ունիվերսալ, շարժական տարրերով, - վերգետնյա և ստորգետնյա անցումներ, թեքահարթակներ, - տարածքի մուտքը կահավորվել տարածքի վերաբերյալ հաշմանդամների համար մատչելի տեղեկատվության տարրերով: 		
10	Էներգաարդյունավետություն և էներգախնայողություն	<p>Բնակելի համալիրը շահագործման հանձնելուց կամ շուկա հանելուց առաջ պետք է ներկայացվեն «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան՝</p> <p>էներգաարդյունավետության պահանջներին համապատասխանության գնահատում:</p> <p>Շենքերի ջեռուցման, օդափոխման համակարգերի, ինչպես նաև շենքերը պատող կոնստրուկցիաների էներգետիկ փորձաքննությունը (աուդիտ) իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 31-ի N 1399-Ն որոշմամբ հաստատված պահանջներին համապատասխան:</p>	Կապալառու	Գ. Գրիգորյան

		<p>Շահագործման փուլում բնակելի համալիրը կառուցվելու է.</p> <ul style="list-style-type: none"> • շենքի արտաքին պատերը պատվելու են նորմավորված, հրակայուն և անջրաթափանց, գոլորշակայուն և գոլորշամեկուսիչ նյութերով, • կատարվելու է դեկորատիվ սալիկապատում՝ ջերմամեկուսիչ շերտի ընտրությամբ, ելնելով բնակավայրի ջերմային ֆոնի առանձնահատկություններից, • շենքերի միջտարածքային և բնակիչների կողմից օգտագործվող ընդհանուր մուտքերն ու ելքերը լինելու են ջերմամեկուսիչ և հերմետիկ փակվող դռներով և պատուհաններով, • լուսավորությունը կատարվելու է լեդ տեսակի լամպերով: <p>Բնակելի համալիրն ապահովված է լինելու.</p> <ul style="list-style-type: none"> - արտաքին լուսավորության, օդափոխության, ծխահեռացման համակարգերով, տեսախցիկներով, հակահրդեհային միջոցներով՝ կրակմարիչներով, - էլեկտրամատակարարման և ծխահեռացման փականների ավտոմատ անջատիչներով, վթարային ելքի ցուցանիշներով, օդափոխության, հակածխային օդափոխության արտածման համակարգերով, - ջերմամեկուսիչ, օդափոխիչ, էներգախնայող 	
--	--	---	--

		բազմաթիվ այլ սարքավորումներով:		
11	Սոցիալական	<p>Շինարարության փուլում հնարավոր սոցիալական խնդիրներից խուսափելու համար նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - շինարարական աշխատանքները կատարել սահմանված ժամերին՝ ցերեկը, - բացառել շինհրապարակից դուրս աղբի և մեքենաների կուտակումները, - գործելու է բողոքների արձագանքման ընթացակարգը: <p>Շահագործման փուլում բնակելի համալիրի կառուցումը նպաստելու է.</p> <ul style="list-style-type: none"> - բնակչության բնակարանով ապահովվածությանը, բնակարանային կարիքների բավարարմանը: 	Կապալառու	Գ. Գրիգորյան
12	Լանդշաֆտ	<p>Նախատեսվող բնակելի համալիրը ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն է:</p> <ul style="list-style-type: none"> - Բացառել նախատեսվող տարածքից դուրս կառուցապատման այլ աշխատանքները: <p>Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարել տարածքի բարեկարգում.</p> <ul style="list-style-type: none"> - շինարարական սարքավորումներն ապամոնտաժվելու են, - շինարարական հրապարակը մաքրվելու է թափոններից, վերականգնվելու է տարածքը, - կատարվելու են գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման և կանաչապատման 	Կապալառու	Գ. Գրիգորյան

		աշխատանքներ:		
13	Բարեկարգում և կանաչապատում	<p>Նախատեսվում է գործունեության ենթակա ազատ տարածքում և հարակից տարածքներում կատարել բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ՝ համաձայն Երևանի համայնքապետարանի հետ համաձայնեցված կանաչապատման նախագծի: Նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - կառուցապատումից ազատ տարածքի հարթեցում և բարեկարգում, ներբակային ճանապարհների կառուցում, - կանաչ զանգվածի ոռոգում՝ բուսականության աճը և կաշողականությունն ապահովելու նպատակով, - նորատունկ բուսականության, ծառերի չկաջելու դեպքում նոր ծառատեսակներով փոխարինում: <p>Կանաչապատ տարածքի ոռոգումը կատարվելու է գոյություն ունեցող ոռոգման ցանցից՝ պոլիպրոպիլենե խողովակներով՝ կաթիլային եղանակով:</p>	Կապալառու	Գ. Գրիգորյան

14. Մշտադիտարկման (մոնիթորինգի) միջոցառումներ

հհ	Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Մոնիթորինգի Վայրը	Իրականացման ձևը	Ժամանակամիջոց	Մոնիթորինգ Կատարող/ Վերահսկող
1	Շինարարության ընթացքում օդային ավազան, ջրային և հողային ռեսուրսների մեջ վտանգավոր նյութերի և կեղտաջրերի ներթափանցման բացառելուն ուղղված	<p>- Փոշու և այլ օդի աղտոտիչների (CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական չափաքանակների պարբերական վերահսկում:</p> <p>- Ջրային և հողային ռեսուրսների որակի ուսումնասիրությունների կատարում,</p> <p>- կեղտաջրերի հեռացման՝ բիոզուգարանի, սեպտիկ հորի տեղադրում:</p>	Գործունեության ենթակա տարածքում	<p>Ստուգայցեր, գործիքային ստուգումներ</p> <p>Տեսողական դիտարկումներ, մասնագետի կողմից ստուգայցեր</p>	<p>Շինարարության փուլում՝ ամենօրյա: Փոշենստեցումը տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրը 2-3 անգամ</p> <p>Պարբերաբար՝ ոչ ուշ 3 ամիսը մեկ հաճախականությամբ</p>	Կապալառու Գ. Գրիգորյան
2	Արտակարգ իրավիճակներ և աշխատանքի անվտանգություն	<p>- Աշխատողների իրազեկում՝ աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների ընթացակարգի մասին,</p> <p>- շինարարության կանոնների և անձնական պաշտպանության</p>	Գործունեության իրականացման ենթակա տարածքում	<p>Իրազեկումներ և ստուգումներ</p> <p>Ստուգայցեր</p>	<p>Պարբերաբար</p> <p>ամենօրյա ռեժիմով,</p>	<p>Կապալառու Գ. Գրիգորյան</p> <p>Համապատասխան գերատեսչությ</p>

	<p>Շինարարական նորմերի պահպանում</p> <p>Աղմուկ, թրթռում</p>	<p>նորմերի խստիվ պահպանություն, -բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության տեխնիկական վերահսկողություն՝ -հակահրդեհային պահանջների ապահովում՝ ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգության» նորմերին համապատասխան:</p> <p>Ամբողջ շինարարության ընթացքում վերահսկվելու են շինարարության որակի չափանիշները՝ Աղմուկի և թրթռումների մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումներ:</p>	<p>Շինհրապարակ</p> <p>Գործունեության իրականացման ենթակա տարածքում</p>	<p>Ստուգայցեր</p> <p>Ստուգայցեր</p>	<p>Հաաճախակի</p> <p>Ոչ պակաս, քան երեք ամիսը մեկ անգամ</p>	<p>ունենրի տեսչական մարմիններ</p> <p>Տեխնիկական վերահսկողություն իրականացնող մարմին Գ. Գրիգորյան</p>
3	Նյութեր	<p>Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից:</p>	<p>Լիցենզավորված կազմակերպությունների պահեստներ</p>	<p>Մատակարարման ընթացքում</p>	<p>Շինարարության փուլում՝ պայմանագրերի առկայություն</p>	<p>Կապալառու Գ. Գրիգորյան</p>

4	Թափոն	Թափոնների կանոնավոր տեղափոխում:	Գործունեության ենթակա տարածքից	համապատասխան պայմանագրերի հիման վրա տեղափոխում	Շինարարության ընթացքում	Կապալառու Գ. Գրիգորյան
5	Շինտեխնիկա և տրանսպորտային միջոցներ	<ul style="list-style-type: none"> - Շին տեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում, - ամբարձիչի ժամանակի և բեռնունակության օգտագործում, - շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների վառելիքի լիցքավորման և յուղման իրականացում՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում: 	Շինհրապարակ շինհրապարակից դուրս՝	Ստուգայցեր Դիտողական ստուգումներ, Գործընթացի ստուգում՝ մեքենաների շահագործման ընթացքում	Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում Պարբերաբար Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում	Կապալառու Գ. Գրիգորյան
6	Կանաչապատում և բարեկարգում	Վերականգնել և բարեկարգել շրջակա տարածքը, - տարածքի կանաչապատման աշխատանքների և կանաչապատման ծրագրի համապատասխանության ուսումնասիրություն, - կանաչ զանգվածի վիճակի՝	Գործունեության տարածք	Դիտողական ուսումնասիրություն	Շինարարական աշխատանքների ավարտից հետո	Կապալառու Գ. Գրիգորյան Համապատասխան գերատեսչությունների տեսչական

		կաշտղականության ուսումնասիրություն և ծառերի աճն ապահովվելու նպատակով մշտադիտարկում:				մարմիններ
7	Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում բողոքների արձագանքում	Բողոքների, դիմումների առկայություն	Գործունեության վայր	Դիմումների, արձագանքում	Շինարարության ընթացքում	Կապալառու Գ. Գրիգորյան

15. Հանրային քննարկումներ

Համաձայն ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի «Հայաստանի հանրապետության կառավարության 2014թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 2343-Ն որոշմամբ սահմանված պահանջների՝ Երևանի քաղաքապետարանի կողմից կատարվել է հանրային ծանուցում, որի վերաբերյալ գրությամբ տեղեկացրել է նախաձեռնողին: Գրությունը ներկայացված է սույն հաշվետվության Հավելված 6-ում: 2024թ-ի սեպտեմբերի 2-ին կայացել են 1-ին հանրային քննարկումները Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի վարչական ղեկավարի նստավայրում՝ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերին համապատասխան: Քննարկմանը մասնակցել են Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչը, գործունեություն իրականացնող ընկերության տնօրենը, համայնքի բնակիչներ: Հանրային քննարկման ընթացքում բարձրացված հարցադրումները և առաջարկությունները ներառվել են քննարկման արձանագրությունում և հաշվի են առնվել հաշվետվության մշակման գործընթացում: Հանրային քննարկման վերաբերյալ նյութերը ներկայացված են սույն հաշվետվության Հավելված 7-ում: Գործունեության վերաբերյալ առկա է Երևանի քաղաքապետարանի գրությունը ավագանու որոշման չկայացման վերաբերյալ, որը ներկայացված է սույն հաշվետվության Հավելվածներ 6-ում:

16. Գրականություն

1. СП.485.13130.2021:
2. «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ
3. ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 սանիտարական նորմեր:
4. Արտակարգ իրավիճակների նախարարի 2021թ. մարտի 31-ի 372-Ն հրամանով հաստատված ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի, սեյսմիկ գոտևորման քարտեզների և Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04_ Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր»:
5. ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկունության շինարարության նախագծման նորմեր»:
6. ՀՀՇՆ II - 7.01-96 «Շինարարական կլիմայաբանություն»:
7. ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգության» նորմերին ՇՆԵՎԿ III-IV.2008:
8. ՀՀՇՆ I-2.03-03 «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ քաղաքաշինության նախարարի 2003թ հունիսի 5-ի. 38-Ն հրաման:
9. Քաղաքաշինության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ:
10. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն Քաղաքաշինության նախարարի հրաման (8 ապրիլի 2014):
11. ՀՀ Առողջապահության նախարարի 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրաման:
12. ՇՆուԿ 3.01.01-85 (Շինարարության արտադրության կազմակերպում),
13. Երևանի քաղաքի զարգացման, 2019-2023թթ. հնգամյա ծրագրեր:
14. ՀՀ վիճակագրության կոմիտե (<https://armstat.am>)

17. Հավելվածներ

Հավելված 1. Տարածքի սեփականության իրավունքի վկայականը

	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԿԱՅԱԿԱՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏԱՄԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ	 Կադաստրի կոմիտե
<p>Սույն վկայականով հաստատվում է 15 դեկտեմբերի 2022 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.</p>		
1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ) ԳԱՐԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ ՌՈՒԲԵՐՏԻ		
2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ Երևան, Նոր-Նորք Մոլդովական փողոց 27/6		
3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ Անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր՝ 25/11/2022թ. գր/մ 18318		
4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ Կադաստրային ծածկագիրը՝ 01-008-0003-0419 Մակերեսի չափը (հա)՝ 0.34859 Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ		
		
ՎԿԱՅԱԿԱՆ N 15122022-01-0311, գաղտնաբառ՝ MZBWIX2Z7144		
Փաստաթղթի իսկությունը և փախեցվածությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով		
Էջ 1/2		

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
1	01-008-0003-0419-001	Կրպակ	12 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ԳՐՀԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 15122022-01-0311, գաղտնաբառ՝ MZBWIX2Z7I44

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Էջ 2/2



10. Հողամասում գտնվող շենքերի և շինությունների քանդման կամ տեղափոխման պայմանները և աշխատանքների հերթականությունը

11. Ստորգետնյա, կիսանկողի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ

12.1. (*) Զրամատակարարում, կոյուղի, տաք ջրամատակարարում

12.2. (*) Էլեկտրամատակարարում

12.3. (*) Գազամատակարարում

12.4. (*) Էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադրվողը

12.5. թույլ հոսանքներ

12.6. աղբահանություն

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում

14. Բարեկարգում

15. Շինարարական նյութեր

16. Պաշտպանական կառույցներ

17. Հակահրդեհային պահանջներ

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ

19. Շրջակա միջավայրի պահպանում

20. Շինարարության կազմակերպում

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ

23. Միջանկյալ համաձայնեցում

24. Հասարակական քննարկումներ

25. Համաձայնեցումներ

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում

27. Այլ պայմաններ

Անշարժ գույքի նկարմամբ իրավունքների պեղական գրանցման հ.1512022-01-0311 վկայականով ամրագրված 12-րդ մակերեսով կրպակ:

Համաձայն պատվիրատուի առաջադրանքի, միաժամանակ՝ ապահովելով բնակարանների թվաքանակի առնվազն 70%-ից 80%-ին համապատասխան ավտոկայանատեղեր:

Հնարավոր է առանձնացված մուրքերով հասարակական և օժանդակ տարածքներ:

Նախագծի ինժեներական մասը մշակել իրավասու կազմակերպությունների կողմից տրված տեխնիկական պայմաններին համաձայն:

Կցվում է (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

Կցվում է (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

Կցվում է (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

----- (համաձայն N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված եզակետային տվյալների)

Կազմակերպել ջրահեռացում:

(տեխնիկական նախագիծ, ցանցային, ինժեներական պաշտպանության միջոցառումներ)

Մշակել տարածքի բարեկարգման, կանաչապատման և ուղղաձիգ հարակազմման նախագիծ, հնարավոր է նախադրված ճարտարապետական փորձեր:

(կառավարության պատվերով պատրաստվող, կանաչապատմում, ճարտարապետական փորձեր, ցանկապատում, գոմարդ և այլն)

Երկաթբետոն, սրբարաշ և կոպրարաշ քար, փայտ, մեղաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր:

(շինարարական նյութերի օգտագործման վերաբերյալ առաջադրվածները տանելների, հակասողի լուծումների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ)

Նախադրվել արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության համապատասխան միջոցառումներ:

(արտակարգ իրավիճակներում մարդկանց, օբյեկտների պաշտպանության միջոցառումներ)

Ապահովել հակահրդեհային նորմարիվ պահանջներ, ապահովել հրշեջ հիդրանտների առկայությունը:

(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումներ)

Նախադրվել հաշմանդամ և ՔԱՀ տեղադրվելու համար անհրաժեշտ պայմաններ՝ ՀՀ Հ.11.07.01-2006 չինարարական նորմին համապատասխան:

